



Գ. ՋՄԻՐ

ԾԱՐՏ 1901

ԹԻՒ 3

ԲԱՐԻՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանուն բառեր են նախնական սրբագան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախօնական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : ԵՅէ հոգին չՅարգմանէր , չուսուարէր ինչ որ միւսը կ'ըսէ , այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

# ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Ինչպէս որ ծանուցած էինք անցեալ թուով, «Անահիտ»ը այսուհետև պիտի հրատարակուի կանոնաւորապէս: Կրնայ ըլլալ որ, մեր բազմաթիւ զբաղմանց պատճառով, թիւերը ԵՐԲԵՄՆ քիչ մը ժամանակէն ուշ երևան (ինչպէս այս անգամ պատահեցաւ), բայց տարեկան բաժնեգինը վճարողը ԿԱՐՈՂ Է ՎՍՏԱՀ ԸԼԼԱԼ ԹԷ ԻՐ 12 ԹԻՐ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ:

Կը խնդրենք ուրեմն մեր բաժանորդներէն որ իրենց բաժնեգինը փութան վճարել: Անոնք որ այս մարտի թիւը ստանալէն յետոյ պիտի չվճարեն իրենց բաժնեգինը, այլ եւս «Անահիտ»ը պիտի չընդունին:

Կը խնդրենք մեր զօրծակալներէն ալ, որ քիչ մը աւելի փութկոտութեամբ եւ կանոնաւորութեամբ հաճին կատարել իրենց պաշտօնը:

## ԲԱՑՈՒԱԾ Է

ԱՆԱՀՎՏԻ ԵՐՈՐԴ ՏԱՐԵՐՁԱՆԻՆ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բաժանորդագիւր կանխիկ պէտք է վճարել

# ԱՆԱՏԻՏ

ՀԱՆՆԳԵՍ ԱՄՍԵԱՅ

ԱՉԳԱՅԻՆ , ԳՐԱԿԱՆ , ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1901

ԹԻԻ 3

## ՀԱՅԵՐԸ ԲԱՐԻՉԻ ՄԷՂ

Այն բոլոր հայ գաղութներէն , որոնք այս դարուս մէջ կազմուած են Եւրոպա եւ Ամերիկա ամենէն շահեկանը՝ եւ ամենէն հակասականը՝ Բարիզի հայ գաղութն է ապահովուպէս :

Այդ գաղութը , շատ կարեւոր ու արդիւնաւոր է եղած՝ անվիճելի կերպով : Ֆրանսան ըլլալով աշխարհի այն երկիրը որուն հետ հայ ցեղը ամենէն ներքին ու սրտագին կապերն ունի , Ֆրանսայի մայրաքաղաքը արտասահմանի այն կեդրոնը եղած է , — Մոսկուայի հետ , — ուր Հայերը ամենէն աւելի իրենց արժանիքը փայլեցուցած եւ ազգային կեանքի արտայայտութիւններ բազմապատկած են : Բարիզի մէջ է որ Շահան Ջրպետ հաստատած է հայերէն լեզուի առաջին եւրոպական դասաւանդութիւնը ու հիմնած ֆրանսական հայագիտութիւնը որ , բարիզաբնակ կամ Բարիզի հետ մշտական հաղորդակցութեան մէջ գտնուող Միլիթարեաններու աջակցութեամբ , արտադրած է Սէն-Մարթէնները , Լը Վալեան ար Ֆլորիւլաները , Տիւրորիէնները , Լանկուաները , Պրոսէները , Բարիէններն ու Մէյքէները : Բարիզի հայ գաղութը ունեցած է երկու հայ վարժարան , Սամուէլ-Մուրադ եւ Հայկազեանը , երկու հայերէն թերթ , «Մասեաց Աղաւնին» ու «Արեւելք»ը , եւ Արամեան տպարանը : Բարիզի մէջ

է որ գործած են մեր ամենէն կարեւոր անձնաւորութիւններէն մէկ քանին , Գարրիէլ Այվազովսկի , Խորէն Նարպէյ , Ղեւոնդ Ալիշան , Կարապետ վարդապետ Շահնազարեան , Նուպար փաշա , Գրիգոր Օսեան : Բարիզի մէջ է որ ռուսւմ առած են Հայոց — մասնաւորապէս Բրախայոց — այս վերջին կէս դարուն ամենէն նշանաւոր անձերը մեծ մասամբ : Այս նորադոյն շրջանին մէջ , Բարիզի Հայերն են — Իսքէնտէր ու Բարիզի Հայոց Հայրենասիրական Ընկերակցութեան միւս անդամները , — որ Անգլիոյ Հայոց հետ , ամենէն աւելի ջանք թափած են 61րդ յօդուածին գործադրութիւնը փութացնելու նպատակով : Չարդերու միջոցին , Բարիզի հայ ուսանողութիւնը ո եւ է քաղաքի ուսանողութեան աւելի գործունէութիւն ցոյց տուած է Ֆրանսայի մէջ հայասիրական շարժում մը արժարձելու համար , ու Բարիզի Հայոց Բարեկրթական Ընկերութիւնը՝ 96-98ին՝ հայ փախստականներուն օգնելու համար մեծ եռանդով աշխատած է : Բարիզի հայ ուսանողութիւնը կազմած է իր ակումբը , գրադարանը , գրական հաւաքումները , որոնք մէկ քանի փայլուն շրջաններ ունեցած են : Ու Բարիզի մէջ է որ երեւան եկած են արդի Հայութեան ամենէն զեղեցիկ տաղանդներէն մէկ քանին , — Չաքարեան , Տիգրան Երկաթ , Մանուէլեան , Շահին : Բարիզի հայ գաղութին կէս դարու պատմութիւնը պատուաբեր է ուրեմն իրեն համար , եւ հայ ժողովրդին համար . անոր կրնան բաղդատուել միայն Մոսկուայի հայ գաղութը , եւ հիմա՝ Ամերիկայի գաղութները (չեմ հաշուեր վենետիկի եւ վիեննայի վանքերը որոնք բովանդակ Հայու-

X

թեան վերաբերող կեդրոններ են ու գաղութի մը արդիւնքը չեն կրնար նկատուիլ) :

Այս բոլորը սակայն մետալլիկ գեղեցիկ երեսը կը կազմեն : Մետալլը իր մութ երեսն ալ ունի : Այդ մութ երեսը , անհնականութեան , անբնականութեան պահածը : ամուր ու հիմնական կազմակերպութեան բացակայութիւնը , անլազան ճիգերու միջեւ կապակցութեան չգոյութիւնն է :

Բոլոր այն գործերը զոր յիշատակեցի , մէկ քանի անձերու անհատական ջանքին արդիւնքը եղած են . գրեթէ միշտ , անձին հեռացումովը , գործը դադրած է . երբեմն խմբակներ կազմուած են , սրտնց ոմանք բաւական տեւականութիւն ցոյց տուած են , բայց սրտնց գրեթէ ամենքն ալ ընդհատ ու կղզիացած գոյութիւն մը ունեցած են , անապատի մէջ ցանցաորէն բուսած ու իրենք իրենցմով ապրող ովախաներու պէս : Այդ բոլոր գործերուն շուրջը , Բարիզի Հայերուն մեծամասնութիւնը անտարբեր , անգործ , տարադնած տարր մը կազմած է , երբեմն կատարուած ճիգին հատուածական ու վազանցուկ հետաքրքրութիւն մը ցոյց տալով , յաճախ բացարձակապէս անփոյթ ու անհաղորդ : Կարգ մը Հայեր , կամ Հայերու խմբակներ , գործած են Բարիզի մէջ . բայց Բարիզի Հայութիւնը , իբրեւ կազմակերպուած գաղութ , հաւաքական գիտակից ու յարատեւ գործունէութիւն մը չէ ունեցած : Յորմէ հետէ Միսիթարեանները որոշած են Սամուէլ-Մուրատեան վարժարանը վերնտիկ փոխադրել , Բարիզի Հայութիւնը ո եւ է ջանք չէ բրած զպրոցի մը պակասը լեցնելու համար : Լանկլուային ու Տիւրրիէին մահէն ի վեր , Բարիզի Հայերը չեն ճգնած անոնց գործը շարունակող ուրիշ ձեռնարկներ յարուցանելու համար հարկաւոր աշխատութիւնը յանձն առնել . Հայրենասիրական Ընկերակցութիւնը , մտերմական խմբակ մը , շատ գնահատելի գործունէութիւն մը ունեցած է , բայց անկապ՝ Բարիզի Հայերուն ամբողջութեանը հետ , եւ անշարունակական ու համեստ՝ իր ծրագրին մեծութեանը բնագոյամբ : Ուսանողական ընկերութիւնը գեղեցիկ շրջան մը ունեցած է

Տր. Ռափայէլեանի օրով , յետոյ քայքայուած՝ անոր մեկնումովը , դարձեալ վերակենդանացած՝ Կ. Գոլսոյ կեդրոնականին մէկ քանի Բարիզ եկած աշակերտներուն ջանքովը , Չարգերուն շրջանին՝ շատ գովելի եռանդի մը ապացոյցները տուած , յետոյ երբեմնակի ու սարսամ

գոյութիւն մը ունեցած է , այսօր՝ գրեթէ տարիէ մը ի վեր՝ դարձեալ բացարձակ մեռելութեան մը մէջ ինկած : Բարեգործական ընկերութիւնը , որ Գէն ԳՑ կենդանի եւ գործուն մարմին մը եղած է , ԳՑէն ի վեր անկենդանութեան փուլի մը մէջ մնած էր : Եւ այն պահուն ուր այս անդերը կը գրեմ , կը փորձէ վերականգնել եփեկոյթ մը սարքելով :

Այս հատուածականութիւնն ու անյարատեւութիւնը պատճառ է եղած որ Բարիզի Հայութիւնը , իր ծոցին մէջ արտադրելով հանդերձ շատ կարեւոր աշխատութիւններ , չէ տուած այն ամբողջ արդիւնքը զոր կրնար եւ պարտէր տալ , բարդատմամբ այն առաւելաշնորհալու տիեզերական գիրքին զոր ունէր : Ամօթալից , ապշեցուցիչ բան մըն է նկատել որ այս բազմամեայ գաղութը դեռ չունի մշտական հաւաքավայր մը , քլիւպ մը , ուր Բարիզի բոլոր Հայերը կարենան իրարու հանդիպել , իրար ճանչնալ՝ եւ ատով հաւաքաբար գործելու բերում ու միջոց գտնել , եւ չունի ո եւ է ընկերութիւն մը որուն ամբողջ գաղութը մասնակից ըլլայ եւ որ Ֆրանսական ժողովրդին հանդէպ Բարիզի Հայութեան պաշտօնական ներկայացուցիչն հանդիսանայ : Այս էական սատարներուն չգոյութիւնը իրեն արդիւնք ունեցած է շատ մը կարեւոր առիթներու մէջ Բարիզի Հայութեան անշարժ ու անգոյ գիրք մը պահելը : Ո՞վ պիտի չխոստովանի Բարիզի Հայերէն , թէ այս վերջին հինգ վեց տարուան մէջ , տրուած ըլլալով այն արտակարգ կացութիւնը որուն մէջ գտնուեցաւ հայ ժողովուրդը , Բարիզի Հայերը շատ աւելի գործ կրնային տեսնել քան ինչ որ ըրին եթէ կազմակերպուած ըլլային եւ տեւական , իրական կեանք ու ընդարձակ եւ մշտական միջոցներ ունեցող մարմնով մը ներկայացուած ըլլային : Տարի մը առաջ , Հ. Շարմըթան կը գանդատէր թէ «պազար տը Շարիթէ»ին մէջ հայ սովետականներուն համար վաճառքի անկիւն մը հաստատելու փափաքով առաջարկած էր որ մէկ քանի հայ տիկիներ յանձն առնէին վաճառողի դերն ստանձնել , ու ո՞չ մէկ բարիզաբնակ Հայուն հի չէր գտնուած՝ ամենաբարձր դասու Յրանստէիներուն հետ այդ գթութեան գործը կատարել հաւանող . . . այդ ցաւալի դասալքութիւնը անշուշտ տեղի պիտի չունենար եթէ Բարիզի Հայութիւնը ներկայացնող կազմակերպուած մարմին մը ըլլար , որ շատ գիւրաւ պիտի գտնէր այդ դերին համար հարկաւոր

եղած անձերը եւ մեզ հիւրընկալող աղբիւն առջեւ այս այլանդակ պղտիկութիւնը պիտի խնայէր մեզի : Այսպիսի մանրամասնութիւններ տասնհակներով կարելի է հաշուել : Վէճ իսկ չի վերցընել սա իրողութիւնը թէ շատ կենսական գործեր կան որ չեն կատարուած Բարիքի եւ ամբողջ Ֆրանսայի մէջ , տեւական ու հաստատուն միջոցներ ունեցող եւ ամբողջ Բարիքի Հայութեան վրայ կրթնած մարմնոյ մը չգոյութեան պատճառով : Իրենց անձնական ուժերուն միայն վստահող անձերը համեստ արգիւնքներէ անդին չէին կրնար անցնիլ , եւ հրաշքի պէս բաներ իրագործել պէտք եղած է երբեմն դժուարին ձեռնարկներ ոչինչով ի գլուխ հանել կրցած ըլլալու համար : Դեռ անթիւ պիտու մնել կան որ չեն եղած , հրատարակութիւններ որ չեն կատարուած , բանախօսութիւններ որ չեն տեղի ունեցած , — որովհետեւ ամէն բան թողուած է անհատներու , որոնց ամբողջ եռանդը չի կրնար միշտ նիւթական միջոցներու պակասին տեղը լեցնել , եւ որովհետեւ դեռ չէ կազմուած այն կուսակցութիւնը որ Բարիքի Հայերուն ամեն տեսակ ուժերը իր մէջ պիտի խտացնէ , համայնական գործին համար բերելով այլազան , յարատեւ ու ամուր միջոցներու խուրձը , առանց որուն կղզիներ միայն կարելի է ձեւացնել ու նրբի ք ցամաքերի իր մը :

Ա՛լ ատեն է սակայն որ այս պակասը զգայ Բարիքի Հայութիւնը , հիմա մանաւանդ որ ջարդերէն ի վեր հայ ժողովրդին առջեւ բացուած կացութեան հետեւանքով , իր պարտքերը բազմապատկուած են , եւ միանգամայն իր ուժերը ճոխացած են , թրքահայ ու սուսահայ բազմութիւ ու կարեւոր խմբակներու յաւելումովը : Ա՛լ ատեն է որ Բարիքի մէջ ամէն կողմէ եկած հայ կորովներուն միջեւ հաստատուի կապը , խորին հիմնական ու անքակտելի , որ զանոնք պիտի ներգաշնակէ իրարու հետ , առով զանոնք պիտի բազմապատկէ եւ որ զանոնք արգաւանդ , ձկուն ու կենդանի միութեան մը պիտի վերածէ :

Բարեգործական Ընկերութեան երեկոյթը որ այս օրերս տեղի ունեցաւ , շատ դեղեցիկ փորձ մըն էր այս ուղղութեամբ , եւ շատ թելազրական : Բարիքաբնակ Հայերու խումբ մը հաւաքուեցաւ մարդասիրական ձեռնարկի մը շուրջը , եւ յառաջ եկաւ երեկոյթ մը , որուն գեղարուեստական փայլը եւ եղբայրական ոգեւորութիւնը անմոռանալի յիշա-

տակ մը պիտի թողուն Բարիքի հայ դասութիւն մէջ : Այդ երեկոյթէն դաս մը պէտք է որ քաղէ Բարիքի Հայութիւնը : Պէտք է ան համոզուի որ այսպիսի յաջողութիւն մը զինքը կը պարտաւորէ այգօրինակ ձեռնարկները յարատեւական կազմակերպութեան մը մէջ ամրացնել այսուհետեւ : Աններելի պիտի ըլլայ որ ասկից յետոյ Բարեգործական Ընկերութիւնը խաւարումի շրջաններ ունենայ նորէն . Բարիքի բոլոր Հայերը պէտք է նախանձախնդիր ըլլան որ իրենց այդ էական հաստատութիւնը կանոնաւոր ու անընդհատական կեանք մը ունենայ այլեւս : Ամէն տարի , այդ երեկոյթը պէտք է որ կրկնուի , — ինչ որ արդէն Փրանսացի եւ հայ հասարակութիւններուն միջեւ բարեկամական շփումի արգաւանդ առիթ մը պիտի ընծայէ միշտ : Եւ երեկոյթը ծաղիկն է միայն . պէտք է որ տունկը ամրացնենք հողին մէջ , ապահովենք անոր կեանքը , որպէսզի առանց բռնաղբօսիկ ու ծայրայեղ ճիգերու ան կարենայ քնականօրէն իր ծաղիկները բուսցընել շարունակաբար . պէտք է որ Բարիքի Հայերը չչատանան այս երեկոյթէն իրենց ունեցած եսական ու վաղանցուկ գոհունականութեան մէջ հանգչելով , այլ պէտք է որ ամէն ջանք ընեն հիմա՝ լրջօրէն ղօրացնելու Բարեգործական Ընկերութիւնը , որպէսզի ոչ միայն այդպիսի երեկոյթներու հաճոյքը իրենց ընծայէ այսուհետեւ պարբերաբար , — ինչ որ «լիւքս»ն է գործին , — այլ որպէսզի բուն իսկ իր նպատակը կարենայ իրագործել լիակատար ու վայելուչ կերպով մը :

Մեր ժողովուրդը գերագոյն հալածանքի շրջանի մը մէջ է այսօր , իր փախտականները , գաղթականները , աղքատները բազմութիւ են առուել քան երբեք , ու Բարիքը կեդրոնական տեղ մը ըլլալով՝ անոնցմէ շատերն իրենց ցաւազին թափառումին մէջ ասկից անցնելու կը ստիպուին : Բարիքի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը պէտք է որ մեր ամենէն հզօր մարմիններէն մէկն ըլլայ , եւ վայելէ աջակցութիւնը ոչ միայն Բարիքի բոլոր Հայերուն , այլ մեր ամէն տեղի ազգակիցներուն , քանի որ ան նպատակ ունի օգնել ոչ թէ միայն բարեգործական հայ աղքատներուն այլ ամէն կողմէ հոս ինկած խեղճ Հայերու : Այդ ընկերութիւնը պէտք է որ իբրեւ հասոյթի միակ աղբիւր իր տարեկան երեկոյթը չունենայ , այլ կանոնաորապէս իրենց ամսականը կամ տարեկանը վճարող բազմութիւ անդամներ

հաշուէ այսուհետեւ, եւ ընդունի կարեւոր նուիրատուութիւններ . ինչի՞ պիտի օգնեն հայ հարուստները, — անոնք որ զուտ ազգասիրական ձեռնարկներուն օգնելէ ետ կը կենան անիմաստօրէն վախկոտ նկատումներով — եթէ բարեգործական ընկերութիւններուն ալ զլանան իրեց նպաստը : Պէտք է որ այդ ընկերութիւնը ուժ ունենայ, իրական, հիմնաւոր ուժ մը, որ այլ եւս զայն անկործանելի եւ մշտական դան մարմին մը կացուցանէ : Պէտք է որ այսպէս ըլլայ, որպէս զի այլ եւս վերջ տրուի այն անորոշ ու տգեղ կացութեան որով խեղճերը ստիպուած են հարիւր անգամ անհատներու դուռը ափ առնել պատառ մը հացի կամ ճանապարհածախսի մը համար : Չքաւորին համար ամօթ չէ, նոյն իսկ բնական ու ազնիւ իրաւունք մըն է, զիմել իր ազգին հաւաքական բարութիւնը ներկայացնող անանձնական մարմնոյ մը, բայց շատ դառն ու նուաստացուցիչէ ձեռք կարկանդ անհատի մը : Պէտք է որ Բարիզ ինկած հայ չքաւորը ստիպուած չըլլայ այս կամ այն անձին քմահաճ գրութեանը ապաստանիլ : Պէտք է որ ան զբտնէ ազգային ղթութեան տունը միշտ բաց, միջոցներով հարուստ, եւ միշտ պատրաստ իրեն հայթայթելու այն անհրաժեշտ նպաստը որ զինքը կարող պիտի կացուցանէ գժբազդութեանէն ընդհատուած իր կեանքը վերակուելու : Անհատական ողորմածութեան զիմելու սխտեմը ունի ուրիշ կարեւոր անպատեհութիւն մըն : ալ այն է որ այդ պարագային մէջ գրեթէ միշտ բաղդախնդիրները, սուտ-աղքատներն են որ կ'օգտուին . արժանապատուութիւն ունեցող աղքատը չի զիջանիր ձեռքը անհատի մը երկընցնել . եւ ողորմութիւն տուող անհատ մը ոչ միջոց ունի ոչ ժամանակ՝ քննութիւն կատարելու եւ սուտ աղքատը ճշմարիտէն դանադանելու . բարեգործական ընկերութիւն մը կարող է այդ քննութիւնը կատարել, եւ պէտք չունիմ բացատրելու թէ ո՞րքան կարեւոր է որ բաշխուած նպաստները իրական խեղճերուն, օգնութեան ճշմարտապէս արժանի աղքատներուն հասնին՝ փոխանակ խաբւեքաներու գրպանին մէջ կորսուելու . — ինչ որ պատահեցաւ այնքան յաճախ Բարիզի մէջ՝ այս վերջին չորս հինգ տարիներու միջոցին : Բարիզի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը Ֆրանսական կառավարութեանէն պաշտօնական արտօնութիւն ստացած է 96ին, եւ Բարիզի Թաղապետական Խորհուրդը ասարեկան 2000 Ֆրանքի

նուէր մը յատկացուցած է իրեն, շնորհիւ Պ. Յ. Իսքէնտէրի ջանքերուն : Այդ թուականէն ի վեր, ընկերութիւնը կազմալուծուած ըլլալով, իր յարարերութիւնները դադրած էին Ֆրանսական կառավարութեան հետ, եւ Թաղապետական Խորհուրդը նուէրը չչարունակեց շնորհել . սարակոյս չունիմ որ Ընկերութեան նորընտիր զիւանը պիտի փութայ հարկաւոր զիմումներն ընել՝ որպէս զի այդ ընկերութիւնը իր պաշտօնական զիրքը վերստանայ Բարիզի արտօնուած ու նպաստաւորուած ընկերութիւններու շարքին մէջ :

Մաղթելի է որ Բարեգործական Ընկերութեան այս վերակենդանացումը մղէր Բարիզի Հայ Ուսանողաց Միութիւնը իր մտեւութեանէն վերականգնելու : «Բաշխեան երկնոյթ»էն ի վեր, այդ Միութիւնը ու եւ է կեանքի նշան չէ տուած : Նոյն իսկ արարքներունցած է, որոնք անպատուաբեր են Բարիզի հայ երիտասարդութեան : Իմացայ որ ուսանողները ծախսեր են այն մէկ քանի խեղճուկ կարասիներն իսկ զոր ունէին իրենց հաւաքասրահին համար ու մինչեւ անգամ մնացորդներն այն մատենադարանին զոր նախորդ սերունդները կազմած ու իրենց թողած էին : Բարիզի այժմեան հայ ուսանողներուն մէջէն պիտի չգտնուի՞ն քանի մը ձեռներեցութիւն ու կորով ունեցող տղաք որ վերաշինեն կործանած տունը : Անհրաժեշտ է որ մեր ուսանողները Բարիզի մէջ ունենան իրենց սկուսքը, զիրենք երբեմն միացնող խըցիկը : Կը բաւէ որ ուզեն, եւ պիտի լրացնեն այդ պակասը :

Մաղթելի է վերջապէս որ Բարիզի Հայութիւնն ալ ունենայ զինքը ներկայացնող ընդարձակ, կանոնաւոր ու տեւական մարմին մը : Ա՛յնքան գործեր կան կատարուելիք, որոնք կը մնան ծրագրի ձեւի մէջ, այդպիսի մարմնոյ մը չզոյցութեան պատճառով : Մարմին մը որ իր մէջ խտացնէր Բարիզի Հայութեան ամէն կարգի ներկայացուցիչները, եւ իր ձեռքն առնէր Հայոց անցեալն ու ներկան եւ րոպային ճանչընելու պորձը, օգնէր մեր ուսանողներէն անոնց որ ամենէն աւելի արժանի են աջակցութեան հանրային տեսակէտով, նպաստէր Բարիզի մէջ հայկական դպրոցի մը եւ քլիւպի մը հիմնարկութեան դադափարին իրականացմանը, այդպիսի մարմին մը կենսական ծառայութիւն մը պիտի մատուցանէր մեր ժողովրդին է՛ն հիմնական շահերուն :

Ուրախ եմ ծանուցանելու որ այս բաղձանքը սահմանուած կը թուի մօտալուտ իրականա-

f

ցումի մը : Խուճը մը բարիճարնակ Հայեր , նը-  
մանօրինակ ցանկութիւններէ մղուած ,  
ջանալու վրայ են այս միջոցիս՝ կազմել  
այդպիսի մարմին մը :

Այս գաղափարին նուիրուած այդ ջանքերը,  
եւ Բարեգործական Ընկերութեան վերակեն-  
դանացումը , երկու նշանակալից իրողութիւն-  
ներ են որոնք կը կարծեմ թէ կրնան Բարի-  
զի Հայութեան հանրային կեանքին մէջ նոր  
թուականի մը բացումը համարուիլ :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



ՊԵՆԱՆ

ԵՒ ՀԱՅ ՀՐԱՊԵՏԱՆՈՒԹՅԱՆ



Էսնէսթ Ռընանի անունը շատ քիչ , կամ մա-  
նուանդ շատ անկատար կերպով , ճանչցուած է  
մեր մէջ : Սակաւաթիւ են այն Հայերը որ կար-  
գացած են իր մէկ քանի գործերը եւ անոր  
մոգական ոճին եւ տեսութեանցն ու գաղափար-  
ներուն հզօր եւ բազմերանգ գեղեցկութիւնը  
ճաշակած : Ֆրանսացի ժամանակակից այդ քըն-  
նադատ իմաստասէրը , որ իր դարուն մեծա-  
գոյն արձակագիրներէն մին է , գրեթէ բոլոր-  
ովին անձանօթ մնացած է մեզի : Իր գործե-  
րէն ոչ մէկը թարգմանուած է հայերէնի , բաց  
ի փոքրիկ տետրակէ մը , իսլամութեան վրայ ,  
որ լոյս տեսած է Թիֆլիզ : Թէպէս Արմենակ  
Հայկունի փորձած է թարգմանել իր «Յիսուսի  
կեանքը»՝ անոր հրատարակուած տարին իսկ  
(1863ին), բայց կրօնական ընդդիմութեանց առ-  
ջիւ ստիպուած է տեղի տալ եւ հրաժարիլ իր  
ձեռնարկէն :

Անկէ ի վեր կարծեմ ոչ ոք նոր փորձ մը ը-  
րած է , թէեւ այժմ շատ աւելի զիւրաւ կա-  
րելի է Ռընանի որ եւ է մէկ գործը թարգմա-  
նել առանց կրօնական ժողովի մը շանթերուն  
ենթարկուելու : Ռընանի իբրեւ ամբարիշտ ու  
անհաւատ ազգած սարսփը մեղմացած է քա-  
ռասուն տարիէ ի վեր , եւ ա՛լ եթէ ոչ բարե-  
պաշտ , գոնէ անմեղ ու անվնաս հեղինակ մը  
սկսած է համարուիլ :

Չեռնարկելով հայերէնի թարգմանել իր կարե-  
ւորագոյն պատմական երկերէն մին , այն է

«Իսրայէլի ժողովրդեան պատմութիւնը» , կը  
կարծեմ ուրեմն թէ զերծ պիտի մնամ բանա-  
գրանքի ծիծաղելի վտանգէն : Այս քննական ու  
իմաստասիրական գործին մէջ , գծելով հան-  
դերձ Հրէից քաղաքական պատմութիւնը՝ Դա-  
տաւորներէն մինչեւ Մեծն Հերովդէս , Ռընան  
կը բացատրէ թէ ի՛նչպէս Մարգարէներուն  
մէջ կազմուած է կամաց կամաց , առանց վար-  
գապետութեան եւ առանց ծէսի , միմիայն  
սրտի մաքրութեան ու արդարութեան սիրոյն  
վրայ հիմնուած կրօնքի մը գաղափարը ուրկէ  
ծնած է մեսիականութիւնը եւ որ յառաջ մե-  
րած է Յիսուս Քրիստոսը որ մարմնացումն է Մար-  
գարէներու իղձերուն եւ ձգտումներուն , իր  
վերջին հատորը , ինչպէս ըսի , կը հասնի մին-  
չեւ Մեծն Հերովդէսի մահը , այսինքն մինչեւ  
Յիսուսի ժամանակը , որով «Իսրայէլի ժողո-  
վրդեան պատմութիւնը» բնական ներածու-  
թիւնը կ'ըլլայ իր «Քրիստոնէութեան ծագման  
պատմութեան» որուն առաջին հատորն է «Յի-  
սուսի կեանքը» :

Երկրորդ յօդուածի մը պահելով աւելի ման-  
րաման տեղեկութիւններ՝ թէ՛ թարգմանե-  
լիք գործիս եւ թէ՛ թարգմանութեան ձեւին  
ու նիւթական պայմաններուն վրայ խօսիլ ,  
այժմ կ'ուզեմ «Անահիտ»ի ընթերցողներուն  
ծանօթացնել Ռընանի անձն ու կեանքը զոր  
շատ քիչեր որոշապէս կը ճանչնան մեր մէջ :  
Այդ ծանօթացումին համար լաւագոյն միջոցը  
կը նկատեմ թարգմանել այստեղ Ռընանի մա-  
սին ընդարձակ յօդուած մը՝ զոր Ֆրանսա-  
կան մեծ Հանրագիտարանին մէջ հրատա-  
րակած է Պէտիթըօ Ֆրանսացի հռչակաւոր  
գիտունը որ Ռընանի ամենէն մտերիմ բարե-  
կամը եղած եւ անոր կեանքին ու մտքին վը-  
րայ հզօրագոյն ազդեցութիւնն ունեցած է :

Թարգմանութիւնը պիտի հրատարակուի պը-  
րակ առ պրակ . ամէն մէկ պրակ պիտի բաղ-  
կանայ 64 էջէ եւ պիտի արժէ մէկ ֆրանք ,  
փոսթայի ծախքը միասին : «Անահիտ»ի ըն-  
թերցողներէն անոնք որ կը փափաքին ստա-  
նալ զայն , կը խնդրեմ որ հաճին ինձի իմացնել  
նախապէս (\*) :

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

(\*) Հասցէ՝  
Y.ODIAN,

ԷՌՆԵՍԹ ԵՐԱՆ



Էրանեսթ Երան, պատմաբան եւ իմաստասէր, Փրանսայի մեծագոյն գրագէտներէն մին, ծնած է Թրէկիէի մէջ 1823 փետրվար 27ին եւ մեռած Բարիզ 1892 հոկտեմբեր 2ին: Հայրը, առեւտրական նաւու մը նաւապետ, Պրըթոն էր, իսկ մայրը՝ Կասքոն: Երան ինքն իսկ այս կրկին ծագումներով կը մեկնէ իր մէջ եղած երազկոտ բանաստեղծութեան եւ կեանքը ներկայացածին պէս բնական եւ զուարթ կերպով ընդունելու տարբեր խառնուածքը: Կինըրու եւ քահանաներու ձեռքին տակ մեծցաւ եւ այս երկու ազդեցութեանց զրոյժը պահեց միշտ: Հինգ տարեկան եղած ատեն հայրը մեռաւ եւ ինք մնաց մօրը եւ Հանրիէթ քրոջը հետ, որ իրմէ տասներկու տարեկան մեծ էր: Քոյրը դուռն բարոյական յատկութիւնները հիանալի բարձրութիւն մը եւ պարզութիւն մը ունէին, իր կեանքին ամբողջ առաջին կէսը շրջապատեց բուն ու լուսաւորեալ ազապատանքով մը: Անկա եղած է իր կեանքին վրայ ամենէն աւելի ազդեցութիւն ունեցող ունձը, ինչպէս ինքն իսկ կը վկայէ: Իր առաջին ուսմունքը առաւ Թրէկիէի կղերանոցին մէջ: Իր մայրն ու վարպետները կը յորդորէին զինքը եկեղեցական ասպարէզն ընդգրկելու, ինքն ալ քահանայութեան մէջ կը յուսար գտնիլ իր սրտին ներքին բաղձանքն որ էր բոլորովին ուսման եւ բարձրագոյն նպատակի մը ձգտող կեանք մը ունենալ: Այսպէս տասնըհինգ ու կէս տարեկան եղած ատեն Բարիզի Սէն-Նիքոլա աբիՇարտօնէի փոքրիկ կղերանոցը մտաւ զոր Հ. Տիւբանլու կը վարէր: Հոն տեսաւ կրօնքն ըմբռնելու բոլորովին աշխարհիկ եղանակ մը որ հակապատկերն էր Թրէկիէի քահանաներուն պարզուկ ու միամիտ հաւատքին: Ասիկա զինքը խիստ խռովեց, եւ կամաց կամաց, այդ պատճառաւ իսկ, իր կաթոլիկ համոզումներուն բարոյական հիմերը կործանեցան: 1842ին Ռընան անցաւ Իսիէ կղերանոցը փելիսոփայութիւն ուսումնասիրելու, եւ հոն գերման իմաստասէրներու ընթերցումը, մանաւանդ Հէկէլն ու Հէրտէրը, զինքը բոլորովին անշատեցին քրիստոնէական վարդապետութենէն եւ իրեն նկատել տուին տիեղեքքը իբրեւ ներքին նախատարրի մը անդիտակից եւ ինքնաբեր գարգացումը: Վերջապէս 1843ին եւ 44ին, սեմական լեզուագիտութեան ուսումնասիրութիւնը, որուն նուիրած էր ինքզինքը Սեն-Սիլվիոսի կղերանոցին մէջ, իրեն ցոյց տուաւ թէ Աստուածաշունչը չէր կրնար ներշնչեալ գիրք

մը ըլլալ. եւ պատմական ապացոյցներ աւելնալով իմաստասիրական ապացոյցներուն վերայ, ա՛լ վերջնականապէս թողուց քահանայութեան նուիրուելու ձրագիրը (1845): Այն բարոյական ցաւապէս սագնապներուն ատեն զորս կրեց այդ միջոցին, քոյրը՝ Հանրիէթն էր որ, նեցուկ ու առաջնորդ միանգամայն, զինքը «բոլորովին ազատեց կղերական վարդապետութեան մը ամենազօր լուծէն»:

Այն ժամանակն էր որ իբրեւ հսկող-դասաւոր մտաւ գեշերթիկ վարժարան մը ուր բարեկամութիւն հաստատեց իրմէ չորս տարու փոքրերիտասարդ ուսուցչի մը՝ Պերթըլոյի հետ: Նոր բարեկամին ազդեցութիւնը վճռական եղաւ իր գաղափարներուն կազմութեան վրայ: Պերթըլօ անոր առջեւ բացաւ բնական գիտութիւններու հեռապատկերը, աւելի ընդարձակ քան բանասիրութեան ու պատմութեան հեռապատկերը եւ աւելի որոշ ու ճիշդ քան գերման բնագիտութիւնը: Պերթըլօ ցուցուց իր վստահութիւնը դրական գիտութեանց վրայ՝ ճշմարտութեան հասնելու եւ մարդկային ընկերութիւնը կերպարանափոխելու համար: Ասով Ռընանի տուաւ նոր կեանք մը ունոր կրօնք մը: Աշխատելով հանդերձ սեմական լեզուներու ընդհանուր պատմութեան մը, որ կղերանոցի ուսումնասիրութեանցը շարունակութիւնն էր, Ռընան, Պերթըլօյի հետ ունեցած խօսակցութիւններովը իրեն յատուկ փելիսոփայութիւն մը կը շինէր ուր մինչեւ այն ատեն ըրած ուսումնասիրութեանց արդիւնքը կը միացնէր այն տեսութեանց հետ որոնց ազդեցութիւնը կրած էր իր բարեկամէն: «Արեւմտեան լեզուներու պատմութիւնը» զոր 1848ին ներկայացուց Սրճանագրութեանց Ակադեմիային եւ որ իր համբաւը հիմնեց իբր արեւելագէտ, բոլորովին գերմանական փելիսոփայութեան զրոյժը կը կրէ: Օնոր մէջ լեզուին ուսումնասիրութիւնը լոկ միջոց մը եղած է սեմական ոգին ճանչնալու: Գալով աշխարհի ու մարդկութեան մասին իր կազմած գաղափարին, զայն ամփոփեց գրքի մը մէջ որ 1848-49ին թէեւ գրուած, բայց միայն 1890ին լոյս տեսաւ եւ որ «Գիտութեան ապագան» արտօնող կը կրէ: Այս թէեւ խառնաշփոթ, ալ զապափարկերով լեցուն գործը կը պարունակէ, ընկերական տեսութիւններու հետ՝ զորս 48ի դէպքերուն ազդեցութեան տակ յղացած է Ռընան եւ զորս շուտով մէկ կողմ թողած է, յատուկագիծը իր կրօնական պատմութեան ուսումնասիրութեանց որոնց նուիրեց ամբողջ կեանքը եւ իմաստասիրական տեսութիւններն որոնք եղած են այն խարխալը որուն վրայ պիտի կեցած է: Ըստ «Գիտութեան ապագային» տիեզերքի մէջ պէտք

չէ տեսնել աշխարհէ դուրս ստեղծիչ ոգիի մը ,  
 Աստուծոյ մը , գործը , այլ պէտք է նկատել  
 տիեզերքը իրրեւ ներքին սկզբնապարճառի մը  
 յարատեւ ու ինքնարեւր զարգացումը : Ուստի  
 հարկ է մէկկողմ նկատել քրիստոնէական հաստատու-  
 ծարանութիւնը եւ անոր տեղ դնել հեկեկեան  
 փիլիսոփայութեան սկզբունքները : Նոյնպէս  
 Հեկեկի հետ պէտք է հաւատալ թէ այս զար-  
 ցացումը մարդկութեան մէջ առաջ կը բերէ  
 խտէլին աստիճանական իրականացումը , մը-  
 տածման ու առաքինութեան յայտնութիւնը ,  
 ճշմարտին ու բարիին անշահախնդիր հետադո-  
 սութիւնը : Իտէալին այս անշահախնդիր  
 հետադոսութիւնն է որ կը կազմէ յաւիտենա-  
 կան կրօնքը զոր պէտք է զանազանել յպատուկ  
 կրօնքներէն որոնք՝ վարդապետութեանց ու  
 ծէսերու մէջ սահմանափակ՝ դատապարտուած  
 են կորնչելու : Տիեզերքի ու մարդկութեան  
 զարգացումը , որուն ուսումնասիրութիւնը  
 փիլիսոփայութեան նիւթն է , չենք կրնար  
 ճանչնալ ու հասկնալ վերացական խորհրդա-  
 ծութիւններով այլ միմիայն դրական գիտու-  
 թիւններու միջոցաւ , որոնք են բնագիտու-  
 թիւն , տարրագիտութիւն , բնական պատմու-  
 թիւն , համեմատական քերականութիւն , դիցա-  
 բանութիւն : Հնչ է որ կը տեսնուի Պերթը-  
 լոյի ազդեցութիւնը , եւ այն ջանքը զոր կ'ընէ  
 Ռենան Հեկեկի բոլոր սկզբունքները միաց-  
 նելու գրական գիտութեան զազափարին հետ ,  
 կը կազմէ իր փիլիսոփայութեան նորանշա-  
 նութիւնը : Քանի որ նիւթական եւ ստորին  
 շահերէ անջատու մը եւ խտէական վախճանի  
 մը անձնանուիրումը , բառին լայն նշանակու-  
 թեամբ բարոյական ու կրօնական կեանքը կը  
 կազմէ , իմաստասիրական մտածմունքն ու զը-  
 րական գիտութիւնը գիտուն փիլիսոփային  
 համար կրօնքի մը նկարագիրը կ'անեն . այն  
 որ կը մտածէ , հոգւով եւ ճշմարտութեամբ  
 կ'աղօթէ : Քիտուն փիլիսոփաները , որոնք մը-  
 տաւորական ընտրելագոյն մասը կը կազմեն ,  
 պարտաւոր են ջանալու , իբրեւ քահանաներ ,  
 ժողովուրդը դէպ ի իրենց բարձրացնելու , զայն  
 մասնակից ընելու բարձրագոյն կեանքին՝ ի-  
 տէալին : Մարդկային ընկերութեանց կեր-  
 պարանափոխութիւնը գիտութեան գործը  
 պէտք է ըլլայ : Քանի որ ամէն բան մշտա-  
 կան լինելութեան մը մէջ է , մարդկութիւնը  
 ճանչնալը անոր պատմութիւնն ու զարգա-  
 ցումը ճանչնալը է . եւ քանի որ մարդկու-  
 թեան զարգացումը , ինչպէս բնութեանը , ան-  
 գիտակից ինքնարեւրութեան մը գործն է ,  
 պատմագէտին համար չկայ աւելի կարեւոր  
 ուսումնասիրութիւն քան կրօնքներու պատ-  
 մութիւնը եւ , կրօնական պատմութեան մէջ ,

ծագմանց պատմութիւնը . որովհետեւ հո'ն  
 միայն լաւագոյն կերպով կրնանք տեսնել այդ  
 ստեղծիչ ինքնարեւրութիւնը : Մարդկային  
 պատմութեան կարեւորագոյն եղելութիւնն է  
 քրիստոնէութեան հապտադութիւնը որ , հա-  
 կառակ իր գիտական սխալներուն եւ անձուկ  
 աստուածարանական վարդապետութեան , բա-  
 րոյականի յաւիտենական ճշմարտութիւններ  
 հոչակած է : Տասնըիններորդ դարուն կարե-  
 ւորագոյն գիրքը պէտք է ըլլայ Քրիստոնէ-  
 ութեան ծագման պատմութիւնը :

ՊԵՐԹԸԼՕ

(Շարունակելի)



### ԱՄՏԻԼ ՀԱՄԻՏ Բ. (\*)

(Շար .)

Այսպիսի պզտիկ միջոցներով ջանալով օտար-  
 ներու համակրութիւնը շահիլ , Աուլթանը կը  
 կարծէ դարմանել այն վնասը զոր եւրոպայի  
 անկախ մամուլը , որ իրեն հակակիր է , կը  
 բնութիւնը վարկին :

Նոյն իսկ իր հպատակներուն հանդէպ կը  
 փորձէ հաճոյակատար ու բարի երեւալ , երբ  
 իր շահը այնպէս պահանջէ : Երբ այսինչ պաշ-  
 տօնատարը կամ բարձրատիճան անձնաւորու-  
 թիւնը հիւանդանայ , սննեկապահ մը կ'եր-  
 թայ վեհապետին կողմէ լուր կը հարցնէ , պա-  
 լատին բժիշկներէն մէկը կը փութայ զայն  
 խնամել . եթէ մեռնի եւ որդիներ թողու՝ ու-  
 ընոց հաւատարմութիւնն իրեն համար կարե-  
 ւոր թուի , անոր թաղումը իր անձնակէս  
 ծախքովը կը կատարուի :

Երբեմն կեղծաւորեալ սերածեւութիւններով  
 կը փորձէ վատարկիլ մարդ մը որմէ կը վախնայ  
 եւ որուն չի կրնար զպչիլ . այն ատեն չկայ  
 ցածութիւն որուն չզիջանի՝ խորամանկու-  
 թեամբ ձեռք ձգելու համար ինչ որ բիրտ ուժի  
 միջոցով չի կրնար ստանալ :

(\*) Գիրքը որմէ քաղուած է այս հատուածը  
 հրատարակուեցաւ այս օրերս :  
 GEORGES DOBYS, «Abdul-Hamid Intime»  
 Librairie Stock  
 27, Rue de Richelieu PARIS  
 Դին 3 ֆր. 50 :

Օրինակներն անհամար են արժանապատուութեան այս բացարձակ բացակայութեան : Դեպքանատան մը առաջին թարգմանը , անհամբեր ու կտրուկ մարդ մը որմէ շատ կը վախնան Նըլտըզի մէջ , երեք տարի առաջ բուռն վէճ մը ունեցաւ Իզզէթ պէյին հետ որ այն միջոցին ամենազօր էր . Սուլթանը , որ վախնալու պատճառներ ունէր , ուզեց երկու հակառակորդները հաշտեցնել , եւ հանդարտեցնելու համար եւրոպացի դիւանագէտը որ սաստիկ բարկացած կ'երեւար , կը պաղատէր անոր , հազար տեսակ փոխարինութիւններ կը խոստանար , անոր ձեռքերէն բռնած՝ կ'աղբւսէր որ ներէ իր մարդուն :

Վեհութեան զուրկ ըլլալն այնչափ բնական վիճակ մըն է իրեն համար , որ յաճախ ուրախութեան մէջ իր մեծութիւնը կը մոռնայ . երբ լոնտոնեան մամուլը , հայկական կոտորածներէն յետոյ , հրաւիրելով Նըլտըզի որ դահլնկէց ընէ այն անձը զոր ծերունի կլատըսթոնը «Մեծ Մարգասպան» անուանած էր եւ երբ Սէյմուր ծովակալին նաւատորմիցը Արշիպեղագոսի ջուրերուն մէջ կը պարտէր՝ վրդովիչ , իրիկուն մը որ Սուլթանը , Լոնտոնի օսմանեան դեսպանին կողմէ իրեն հաղորդած տեղեկութիւններուն ազդեցութեանը տակ , պատճառներ ունէր կարծելու թէ արտասահման փախչելը իրեն միակ փրկութեան միջոցն էր , նախարարները արտասովոր ժողովի մը գումարեց՝ կացութեան մասին խորհրդակցելու համար , մինչդեռ իր «Իզզէթոն» շոգեմակոյիք Պէշիթթաչի առջեւ պատրաստ կը սպասէր՝ զինքը Օտէսա տանելու համար : Նախարարներէն մին , Մահմուտ Ճէլալէտօին փաշա , առաջարկեց որ գերմանական դեսպանատան զիմուի՝ խորհուրդ հարցնելու . իսկոյն , Սուլթանը Իզզէթ պէյը խրկեց Վիլհէլմ Բ . ի ներկայացուցչին : Իր պատուիրակին բացակայութեան միջոցին , բատիշահը , շատ մտայլ յուսահատութեան մը մատնուած , տենդոտաբար սենեակին մէջ վեր վար կը քալէր . իր բոլոր գոհարեղէնները վրան առած էր եւ՝ գրքպանաւոր գօտիի մը մէջ՝ իր պանքայի արժէթուղթերը , հազիւ թէ ծածկուած : Բայց երբ Իզզէթ եկաւ գերմանական դեսպանին կողմէ խոստում բերաւ թէ Վիլհէլմ «իբ բարեկամը» պիտի պաշտպանէր , Ապտիւլ-Համիտ , ուրախութեան ինքզինքը կորսնցուցած , գրեթէ անսր առջեւ ծունկի ինկաւ , իր գորովը անոր ապացուցանելու համար :

Այլ դիւրին է հասկնալ որ Սուլթանը ո եւ է բնական համակրութիւն ունենալու անկարող ըլլայ խրոխտ եւ անկախ հողիներուն համար . անոնք կը կատղեցնեն ու կը սարսափեցնեն զինքը : Ու չկայ միջոց որ չգործածէ զանոնք կաշառելու համար . յաճախ պալատը կանչել կուտայ անձեր որոնք դիտէ թէ իրեն հակազիր են եւ որոնք իրենց վեհօգի նկարագրին բերումով իրմէ հեռու կը կենան : Իրենց եղած հրաւերին պատասխանելու ստիպուած , շատ քաղաքավար կերպով կ'ընդունուին Նըլտըզի մէջ , սենեկապահի մը կամ քարտուղարի մը կողմէ , որ , վեհապետին բերնէն շատ մը սիրուն բաներ ըսելէ յետոյ անոնց , երկայն թուում մը կը սկսի տիրոջը յատկութիւններուն եւ առաքինութիւններուն , որուն կը յաջորդեցնէ նորին վեհափառութեան ձօնուած ներքողան մը քերթողական արձակով : Եւ երբ ճարտասանը այս փորձին ենթարկուած հիւանդը ըստ բաւականի ուժասպառ նկատէ , կը փորձէ կայսերական ոսկեզօծ դեղնատը անոր կ'ըլեցնել . «Ձիս չի սիրեր , ինչ ըրած եմ իրեն : Թող իմ անձի կապուի , թող հաւատարիմ ըլլայ ինձի . եւ զինքը առատօրէն պիտի վարձատրեմ , պիտի հարստացնեմ , շնորհներով պիտի ողողեմ , նախարար , դեսպան պիտի պիտի անուանեմ , միայն թէ պէտք է որ հաւատարմութեան , անձնուիրութեան ապացոյցներ տայ ինձի : Օրինակի համար , ինքը կարող է շատ մը բաներու մասին տեղեկութիւն ունենալու . թող զանոնք ինձի յայտնէ . ու մարդ պիտի չիմանայ . . . այս բոլորը մեր մէջը պիտի մնայ . . . ինչ գիտէ , օրինակի համար , այսինչ փաշային կամ այն ինչ պէյին վրայօք : Կը ճանչնայ զանոնք , անոնց հետ յարաբերութեան մէջ է . գիտէ ուրեմն անոնց գաղաղափարները , անոնց դիտաւորութիւնները : Ինչո՞ւ այդ բոլորը ինձի չյայտնէ , ինձի՝ որ հայրն եմ իմ ժողովրդիս , հետեւաբար ամէն բան գիտնալու եմ , եւն» :

Բայց այս հարցափորձին ենթարկուողը ցըրտութեամբ կ'ընդունի այդ առաջարկները , եւ կը հաւաստէ թէ բան մը չունի ըսելու եւ թէ բան մը չի գիտեր , սենեկապահը այն տան կը թողու զինքը եւ կ'ըթայ Սուլթանին հաղորդել ձեռնարկին անյաջող ելքը : Ապտիւլ-Համիտ կը պնդէ , պէտք է ուրիշ յատակազօծ մը միեւնոյն ձեռնարկը վերսկսիլ . եւ եթէ երկրորդ յարձակումն ալ չյաջողի , երրորդ մը պէտք է փորձել : Վերջապէս , եթէ ենթական մինչեւ վերջը դիմադրէ կայսերա-

կան թոյնի ներարկումին, Սուլթանը նախ աջնպէս կը ձեւացնէ թէ անոր դէմ քէն չէ պահած: «Կը մերժէ՞: Կը ցաւիմ. չի գիտեր ուրեմն թէ ի՛նչ գին ունին ինծի մատուցուած ծառայութիւնները . . . »

Բայց քիչ ատենէն այդպիսիները ծանրադէտ արդիւնքները կը կրեն այն ատելութեան զոր իրենց անկախ ընթացքովը իրենց վրայ հարաւիրած են. այն ատեն, ամենէն ապահով միջոցը, այն անձերուն համար զոր բատիչահն իր մասնաւոր չարակամութեամբը կը պատուէ, եւրոպայի պատիկ ճամբորդութիւն մը ընելն է:

Աօր մէկ ձեւն է այն կաշառման սիստեմին զոր Ապտիւլ-Համիտ հնարած է, եւ զոր իր մարդիկը կը գործադրեն՝ մասնաւորապէս եւրիտասարդներու վրայ: Կարելի չէ գաղափար ունենալ այն համբերատար խորամանկութիւններուն, այն մանուածապատ միջոցներուն մասին զոր կը գործածեն Պոլսոյ մէջ, երիտասարդ միտք մը Սուլթանին կապելու համար: Գիտեն, օրինակի համար, թէ իր ազգականներուն, ծանօթներուն, բարեկամներուն, ու իր դերքին միջոցաւ, կարող է ան՝ անդեակ ըլլալ կարգ մը փոքրիկ գաղտնիքներու որոնք վեհապետը կը շահագրգռեն. գինքը վաստակելու համար ամէն միջոց պիտի ձեռք առնեն: Պաշտօն, պատիւ, շնորհներ, շքանշաններ, աստիճաններ, ու մանաւանդ գրամ պիտի խոստանան: Չպիտի քաշուին մինչեւ իսկ գործին մէջ գեղեցիկ կնիկ մը խառնելու: Մէկ խօսքով, անոր աչքին պիտի շողացնեն զայն ամենէն աւելի հրապուրել կրցող բոլոր յոյսերը: Եթէ այդ անփորձ երիտասարդը քիչ մը տկար ըլլայ նկարագրով կամ բաւական սկզբունքի տէր չըլլայ, կամ մոլորման վայրկեան մը ունենայ, այնքան լաւ թակարդուած, այնքան ճարպիկ կերպով կապկպուած պիտի ըլլայ որ քանի մը վարանումէ յետոյ բռնաւորին գործիքը պիտի դառնայ:

Եթէ ընդհանուրակն դիմագրէ եւ անյողգող երեւայ, ինքն իրեն համար պիտի պատրաստած ըլլայ լրտեսուած, զրպարտութիւններով պաշարուած, ամէն անտակ հալածանքներով վրդովուած կեանք մը:

\* \* \*

Այսպէսով է որ Սուլթան Համիտ յաջողած է մասամբ կաշառել ազգին հատընտիր մասը եւ կազմել սերունդ մը որուն մէջ, յարատեւ

ու մանրակրկիտ աշխատութեամբ մը, ամենէն անբարոյական ու ստորնացուցիչ սկզբունքները պատուաստած են: Գիտէ ոսկիին զօրութիւնը եւ իր ժողովուրդը կաշառելու կը գործածէ այն հարստութիւնները զոր անկից կը խլէ: Չի սիրեր ուղղամիտ մարդիկը, որովհետեւ զանոնք կը նկատէ իրբեւ իր քաղաքականութեան հակառակորդներ եւ իր ընթացքին քննադատներ: Պատերազմական նախարարի պաշտօնին կոչուելէն երեք օր յետոյ, Ալի-Սաիպ նախկին սէրասքէրը Սուլթանէն ընդունուեցաւ: Սաիպ մինչեւ այդ ատեն անբասիր մնացած էր. խօսակցութեան միջոցին, իր տէրը ըսաւ իրեն. «Ինծի նայէ, սէրասքէր, ես կ'ուզեմ որ ինծի ծառայող մարդիկը անձուիրութիւն ցոյց տան. բայց կ'ուզեմ նաեւ որ իրենց շահերը երեսի վրայ չթողուն եւ ջանան հարստանալ: »

Ալի Սաիպ փաշա շուարած մնաց, եւ իրեն ըսելուն նայելով՝ այդ խօսքը դժնդակ ազդեցութիւն մը ըրած է եղեր իր վրայ: Ինչ որ չարգելեց նորին վեհափառութիւնը հաստատուելու, քիչ յետոյ, թէ իր նախարարը տրուած դասէն շատ շուր կերպով օգտուած էր:

Բայց կայսերական կաշառողին գործը իր պալատին ու իր երկրին նահաններէն անդին անցած է: Չէ՞ որ ոսկի բերնակապներով ինքզնից եւրոպական մամուլին շատ մը կարեւոր օրկաններուն ձայնը: Չէ՞ որ կարգ մը օտար քաղաքական անձնաւորութիւններ ու նոյն իսկ զիւսանադէտներ գրամով իրեն վաստակեցաւ:

Սաիպ փաշա, հետամուտ ըլլալով դիտաւրութեան վեց ամսուան մէջ Հայաստանի ջարդերը ո՛րքանի նստած էին տաճկական Գանձուն՝ եւրոպական լրագիրներու յատկացուած վճարումներով, հետեւեալ մօտաւոր հաշիւը երեւան հանած է. 640 շքանշան եւ 235,000 տաճկական ոսկի (հինգ ու կէս միլիոն ֆրանքի չափ):

Ապտիւլ-Համիտ ամէն բան կարելի կը կարծէ, եւ այդ մանրանկար Յուզուրթի ամենէն տարօրինակ կաշառումներն ընել փորձած է. չէ՞ որ «Թայմզ»ը կաշառել ուղիւ համարձակեցաւ: Եւ Պէրլինի վեհաժողովը բացուելու ատեն, չէ՞ որ իր Սալֆեթ փաշա նախարարին կ'ըսէր՝ «մէկ միլիոն տաճկական ոսկիով Պիդմարքին բերանը կը գոցենք: »

Մուլթանը, որ միշտ չի հաւատար մարդոց առաքինութեանը, կը հաւատայ Ապտուճոյ: Ինքը որ երկրիս վրայ այնքան անպատկառօրէն արգարութիւնը կը բռնաբարէ, կը հաւատայ երկնաւոր արդարութեան մը: Այս կէտին մէջն ալ, հակասական է ինքը:

Ապտիւլ-Համիտ սկեպտիկ է, ո՛չ բարեպաշտ ո՛չ հաւատացեալ. բայց սնապաշտ է, մոլեռանդ, դիւրա՛պական. եւ տրուած ըլլալով իր մտայլ ու յոնտես բնաւորութիւնը, իր կրօնքը տխուր է, ամբողջ երկիւղով ու զարհուրանքով շինուած. այդքի պիտարեքին վախն ունի, եւ մահուան մղձաւանջը զինքը յաճախ կը բռնէ ու կը լլկէ: Այն պտին կ'աղօթէ, այդ նոպաներուն միջոցին, ջերմեռանդօրէն պատահած է նոյն իսկ, կ'ըսեն, որ դաղանի ուխտ է ըրած եւ ինքզինքը խստամբերութիւններու ենթարկած է Ալլահին հաճելի ըլլալու եւ իր յանցանքներուն թողութիւն դոնելու համար. բայց վհատութիւնը շուտով զինքը կը պատէ եւ իր սկեպտութեանը մէջ կ'իյնայ նորէն, — տարակոյսին բարձր, ինչպէս կ'ըսէ Մոնթէնէրը, — որ միայն կրնայ իրեն քիչ մը քուն շնորհել:

Այսպէս, Հաւատացեալներու Առաջնորդը կրօնական պարտքերը չի կատարեր: Հինգ նամազը ընելու անհոգ է, եւ բամազանի «օրուճ»ը (ծով) կանոնաւորապէս չի պահեր: Բայց, իր բեճարպիկ մարդ, որ գիտէ թէ կրօնական զգացումն ինչ ուժ ունի մահմետականներուն մէջ եւ որ գիտէ մահաւանդ թէ իր Ապտիւլ-Աղիզ հօրեղբօրը անկրօնութիւնը ի՛նչքան անժողովրդական ըրաւ զայն, կը ջանայ իր հպատակներուն համակրութիւնը շահիլ՝ ասենախորին յարգանք մը դրօշելով Մարգարէին օրէնքին համար:

Իւրեմա մը, որուն հետ կը խօսակցէի անգամ մը Ապտիւլ-Համիտի կրօնական զգացմանց մասին, կ'ըսէր. «Իր քաղաքականութիւնը մշտական բռնաբարում մըն է մեր Մարգարէին սուրբ օրէնքին. ճշմարիտ մահմետական մը երբեք իրեն պէս պիտի չվարուէր. մեր կալիֆան գէշ մահմետական մըն է ուրեմն, եւ կրօնքը իրեն համար ուրիշ բան չէ բայց եթէ քաղաքական գործիք մը, զոր կը կիրարկէ ոչ թէ ազգին բարոյականը զարգացնելու, այլ սոգէն դասակարգներու մոլեռանդութիւնը շահագործելու համար»:

Ամէն որ գիտէ արդարեւ թէ Խուրանը, որուն մեկնութիւնը բաւական առաձգական է,

իր խորքին մէջ շատ ազատական ձգտումներ ունի: Արդ, շատ հասկանալի է որ Ապտիւլ-Համիտ իզլամութեան սրբազան այս մատանին այդ հիմնական յատկութիւնը չի սրեր: Միշտ հակառակած է Մուհամմետի օրէնքին տրուած ամէն լուսամիտ մեկնութեան, նիստեղով որ ատի կրնայ ժողովրդին հոգւոյն մէջ թմբած անկախութեան սրբն արթնցնել: Այս դարնպն, երպիլի Էսատ էֆէնտի իւրեման, հանրային կրթութեան նախարարութեան արատնութեամբ, հրատարակեց բարոյախօսական գործ մը որ Խուրանին սկզբունքներուն իսկութեանէն կը ներշնչուէր: Մուլթանին անախորժ թուեցաւ այդ հրատարակութիւնը: Հեղինակը ձերբակալուեցաւ, ու նաւ մը գրուելով Մեքքէ աքսորուեցաւ. նախարարը, այդ գործին հրատարակութիւնն արատնած ըլլալուն համար, խիստ յանդիմանութիւն մը ընդունեցաւ կայսերական դիւանէն, որ, այդ գրքին արդելումը պատճառաբանելով, կը յորդորէր թէ վնասակար «հատի»ներ (1) (էհատիսի մուզիբրի) կը պարունակէր:

Խնդիրը ճանձնուեցաւ եւ իւրեմաներուն մէջ յառաջ բերաւ մեծ զայրոյթ մը, որովհետեւ «հատի»ները «վնասակար» անակախով օրակելը Մուհամմետի նկատմամբ սրբապիղծ պնարգանք մը ընել է:

\*\*\*

Ապտիւլ-Համիտի լաւ մահմետական չըլլալէն պէտք չէ հետեւցնել թէ քրիստոնեաները կը սխրէ. կ'առէ զանոնք՝ ընդհակառակն, եւ յաճախ «կեալուր» բառը կը գործածէ քրիստոնեայի մը մասին խօսելու կամ մահմետական մը նախատելու համար:

Ասի զինքը չ'արգիլեր որ, պարագաներու համեմատ, ոչ միայն թոյլտուութիւն, այլ եւ յարգանք կեղծէ այլեւայլ պաշտամունքներու եւ դաւանանքներու նկատմամբ: Յունաց Պատրիարքը ընդունած պտեն, անոր պիտի ըսէ թէ օրթոտոքութիւնը կրօնքներուն ամենէն հզօրն է. Ասորիներու Պատրիարքին, թէ իր դաւանանքը ամենէն տրամաբանականն է. Բաբունապետին, թէ Մովսէսի օրէնքը ամենէն աւելի կը մօտենայ Մարգարէին օրէնքին: Նախկին արարողապետը, Միւնիր փա-

(1) «Հատի» կ'անուանուին Մարգարէին այն պատուէրները որոնք Խուրանին մէջ չ'են պարփակուած:

չա, այս առթիւ կը պատմէր նշանակալից ման-  
րադէպ մը . օր մը Սուլթանը, Պոլսոյ պապա-  
կան պատուիրակ մոնսիինոը Պոնէթթիին շը-  
նորհած մէկ ունկնդրութեանը միջոցին, երկայն  
բարակ կը գովէր կաթողիկոսեան մեծութիւնը  
և պապութեան փառքը, այնպիսի աւելնով  
մը որ մոնսիինոըը խորապէս յուզած էր :  
Տեսակցութեան աւարտէն յետոյ, երբ Միւնիւր  
փաշա, եկեղեցականը մինչև զուռը առաջ-  
նորդելէն ետքը Սուլթանին մօտ զարձաւ, «Ա-  
պ'ուշը, ըսաւ խալիֆան քահ քահ խնդարով,  
բոլոր ըսածներս կ'լլեց, մինչև անգամ աչ-  
ուրները լիցուած էին յուզմունքէն . . . » :

Սուլթանը կ'արհամարհէ քրիստոնեաները,  
բայց ա'լ աւելի՛ ուրացողները . ասոր պատ-  
ճառը թերեւս այն է որ ատենով քրիստոնեայ  
ծնած եւ ետքէն իսլամութիւն ընդունած սի-  
րիլի մը ունեցաւ . ժորժ Արիսթարքի, փայ-  
լուն երիտասարդ մը, բայց մոլութիւններով  
փտած, եւ որ Ֆէնիքի ամենէն մեծամուկն ըն-  
տանիքներէն մէկուն կը պատկանէր . մահմե-  
տական ըլլալով՝ ա' յնքան քմահաճոյքի մը գո-  
հացում տալու որքան Ապտիւլ-Համիտին հա-  
ճելի ըլլալու համար, անոր թիկնապահը եւ  
զաւ եւ Սէյֆուլլահ անունն առաւ, եւ այս-  
պէս շատ ազգեցիկ զարձաւ շնորհիւ այն վար-  
կին զոր կը վայելէր իր տիրոջը հանգէպ՝ այն  
տեղեկութիւններուն համար զոր ունէր ալքի-  
միազիտութեան, աստեղադիտութեան, մոգու-  
թեան եւ ուրիշ ծածուկ գիտութեանց մասին  
որոնցմով բատիչաճ պատանի հասակէն սկըս-  
եալ մեծապէս հետաքրքրուած է : Ի վերջոյ,  
լուր ելլելով թէ Սէյֆուլլահ իր պաշտպանին  
դէմ դաւ մը կը սարքէր, գործերը իրեն հա-  
մար գէշ ընթացք մը առին, Պենկաղի աքսոր-  
ուեցաւ, ուր բաւական խորհրդաւոր մահ մը  
ունեցաւ :

(Շարունակելի) ԺՈՐԺ ՏՈՐԻՍ

❖❖❖

## ԳՈՐԾԻ ՄԱՐԴԻԿ

Ե .

Ս. Երբորդութեան եկեղեցիի աւագերէցը  
տանկրէցն էր հարուստ դասակարգին : Արդէն  
կատարեալ ազնուաշուք նուիրագործուելու մէկ  
էական պայմանն էր Տ. Մկրտիչը տանկրէց  
ընենալ, առանց ասոր շատ վաւերական չէր  
նկատուէր ազնուականութիւնը : Ազնուաշը-  
քանալու վրայ եզոզ ընտանիքներ անհամբըր

կը սպասէին իրենց հին տանկրէցին մեռնելուն  
որպէսզր տեղը Տ. Մկրտիչը առնէն : Ատոնց երբ  
հարցուէր թէ՛ ո՞վ է իրենց տանկրէցը, շփո-  
թած՝ դրեթէ կարմրելով կը պատասխանէին .

— Շիտակը կ'ըզեա նէ՛ Տ. Մկրտիչը պիտի  
ըլլայ, բայց հիմակուհիմա Տ. Սահակն է . . .  
չմեռաւ որ մէյմը ազատէինք :

Ու շատեր, յուսահատ իրենց քահանային  
մեռնելէն, որոշած էին թէ՛ անիկա պահելու  
թէ՛ Տ. Մկրտիչը տանկրէց ընէր : Այս պարա-  
դային՝ տօնական օրերուն՝ Տ. Մկրտիչ սալօնը  
կ'օրհնէր եւ միւսը՝ սպասուորներու գետնա-  
յարկի սենեակը :

Բայց տանտիկիներու մեծամտութիւնը ա-  
սով չէր բաւականանար . ցանկութեան, փա-  
ւասիրութեան ուրիշ նպատակակէտ մը կար  
որուն հասնիլ շատ աւելի դժուար էր : Ազնու-  
ւաշուքներու քահանան իր ծուխերը բաժնած  
էր երեք դասի գործնք Մննդին ու Չատկին կը  
հովուէր կարգաւ : Առաջին օրը բարձրագոյն  
դասի ազնուաշուքներուն յատկացուցած էր,  
երկրորդ օրը՝ միջին դասի եւ երրորդ օրը՝  
ստորին դասի : Երեւակայեցէ՛ քամօթալից վի-  
ճակը այն հէզ տանտիկնոջ որուն սալօնը Չատ-  
կի երեքաբարթի օրը կ'օրհնուէր, մինչդեռ կա-  
յին գերերջանիկ արարածներ որոնք «Տէր Մը-  
կրտիչը տունօրհնէքի եկա՞ւ» ըսուած ատեն  
կրնային հպարտութեամբ պատասխանել՝

— Ի՛նչ ըսել է . հէլպէթա՞մ քի եկաւ, ար-  
դէն՝ չիյա՞նք՝ մենէ կը սկսի նէ . . .

Ի՛նչ աղաչանքներ, ի՛նչ փաղաքշանքներ կ'ըլ-  
լային տանկրէցին, երրորդ կարգի ծուխերուն  
կողմէ, գոնէ երկուշաբթիի վերածել տալու  
համար իրենց օրը՝ բայց այդ մասին անողոք  
էր Տ. Մկրտիչ :

— Անկարելի է, կը պատասխանէր, տեա-  
րակիս մէջ ինչ որ նշանակուած է՝ ան կ'ըլլայ,  
պարսպ տեղը մի պնդէք՝ կը բարկանամ :

Տ. Մկրտիչ հայրը կը սիրուէր իր ծուխերէն  
մասնաւորապէս խոստովանանքի մասին իր  
ներողամտութեանը համար :

— Ի՛էք աղէկ խոստովանանք կ'ընէ, բնաւ  
հարցում չ'ըներ ու շուտ մը արձակում՝ կու-  
տայ, կ'ըսէին իրարու կիները, որոնք իբր  
թէ կարող ըլլային դժուարախոստովանելի  
մեղքեր գործելու :

Իր հարուստ ծուխերուն շնորհիւ Տ. Մկրտիչ  
քահանաներուն մէջ փայլուն վիճակ մը ունէր,  
նոյն իսկ եպիսկոպոսներ կային որոնք կը նա-  
խանձէին իր վրայ : Բայ ի Չատկի ու Մննդի  
հաստատ նուէրներէն, Տ. Մկրտիչ ծուխերէն  
ստակ քաշելու զանազան միջոցներ հնարած  
էր, որոնց մին էր իր հեղինակած աղօթաւ

գիրքները ծախել անոնց սուղ սուղ գիններով , կամ երեւակայական աղքատներու ի նպաստ հանդանակութիւն ընել , կամ ստակ հաւաքել օժիտ պատրաստելու համար աղջիկներու ուրոնք թէեւ գոյութիւն չունէին բայց այսուհանդերձ պիտի ամուսնանային «պարկեշտ եւ աղքատիկ» երէտասարգի մը հետ , եւն :

Տ. Մկրտիչ «գործի մարդ» քահանան էր , որ կրօնաւորութիւն կ'ընէր վաճառականութիւն ընելու պէս : Իրեն համար կրօնքը խոշոր խանութ մըն էր . տունօրհնէք , խաչահանդիստ , խոտովանանք , նշանտուք , կնուէք , հաղորթիւն , աւետարան , բարի խրատ , կշտամբանք , թաղում , հարմիրք եւն . ապրանքներ էին գորոնք պէտք էր կարելի եղածին չափ սուղ ծախել եւ միշտ ջանալ առաջ աւրուածները քշելու :

Հպարտ ու ամբարտաւան իրմէ տկարներուն հետ՝ Տ. Մկրտիչ ամենէն դետնաքարչ սողակումներն ունէր հարուստներուն գիմացը եւ այս էր անոնց մօտ իր յաջողութեան զլխաւոր պատճառը , կեղծաւորութիւնը : Կեղծաւորութիւնը արուեստի մը նրբութիւններուն հասուցած եւ իրաւցնէ գիւտեր ըրած էր այդ ճիւղին մէջ : Ատոնցմէ մէկն էր «սգակիր քահանայ»ի գիւտը : Ամէն անգամ որ իր հարուստ ծուխերէն մին մեռնէր , Տ. Մկրտիչ փոխանակ զգեստաւորութեամբ պաշտօն կատարելու եւ դայն թագելու , սեւ շալ մը կը փաթթէր վզին շուրջը . «աւուր պատշաճի» լալկան կերպարանք մը կ'առնէր ու եկեղեցիին դասը կեցած եղերեքական հառաչանքներ կ'արձակէր : Փողոցն ալ , փոխանակ միւս քահանաներուն հետ քալելու , դազաղին հտեւէն կ'երթար , իբր թէ մեռնողին հայրը , եղբայրը կամ սղան ըլլար : Ասով թէ՛ արարողութեան յոգնութիւններէն կը փրկէր ինքզինքը եւ թէ՛ ցած չողորթութեան ցոյց մը ըրած կ'ըլլար մեռնողին տէրերուն : Հետեւեալ օրը թերթերը , թաղման հանդէսի նկարագրութեան մէջ , կը գրէին . «Տ. Մկրտիչ աւագ քահանայ Յովհաննէսեան , որ հանգուցելոյն բարեկամնու տաներէցն է միանգամայն , ոչ զգեստաւորեալ , իբրեւ սգակիր կը հետեւէր դագաղին , խորապէս յուզեալ» :

Հարուստ ընտանիքներու հետ մշակած յարաբերութիւններուն շնորհիւ գերակշիռ գիրք մը ստացած էր Ս. Երրորդութեան եկեղեցիին մէջ ուր նոյն իսկ քարոզիչ վարդապետը կը վախնար իրմէ : Ժամկոչ , տիրացու կամ բարապան , որոնք միւս քահանաներուն հետ անե-

րես կոպտութեամբ կը վարուէին , կը պատկանէին աւագերէցէն : Տ. Մկրտիչ առիւծի բաժինը կ'առնէր բանկալի այն ամէն հասոյթներէն որ սահմանուած են պաշտօնեաներուն մէջ բաժնուելու : Այսուհանդերձ իր անյայդ դրամասիրութիւնը միշտ դժգոհ կը մնար , եւ յաճախ անիրաւուած , կողոպտուած մարդու վայնասուններ կ'արձակէր երբ իր չափազանց պահանջկոտութեան մասին գիտողութիւններ ըլլային թաղական խորհրդին կողմէ : Դրամական խընդիւրներու մասին , իր կոիւնները շատ անգամ եւրայի մէջ օրուան դէպքը կը դառնային ու կը պատահէր որ նոյն իսկ թերթերը դառնէին ատով : Այդ պայքարներուն մէջ իր մշտնջանական ախոյեանը , անողոք թշնամին էր Արսէն Կուլեան : Ամէն թաղումի կամ հարմիրքի հաշուեյարդարութեան միջոցին անխուսափելի ընդհարում մը պիտի ըլլար այդ երկուքին միջեւ : Հակառակութիւնը որ այսպէս ասեն ատեն կը պայթէր , միշտ գոյութիւն ունէր թաքուն վիճակի մէջ : Երկուքն ալ , ամէն օր , ամէն ժամ , անընդհատ , սրտմաշուք զգուշաւորութեան մը մէջ կ'ապրէին զիրար գիտելով , զիրար լրտեսելով , միշտ մատասնջ թէ՛ արդեօք դիմացինը ի՞նչ դարան լարելու վրայ է իրեն դէմ , կամ ի՞նչ պղտոր շահագործումներ կ'ընէ ինքն իր զլխուն : Եւ իրաւամբ Տ. Մկրտիչի համար Կուլեան ամենէն զօրաւոր ու երկիւղալի մրցակիցն էր : Իրեն չափ խորամանկ սւ ծածկամիտ , իրեն չափ հանած - վարած , Արսէն Կուլեան բարձր գասուն հետ ունեցած յարաբերութիւններով ու ազգային շրջանակներու մէջ վայելած ազդեցութեամբն ալ կրնար մրցիլ Տէր Մկրտիչի հետ :

Ընդգիմամարտ շահերէ ծագած այդ հակառակութիւնը այնչափ առաջ գացեր ու սասակացեր էր որ ա՛լ բացարձակապէս իրար կ'ատէին : Տ. Մկրտիչը մանաւանդ՝ ամէն անգամ կատաղութենէն գրեթէ հիւանդ կ'ըլլար երբ կ'իմանար Կուլեանի մէկնոր շահատակութիւնը այն գործերուն մէջ որոնք կը կարծէր թէ միմիայն իր մենաշնորհներն էին :

Հիմա կ'երեւակայէք իր բարկութիւնը երբ Ռոտոսթոյէն վերադարձին Ս. Երրորդութեան բանկալը մտնելով իմացաւ Սարգսյանի նշանուիլը օրիորդ Կերմերեանի հետ , Կուլեանի միջնորդութեամբ :

— Դոնէ քիթը թող այդ ամուսնութեան գործերուն մէջ չխոթէ , պտուսց գողահար . անամօ՛ թմարդ , ձեռքէն գայ նէ վաղը խորանին վրայ

ելլայ պատարագ ալ պիտի ընէ , հաղորդու-  
թիւն ալ պիտի տայ :

—Է՛հ , ի՞նչ կ'ըլլայ , պատասխանեց գիււ-  
նապետը որ հաճոյք կը զգար քահանան գըր-  
գըռելէն , արդէն կուլեան էֆէնտին աշխարհա-  
կան վարդապետի մը կը նմանի :

—Վարդապետ մի՞... քթէն բերնէն բերել  
պիտի սամ այս ըրածը... ա՛լ բաւական է , ա-  
նամո՛թ մարդ , անօրէ՛ն մարդ , ժիզու-իթ շուն-  
շանորդի :

Եւ քթին տակէն շարունակելով հայհոյանք-  
ները կուլեանի հասցէին , մեկնեցաւ եկեղե-  
ցիէն :

Տ. Մկրտիչ տուն հասաւ հետզհետէ աւելի  
զրգոտւած : Իր մրցակցին ոտնձգութիւնները  
իր ծուխերուն մէջ , ա՛լ բոլորովին համբ-  
ըութիւնը սպառած էին :

—Այս մարդուն հախճն գալու է , կը մըրըլ-  
տար ինքնիրեն սենեակը քաշուած :

Ու մինչև գիշեր հազար տեսակ միջոցներ  
մտքին մէջ պարտցուց կուլեանի ձեռքով պատ-  
րաստուած նշանտուքը քայքայ՝ լու համար եւ  
այն ատեն միայն հանգստացաւ եւ կարող եղաւ  
քնանալու երբ գործադրելիք եւ յաջողութեան  
հաւանականութիւն ունեցող ծրագիր մը յղա-  
ցաւ :

Հետեւեալ օրը , կէսօրին մօտ , Տ. Մկրտիչ  
կը ներկայանար կերմերեանց տունը . սպա-  
սուհին հաղիւ զինքը հիւրասենեակ մտցու-  
ցած՝ տաներէցը խրոխտ , հրամայական շեշ-  
տով մը ըսաւ .

—Հանրմիբ ըսէ , շո՛ւտ թող դայ , ըսելիք  
ունիմ :

Տիկին կերմերեան վաղեց եկաւ ուրախ զը-  
ւարթ դէմքով մը , ինչպէս կը վայլէ աղջիկը  
նոր նշանած մօր մը :

—Աչքի լոյսի՞ եկար , գոչեց սենեակին դուռ-  
նէն Տ. Մկրտիչը տեսնելով :

—Աչքի լո՞յս , ի՞նչ կայ որ , պատասխանեց  
քահանան , չուղելով գիացած ձեւանաչ նշան-  
տուքը , ընդհակառակն ես ձեզի աղէկ լուր մը  
բերի :

—Է՛յ , ըսէ նայինք սա աղէկ լուրդ :

—Նախ Սաթենիկա կանչել տուր :

—Կուգայ կոր , արդէն գալիք լսեցնէ՛ խենթի  
պէս գործը ձգեց հաղուելու գնաց :

Եւ իրաւ ալ նոյն վայրկեանին Սաթենիկ  
ներս մտաւ :

—Եկուր սա ձեռքս պագ , աղջիկս , ըսաւ Տ.  
Մկրտիչ հանդիսական ձայնով մը :

Ձեռքպագը կատարուեցաւ :

—Լուցիկ մը տուր նայիմ , աղջիկս :

Լուցիկն եկաւ :

—Ինձի խահուէ մը ապսպրէ , աղջիկս . . .

սանկ գիտես ա՛ , շաքարը քիչ , աղէկ խայնա-  
միչ եղած , թո՛ղ Մարիամը եփէ , Աւետիսին եւ-  
փածը չեմ կրնար կոր խմել :

Սպասուհին որ դրան մէջ կը տնտնար դիտ-  
մամբ՝ աղէկ լուրը հասկնալու , ստիպուեցաւ  
մեկնիլ խահուէի պատրաստութեան համար :

—Աղջի՛կս , սանկ քովս եկուր նստէ նայիմ ,  
շարունակեց Տ. Մկրտիչ :

—Ամա՛ն , տէր հայր , սա բարի լուրդ ըսէ ,  
հիմա պիտի ձաթիմ , գոչեց տիկին կերմերեան ,  
որուն համբերութիւնը կը սպառէր տաներէցին  
ընթացքէն :

—Ձեզի խօսք մը ունիմ , սկսաւ Տ. Մկրտիչ ,  
բայց չըլլայ թէ վերջնականապէս ամէն բան  
չլրացած չկարգադրուած , դուրս ելլայ հա՛ . . .

Այս խորհրդաւոր ներածութիւնը կրկնա-  
պատկեց երկու ունկընչիւրներու ուշադրու-  
թիւնը , որոնք աչք ու ականջ կարած կախուե-  
ցան Տ. Մկրտիչի շրթունքներէն :

—Ես չէի՞ ըսեր որ Սաթենիկա ե՛ս պիտի  
կարգեմ , առաջ տարաւ տէրտէրը յաղթականօ-  
րէն ձայնը բարձրացնելով եւ աղջկան ձեռքը  
իր ձեռքերուն մէջ առնելով :

Յետոյ , պահ մը Սաթենիկի ձեռքերը հայրա-  
բար շփելէ ետքը , խօսքը առաջ տարաւ .

—Անոր անանկ փեսայ մը գտայ որ խուն-  
կով մոմով զտնուելիք բան չէ . հարո՛ւստ , երի-  
տասա՛րդ , ուսումնակա՛ն , պարկե՛շտ , խոհե՛մ  
. . . ամէն յատկութիւնները վրան կան , ու ասկէ  
զատ , աղնուակա՛ն , մեծ ընտանիքի զաւակ . . .

Մայր ու աղջիկ , քիչ մը շփոթած , իրարու  
նայեցան :

—Ի՞նչ կայ , ինչո՞ւ ատանկ իրարու կը նա-  
յիք , հարցուց տաներէցը որ նշմարած էր նայ-  
ւածքներու փոխանակութիւնը :

—Ձէ՛ , բան չկայ , պատասխանեց Թագուկ  
հանրմ , միայն թէ ե՞րբ եկար գեղէն . . .

—Երէկ առտու :

—Հա՛ , անոր համար չես իմացեր որ Սաթե-  
նիկա նշանեցինք . . . ներս մտար նէ՛ կարծեցի  
որ իմացեր ու աչքի լոյսի եկեր ես :

—Նշանեցի՞ք , գոչեց տէրտէրը կատարեալ  
զարմացումով մը , ե՞րբ , որո՞ւ , ինչպէ՞ս .

—Շնորհքով մարդ է , դուն ալ իմանաս նէ  
չո՞հ կըլլաս . . . Սարըպըլքեան Մարտիրոս է-  
ֆէնտիին հետ :

—Սա՛ Սարըպըյըքեանը , ըսաւ Տ.Մկրտիչ արհամարհանքի հոյտկապ շեշտով մը , սա Շապին-Քարահիսարցի պաղ հէրիֆը որուն մայրը մեռաւ տէ . . . ամա՛ն Թագուհի հանրմ, այսչափ ատեն սպասցուցիր աղջիկդ որ ատանկ մարդո՞ւ մը տաս :

—Շատ շնորհքով մարդ է . . . ամենքը գովեստը կ'ընեն կոր :

—Կարճ խօսք մը ըսե՞մ, գոչեց ատէրէրը կրտրուկ կերպով , սա նշանտուքը ետ պիտի ըլլայ . կամ գոնէ իմ առաջարկած փեսացուս մէյ մը կը տեսնաք , չհաւնիք նէ , այն ատեն որու կ'ուզէք տուէք աղջիկնիդ . . . ես ձեռքերս կը լուամ, կ'ելլամ մէջէն . բայց խիղճս հանդարտ կ'ըլլայ . . . արիւն ձեր թիլուխ ձեր :

—Է՛յ , ես չեմ խառնուիր , կ'ուզես նէ հօրը հետ խօսէ , պատասխանեց Թագուհի հանրմ որ գրաց թէ ինքն իր զլխէն չպիտի կրնար ազատիլ ատներէցին ձեռքէն :

Յետոյ աղջկանը դառնալով՝

—Սաթենիկ , դուն ալ բան մը չըսե՞ս :

—Ի՞նչ ըսեմ , պատասխանեց աղջիկը , գեռ ատէր հօրը մարդուն ի՛նչ գործ ընելը , ի՛նչ վիճակ ունենալը չհասկցանք որ անոր համեմատ կարծիք յայտնեմ :

Տ.Մկրտիչ որ իր ծուխերը հիացական շուարման մը մէջ ձգելու միջոցները պէտք եղած ատեն գործածելու մասին վարպետ էր , ոտքի ելաւ , մօտեցաւ սեղանին վրայ գրուած լամպային , բռնեց , ողին մէջ բարձրացուց զայն ու ապակիին մէջէն երեւցած փեթրօլը ցոյց տալով գոչեց .

—Սա՛ կը տեսնա՞ք կոր . իչաէ ան մարդունն է ասիկա :

Յետոյ տիկին Թագուհին դարձաւ նոյն դերասանական ձեւով եւ հարցուց .

—Քովի սենեակը լամպա ունի՞ք :

Եւ ատանց պատասխանին սպասելու շարունակեց ,

—Անոր մէջի փեթրօլն ալ ա՛ն մարդունն է , դրացիին լամբաներուն փեթրօլն ալ ա՛ն մարդունն է : Թագուհի հանրմ, հինգչարթի որ մը Ղալաթայի ժամը ուխտի չե՞ս գացած :

Թագուհի հանրմ , որ ասի ի բերան տաներէցին խօսքերը մտիկ կ'ընէր , ձայն չհանեց :

—Քեզի կ'ըսեմ կոր , չե՞ս գացած , գոչեց ատէրէրը :

—Է՛յ , հա՛ , մեղա՛յ , գացած եմ , ըսաւ խեճը , կէս շուարած կէս ծիծաղկոտ :

—Մալթը սոխազիէն անցա՞ծ ես :

—Այո՛ :

—Իչաէ հո՛ն , պախալներուն քով շարուած ըլլօր փեթրօլի սնտուկները ա՛ն մարդունն է :

—Ըսել է ատ ըսածդ մարդդ կադ կը ծախէ :

—Կա՞ղ կը ծախէ , բորբոքեցաւ նորէն Տէր Մկրտիչ , կազ ծախողը ձեր Սարըպըյըքեան Մարտիրոսն է , ասիկա նաւթի հորատէ՛ր է , հորատէ՛ր . . .

Սպասուհին սուրճը թերած էր : Քահանան նստաւ եւ լոռթեամբ խմեց որպէս զի ատեն տայ մայր ու աղջկան նաւթի հորատէրը մարսելու :

Տ.Մկրտիչ աւելի հանդարտած , երկար մեկնութիւն մը տալ սկսաւ նաւթային արտագրութեան վրայ , յիշեց շատ մը ժրլիտնատէրներու անուններ , բացատրեց թէ ինչպէս գետնէն հարստութիւնը կը բղխէր , թէ ինչպէս մարդիկ քիչ ժամանակի մէջ միլիոնատէր դարձած էին հոն , եւն :

—Ըսել է Ռուսաստանցի հայ մըն է այդ երիտասարդը , ըսաւ Թագուհի հանրմ որ ա՛լ ըսկըսած էր շատ ուշագիւր մտիկ ընել տաներէցին :

—Հարկաւ , հին Ղարաբաղի իշխանական ցեղէ մարդ է :

—Շատ հոր ունի՞ եղեր :

—Հապա՛ , տասը տասերկու հատ :

—Միայն թէ անոնց հայերէնը թօհաֆ մընէ , բէք չի հասկցուիր :

—Ամա՛ն մայրիկ , դուն ալ ի՛նչ պարապ խօսքեր կ'ընես , պատասխանեց Սաթենիկ որ արդէն սկսած էր վառուիլ տասերկու հորերու քարիւղովը , շատ ալ աղէկ կը հասկցուի . իրաւ անոնց հնչմունքը մերինէն տարբեր է . բայց աւելի անուշ է . ես՝ չիտակը՝ շատ կ'ախորժիմ , մուղիքայի պէս կուզայ ականջին . . . խօսած ատեննին կարծես թէ կ'երգեն կոր :

Ո՛վ նաւթի հորեր , նաւթի հորեր . . .

Տէր հայրը քաջալերեալ իր փեսացուին գտած ընդունելութենէն , ա՛լ աւելի մտնրամասնութիւններու մտաւ անոր նիւթական վիճակին մասին .

—Աղէկ մը չեմ գիտեր , բայց լսած իս նայելով , ամսական հինգ հազար բուպլի եկամուտ ունի եղեր . . . բուպլին սեպէ քի մեր մեծխտիէն ըսել է :

—Քա Սաթենիկ , ոսկիի դարձուր քի խելքս հասնի , ըսաւ Թագուհի հանրմ .

Յետոյ տաներէցին դառնալով .

—Երէկ ֆրափայի անուշ մը չիկեցի : Բէք խրեախ բան եղաւ , մէյմէկ դգալ ուտենք :

— Հաղար ոսկի կ'ընէ , պատասխանեց Սաթենիկ :

— Անանկ է նէ . հայտէ գնա՛ սա անուշը ձեռքովդ բեր :

Երբ աղջիկը դուրս ելաւ , Թագուկ հանրմ շարունակեց :

— Շիտակը կ'ուզես նէ՛ տէր հայր՝ ատ Սարըպըրքեանը բնաւ սիրտս չբռնեց . բայց ի՛նչ ընեմ , Մարկոս էֆէնտին «հա» ըսաւ նէ «չէ» չըսի : Հիմակ քանի որ ատանկ շնորհքով մէկը կայ , նշանը ետ կ'ընենք կը լիննայ կ'երթայ . . . արդէն ի՛նչ տուած է որ , մատնի մը իլէ պիլէղիկ . անոր համար ալ բերան բանայ նէ՛ ձեռքը կուտանք կը ճամբենք . կոողը տեանայ իրեն ալ , բերած հէտիէներուն ալ երեսը . . . վո՛ւյ , պա՛ղ մարգը , մտթուծի կը նմանի :

Անուշէն յետոյ ճաշի ատենը եկաւ եւ Թագուկ հանրմ հազար աղաչանքներով ստիպեց քահանան որ միասին ճաշեն : Մեկնելու պահուն մայր եւ աղջիկ խօսք անին իրմէ որ հետեւեալ առտու կանուխ գայ եւ Մարկոս էֆէնտիի հետ տեսակցի վերջնական որոշումի մը յանգելու համար , թէեւ իրենք նոյն իրիկուն իսկ խնդիրը պիտի բանային :

Տ. Մկրտիչ իր յաջողութենէն գինովցած փողոց ելաւ ու զէպի տուն ուղղուեցաւ յազթակահօրէն անձրիւնոցը ձօճելով :

— Այս անգամ քու հախէտ կուգամ , կ'ըսէր : խօսքը մտքէն կուլեանին ուղղելով :

Քահանային ծրագիրը , ինչպէս տեսանք , շատ պարզ էր . երեսակայական փայլուն փետացուի մը յոյսովը ետ ընել տալ կուլեանի ձեռքով կարգադրուած նշանադրը :

Մայր ու աղջիկ , շուրջամ իր պատմութենէն , անդէն տրամադիր էին անմիջապէս ճամբու դնելու Մարտիրոս ազան . սակայն Մարկոս էֆէնտին կար տահաւին եւ Տ. Մկրտիչ կը դար որ անոնց չափ դիւրանաւան պիտի չըլլար , աւելի դրական , աւելի շօշափելի մանրամասնութիւններ պիտի պահանջէր :

Տ. Մկրտիչի ուրսիտութիւնը կամայ կամաց տեղի տուաւ հետեւեալ օրը կերմնբեանի հետ ունենալիք տեսակցութեան պատճառած մրասանդութեանց անջեւ եւ երբ տուն հասաւ գրեթէ զղջացած էր քինախնդրութեան աղղեցութեան տակ սարքած դաւին համար :

Այսուհանդերձ ա՛լ ետ չկարենալ դառնալու չափ առաջ մղած էր գործը եւ հետեւեալ առտու նոսրացուեցաւ կերմնբեանեանց տան ճամբան ձեռք աննկու , Մարկոս էֆէնտիի հետ ու-

նենալիք տեսակցութենէն ծագելիք դժուարութիւններու մասին իր ծրագիրը կազմելէ ետքը :

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

(Շարունակելի)



ԳՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

ԱՆՁՆԱԿԱՆ ԿՈՒԻ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԻ ՊԱՅԲԱՐ. —

Վերջերս բազմաթիւ նամակներ ընդունեցայ «Անահիտ»ի «Գրքեր եւ թերթեր» բաժնին նըկատմամբ : Թղթակիցներէս ոմանք կը գանգատին , դիտել տալով թէ «անձնական պատիկ խնդիրներու վրայ վէճերը «Անահիտ»ին անարժան են» . ուրիշներ գոհունակութիւն կը յայտնեն այն պայքարին համար գոր կը մղեմ՝ այդ բաժնին մէջ՝ մեր հանրային բարքերուն ցածութեանը դէմ : Այստեղ կ'ուզեմ օրինակել այդ նամակներէն երկուքը , մին գրուած կովկասցի հրապարակադրէ մը , միւսը եգիպտացահ տաճկահայ գրագէտէ մը , եւ որոնց մին կը խրտացընէ գծգոհներուն մտածումը եւ երկրորդը խրախուսողներուն զգացումը :

«Աշխատեցէք , կ'ըսէ ուսանայ բարեկամս , քիչ անուններ տալ , մանաւանդ որ «Անահիտ»ը ամսագիր է : Ամսագիրը նայում է առօրեայ դէպքերի վրայ աւելի մեծ հեռաւորութիւնից քան օրական թերթը . ուստի մանր մունր դէպքերը եւ անձնաւորութիւնները չպիտի լինին իր բովանդակութեան առարկայ :»

Իսկ թրքահայ գրագէտը կ'ըսէ՝ «Ամէն անգամ որ մեր invétéréցած , գձուձ , դռնիկ բարքերուն դէմ կը գրես , սրտէս կը խօսիս . courage պէտք է այդ պայքարը մղելու համար . բայց ամենէն օգտակար պայքարն է ատ» :

Ես կը կարծեմ թէ թրքահայ գրագէտն է որ իրաւունք ունի : Եթէ արտասահմանի հայ լրագիրները մեր բարքերուն քննադատութիւնը լրջօրէն , անաչառօրէն ու յարատեւարար կատալէին , պիտի ըմբռնէի որ հանդէսի մը պէտք չմտար այդ գործը կատարելու , գո՛րծ որ իրօք հանդէսի մը շրջանակին չի պատկանիր . բայց ոչ մէկ լրագիր այդ գործը չի կատարեր կոր գոհացուցիչ կերպով , ընդհակառակն՝ այդ լրագիրներէն շատերը աւելի քննադատուելու արժանի են քան քննադատուելու կարող : Ազգի մը մէջ , ուր ամէն մէկ պէտքին գոհաւ

ցում տուող լիակատար ուժեր կը պակասին, բնական է եւ նոյն իսկ անհրաժեշտ է որ անձ մը, հաստատութիւն մը մէկ քանի գործ միանգամայն ստանձնէ: Կը մնայ գիտնալ թէ «Անահիտ»ը, իր այս բաժնին մէջ, կարող կ'ըլլա՞յ կոր այդ դերը գիտակցօրէն ու պատշաճօրէն կատարել: Ատոր պատասխանը ես չեմ որ պիտի տամ բնականաբար, բայց ա՛յս հարցման է միայն որ պէտք է պատասխանեն:

Ասկից զատ ես կը մտածեմ թէ սխալ է «պըզտիկ խնդիրներ, անձնական խնդիրներ» նկատել այնպիսի հարցեր որոնք, ի՛րաւ, անձի մը կամ անջատ գէպքի մը շուրջը կը դառնան եւ շատ անգամ ճզճիմ ու աննշան իրողութիւններէ կը բղխին, բայց որոնք ամենամեծ նշանակութիւն կը ստանան՝ մեր հանրային բարոյականին բարձրացմանը նախանձախնդիր ո եւ է անձի համար, երբ մտածենք որ այդ ինքնին չնչին գէպքը մեր սովորական բարքերուն մէկ ընդհանուր տիրական գիծը կը ներկայացնէ եւ թէ այդ ճզճիմ արարքը գործողները յաճախ մեր մէջ կարեւոր ու նշանաւոր համարուած անձնաւորութիւններէն են: Եւ արդէն ինչո՞ւ «անձնական խնդիր» անուանել անձի մը այս կամ այն «հանրային արարքին առիթով», յայտնուած գատաստանը: «Անձնական» պէտք է անուանել միայն այն վէճերը ուր գրողը, առանց ո եւ է հանրային տեսակէտ ի նկատի ունենալու, անձի մը անհատական վարկին վնասելու միակ գիտումովը, անոր սոսկական կեանքը հրապարակի վրայ կը քաշկըտէ, եւ այդ գձուձ գործին մէջ ի կիր կ'արկանէ խեղաթիւրումի, զրպարտութեան, ստութեան աղտոտ գէնքերը: Ասկից դուրս, երբ հրապարակագիրը, անձի մը թերութիւնները նշանակելով՝ ձգտում ունի այդ անձին մէջէն ամբողջ շարք մը փպարներու հոգեբանութիւնը, բարքերու ամբողջ անկիւնի մը վերլուծումը ներկայացնել, առողջ եւ արգաւանդ գործ մը կատարած կ'ըլլայ: Ու հոս պէտք է պատասխանեմ որիչ գիտողութեան մըն ալ որով ոմանք, — եւ անոնց մէջ «Շաւիղ»ը — գատապարտելի կը նկատեն կծու եւ բիրտ բառերու գործածումը մեր լրագիրներուն մէջ եւ անոնց «Անահիտ»ին մէջ երեւումը զարմանալի կը գանեն: Անշուշտ պէտք է զգուշանալ կոպիտ ու կծու բառերու գործածութիւնը սիրելի. գոեհիկ նկարագիրներու յատուկ գիծ մըն է աս: Բայց մարդկային բոլոր բառերը, բիրտներն ինչպէս վայելուչները, եղած են գործածուելու համար: «Ամէն գաղափարի համար միակ բառ մը կայ որ զայն կարող է արտայայտել, կ'ըսէր Ֆլոպէն. պէտք է այդ բառը գանել եւ զայն գործածել»: Եւ Պուալօ: որ «Պարնասի օրէնագիր» եւ «վայելուչ լեզուի գատաւոր» անուանուեցաւ,

կը գրէ իր երգիծանքներէն մէկուն մէջ՝ «Կատու կատու կ'անուանեմ եւ Քոլէն՝ սրիկայ:»

Երբ մարդ Բէչեանի մը հանդէպ կը գտնուի, ուրիշ բառ չկայ զայն որակող բաց ի «պախալը»էն, Գայֆահանի մը հանդէպ՝ բաց ի «խաչապող»էն, Պարթեւեանի մը հանդէպ՝ բաց ի ի «քոնսիերժէն»: Հոս, բառը այլ եւս «բիրտ» չէ, անհրաժեշտ որակական մըն է: Պէտք է որ անշուշտ, այդպիսի բառեր գործածած ասին մարդ կարենայ ապացուցանել անոնց կիրարկումին ճշգրութիւնը. եւ «Անահիտ»ի մէջ երբեք այդ կարգի բառ մը չէ գործածուած, առանց արդարացուցիչ փաստերու:

Այս փոքրիկ բացատրութիւնը տալէ յետոյ բարեկամներուս, ես պիտի շարունակեմ ուրեմն, ամէն անգամ որ առիթը ներկայանայ, այս ապերախտ, տաղտկացուցիչ, շատ քիչ քնարերգական բայց վերջին ծայր օգտակար դերը կատարել, գեր որուն համար իրօք «քաջութիւն» պէտք է, գրեթէ՛ պիտի համարձակիմ ըսել՝ Աւգրիասի ախտները մաքրող Հերակլէսին քաջութիւնը:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ. «ԽԱՐԱԶԱՆ». — Այս բանֆլէն, կը գրէի վերջին քրոնիկիս մէջ, փորձ մըն է զոր Պարթեւեան կատարած է իմ դէմքս իր «խաթէռիք քոնսիերժի» հոգիին մէջէն տեսնելու: Եւ իրօք՝ ամէն բան վարէն տեսնող, ամէն բան վարնոց մեկնութիւնով մը ըմբռնելու գատապարտուած, իրերն ու մարդերը դրան ծակերէ, պատուհանի ետեւներէ նախանձով ու գոեհիկութեամբ աղօտացած նայուածքով մը տեսնող ցած արարածն է, որ հոս կը յայտնուի, — «քոնսիերժ»ը, այսինքն ամենէն գձուձը, ամենէն տխմարը եւ ամենէն մոլեղիներ քաւրաւորներուն: Հոս, այդ սխալ տիպարին զազրանքը բազմապատկուած ու սրուած է «խաթեռի»ի ակնյայտնի ծանրացումով մը: Սովորական «քոնսիերժ» մը տափակ ու ծիծաղելի պիտի ըլլար լոկ: Պարթեւեանի պարագային մէջ, ցածութիւնը ցաւատանջ, խելայիդ դաւարումներ ունի զոր անկարելի է բացատրել առանց ախտաբանական քննութեան մը գիմնելու: Եւ այս պատճառով է որ անհնար է այդ մաղձով կրծուած, կարծես տաժանելի մղձաւանջի մը մէջ ձափտուած էջերը թղթատել՝ առանց գթութեան զգացումի մը որ անխուսափելի կերպով կուգայ մեղմացնել պժգանքը զոր այդ գետնայարկի գրականութիւնը կը ներշնչէ առաջին տողէն իսկ: Իրեանցէք, օրինակի համար՝ այն ամբողջ լուսնոտի տապալակումները, այն բոլոր կատաղութիւնէն լորձնոտած բերնէ մը ժայթքող հայհոյանքները, որոնցմով խեղճ աղան կը ճզնի ապացուցանել թէ... «չ'ատեր

զիս, — եւ դժուարութիւնս պիտի չունենաք ըմբռնելու որ ցաւագարի մը զիմացը կը գտնուելիք, — «ցաւագար» բառը գործածելով իր զուտ բժշկական խմատովը :

Քանի մը տարի առաջ Վիլիամ Քլիֆթը յիմարանոցին մէջ Տր. Քօլօլեանին հետ պտոյտ մը ըրած միջոցիս, կին մը ահասյ, պարտէզին մէկ անկիւնը նստած. իրարու կարուած գոյնը գոյն քուրջերու շեղջակոյտ մը հանդիսաւորապէս կրելով իբրեւ վերարկու, ուսերն ի վար թափթփած մազերը այլանդակ լաթի կտորի մը մէջ փաթթուած, մասները թիթեղէ մատնիներով ծանրաբեռն ու ձեռքը կոտորած ողբալի հովանոց մը, վեհաշուք ձեռով մը բազմեր էր փայտէ աթոռին վրայ, եւ անշարժ ու լուռ, գլուխը բարձր բռնած, զայրացկոտ ու տիրական նայուածքներ կը մխէր պարապին մէջ : «Հետաքրքրաշարժ մեծամոլ մըն է, բացատրեց Քօլօլեան, ինքզինքը Պուլկարիոյ թագուհին կը կարծէ, այս յիմարանոցն իր պալատը կը նկատէ, մեզ ամենքս իր ծառաները կամ հպատակները կը համարի. կ'երեւակայէ որ արքայական հանդերձներով շքուած է, եւ ամէն վայրկեան հրամաններ կ'արձակէ» : «Ո՛վ էք, պարոն ըսաւ ինծի կինը՝ արհամարհոտ ու հրամայական շեշտով մը : Երբ իմացաւ զըրական մարդ մը ըլլալս : » կը համակիրիմ, աւելցուց, զրչի մարդոց. վազը պալատս եկէք, ձեզի շքանշան մը պիտի շնորհեմ . . . » : Եւ յանկարծ Քօլօլեանը նշմայելով, «Ո՛ւհ, ըրաւ, ցասկոտ նողկանքի մեխով մը. կ'ապեմ չժխչկները» : Ու մտը սպառնալիկն ցցելով զէս կ'ի Քօլօլեանը, «Հետագէ՛ք անմիջապէս, հրամայեց, ապա թէ ոչ ձեզ գլխատել կուտամ այս իրիկուն իսկ . . . » : Խեղճ կինը համոզուած էր որ մարչկային բոլոր կեանքերն իր մատին մէկ շարժումէն կախուած էին . . .

Պարթեւեանին տեսարակը աչքէ անցուցած ատենս, Վիլիամ Քլիֆթը խենթ յիշեցի. նմանութեան կէտերը երկու հիւանդներուն միջեւ բազմաթիւ են — այն միակ տարբերութեամբ որ Պուլկարիոյ թագուհին իր ցաւապին ինկածութեանը մէջ տեսակ մը հանգարա վեհութիւն, տեսակ մը սրտաշարժ ազնուութիւն ունէր որմէ զուրկ է «Սարազան»ին պայադի ու շողիքոտ խելագարը : Անոր պէս սակայն, աս ալ անգրգռելի հաւատք մը ունի իր ամենազօրութեանը վրայ. իր գարշահոտ ցնցոտիներով փաթթուած հոգին ծիրանիներով փառազգեստ կ'երեւակայէ. բարեկեդանի աւելը զոր ձեռքը բռնէր է, զիւցաղնեղական խարաղանի պէս կերեւայ իր աչքին. ու համոզուած է որ իր մէկ մատին այս կամ այն ուղղութեամբ շարժելէն կախում ունի այսինչին անմահութեան

մէջ բարձրացումը, կամ այնինչին յաւերժական մահացումը :

Կարելի չէ անշուշտ ո եւ է լուրջ ուշադրութիւն ընծայել դատումներուն զոր կը պարունակէ այսպիսի մտաւոր վիճակի մը մէջ յղացուած գիրք մը, քանի որ այդ դատումները կը հիմնուին իրսղութիւններու վրայ որոնք այնքան ճշմարիտ են որքան լուսնին երկնքէն իջնելու, Մուհամմէտին շապիկին մէկ կողմէն մտնելու եւ միւս կողմէն զուրս նլլելու հինաւորց (ու գոնէ աւելի սիրուն) հեքեաթը, եւ կամ եթէ զիպուածով ճշմարտութեան հիւլէ մը պարունակեն՝ զայն կը ներկայացնեն այնքան հաւատարմութեամբ որքան ճահիճ մը իր վրայ ծոռոզ դէմք մը կը պատկերացնէ : Ուշադրութեան արժանին՝ այդ գրքին մէջ, մտաւոր վիճակն է, եւ ո՛չ թէ անոր արդիւնքը : Մտաւոր վիճակին վրայ ըսի ինչ որ կը խորհիմ : Արդիւնքը ուրիշ զգացում չի կրնար ներշնչել բայց եթէ թանձր պոգանք մը. — եւ ցաւ :

Ցաւ, որովհետեւ այս «Սարազան»ի ձգնող հրէշը միանգամայն հեղինակն է «Սայքո»ին : Այդ մտաութիւնն արտադրող անձը, բնութեան մէկ խորհրդաւոր կատակովը, օժտուած է գրական ամուր ձիրքերով, զոր ես առաջինն եմ գնահատող, հակառակ իր մէջ քննադատական առողջ ու լայն ոգիի մը պակասին ու հակառակ որ այդ ձիրքերը յաճախ ուղղակի կ'ազգուին իր նկարագրին նխաութեանն եւ իր գրականութիւնն իսկ գոհելի, տգեղ, հասարակ կը կացուցանեն : Ու չեմ գիտեր բան մը որ աւելի տխուր ըլլայ քան այս հակասութիւնը նկարագրին եւ տաղանդին միջեւ : Եւ ոչ ոք այդ տիրութիւնը կրնայ զգալ ինծի չափ, որովհետեւ ամբողջ վեց տարի այդ տղան իւրեւ կըրտեսեր զբայ մը սիրած եմ, եւ իր մտաւոր ու բարոյական դարգացմանը համար ըրած եմ ամէն ինչ սր մարդ մը կրնայ ընել ուրիշի մը համար : Թանցանքը իմս չէ եթէ ձիրքս միւսիս իր գրական զարգացմանը մէջ յաջողած են եւ բարոյական զարգացմանը մէջ բացարձակապէս ձախողած : Ի՞նչպէս կրնայի յաղթել ընտանի կուտ օրէնքներու, որոնք զինքը նախասահմանած էին անբարոյականէ աւելի զէջ բան մը բարոյականազուրկ մը (amoral) ըլլալու : Իր տիպարին այդ հակասութիւնը արտասովոր բան մը չէ անշուշտ, տեսնուած են խենթեր որ իրենց մտապայծառութեան պահերուն մէջ գեղարուեստական կարողութիւններ ցոյց առած են, կամ մեծ արուեստագէտներ որոնք բարոյական զգացումէ զուրկ են եղած : Արտասովոր չէ պարագան, բայց՝ կը կրկնեմ՝ խորապէս ցաւալի. ցաւալի մանաւանդ անով որ յիմա-

րութիւնը հոս այն ազնիւ ու գեղեցիկ մտա-  
մտլարութիւններէն չէ որոնք յաճախ շատ մը  
տափափօրէն հաւասարակշիւմտայնութիւննե-  
րէ աւելի շահեկան են, — բարութիւնը, վեհ-  
անձնութիւնը, անձնութիւնը հիւանդա-  
գին ծայրայեղութեան մը հասցնող խենթեր  
կան որոնք պաշտելի են, — հոս, ախար՝ գը-  
ձուձին ու լղրձուկին մէջ խելայեղ մխրձուձի  
այլանդակ մղում մըն է լոկ: Այս բոլորը պիտի  
հասկնան միայն անոնք որ զիս մտանց ծանչ-  
նալով եւ գիտնալով այն յարաբերութիւննե-  
րը զոր ունեցած եմ Պարթեւեանին հետ՝ պիտի  
կարգան այդ անձուհի տետրակը: Բայց արդէն  
այն եղանակը որով Պարթեւեան իմ ամբողջ  
հանրային գործունէութեանս վրայ խօսած է,  
կը բաւէ այս ըսածներուս ճշգրութիւնը  
ըմբռնել տալու: Եւ ի պատիւ հայ ազգին  
պէտք է հաստատել թէ այդ բանֆլէն ար-  
համարհանքի ու զղուանքի միահամուռ արտա-  
յայտութեամբ մը ընդունուեցաւ ամենէն, նոյն  
իսկ հակառակորդներէս (եթէ ուրիշ կերպ ըլ-  
լար, պէտք էր վերջնապէս յուսահատել այս  
ազգէն):

Ասկից ուրիշ ոչինչ ըսելու պէտք պիտի ու-  
նենայի այդ ինքնին աննշան տետրակին մա-  
սին, եթէ այդ տետրակին հրատարակումին, —  
ինչպէս եւ շատ հաւանականաբար յղացումին  
մէջ — Բաշալեանին անուղղակի կամ ուղղակի  
մասնակցութիւնը գոյութիւն չունենար:

«Անահիտ»ի ընթերցողները գիտեն այն երկ-  
զիմի վարմունքը զոր Բաշալեան ընդհանր ինձի  
նկատմամբ՝ իրեն ի պատիւ սարքուած երե-  
կոյթին առթիւ: Միեւնոյն Բաշալեանը որ այդ  
երեկոյթէն անմիջապէս ետքը ինձի յայտա-  
բարեց թէ Պարթեւեանին ընթացքը իրեն ցաւ  
պատճառած էր եւ թէ շատ խիստ կերպով անոր  
պիտի յայտնէր իր դժգոհութիւնը, ինձի այդ յայ-  
տարարութիւնն ընելէ վայրկեան մը յետոյ գացեր  
է Պարթեւեանին իր երախտագիտութիւնն ու  
գոհունակութիւնը յայտնել (այս իրողութիւնը  
բացարձակապէս վաւերական է): Եւ այս բան-  
ֆլէին հրատարակումէն յետոյ, Բաշալեան անոր  
մասին ոչ մէկ կերպով դժգոհութիւն չէ յայտ-  
նած, ոչ բերանացի, ոչ հրապարակաւ (\*):  
Հոս, ինչիւրը շատ աւելի ծանր հանցամանք մը  
կը ստանայ, որովհետեւ Բաշալեան անգիտակից  
մը չէ Պարթեւեանին պէս. իր վարմունքը, —  
որ ինձի բաւական թուեցաւ որպէսզի վերջա-  
ցած նկատեմ բարեկամութիւն մը որ կեան-  
քիս ամենէն թանկագիններէն մին եղած է, —  
կ'արժե որ լուրջ քննութեան մը ենթաբ-

(\*) Հստղներ իսկ կան թէ Բաշալեան բա-  
րոյապէս ու նիւթապէս խորխուսած է բան-  
ֆլէին հրատարակումը:

կուի: Երկու երեք տարիէ ի վեր, բարեկամ-  
ներէս ոմանք կը ջանային զիս տարհամոզել  
Բաշալեանը ազնիւ հոգի մը ու շիտակ բարե-  
կամ մը նկատելու յամառումէս, եւ կը պնդէին  
թէ անոր մէջ «քապոթէն» մը կար թաքուն,  
չէի ուզած հաւատալ, ու զինքը մոլեգնաբար  
պաշտպանած էի: Հիմա ստիպուած եմ խոստո-  
վանիլ որ ես եմ եղեր սխալ տեսնողը:

Այսպիսի փափուկ ու կնճոտ պարագան  
ըու մէջ է որ մարդ մը իր. «բարեկամ»ի եւ  
«ճենթլմէն»ի նկարագիրը որոշապէս ի յայտ  
պէտք է բերէ: Այսպիսի խնդիրներու մէջ,  
չէչոք մնալը վատութիւն է, իսկ գաղտնի չի-  
պով յանցաւորին աջակցելը ցածութիւն մըն  
է՝ որուն կարելի չէ ներել:

«Վաղուան Չայն»էն մինչեւ այս բանֆլէն,  
Պարթեւեանի ընթացքը իմ նկատմամբ՝ շատ  
նշանակալից երեւոյթ մըն էր՝ մեր հանրային  
բարքերուն տեսակէտով, երեւոյթ մը բարու-  
յական մեծ կարեւորութիւն ունեցող, որուն  
հանդէպ Բաշալեան պարտաւոր էր որոշ գէրք  
մը բռնել: Անոնք որ Պարթեւեանին պէս կ'ե-  
րեւակայեն թէ այս խնդրոյն կարեւորութիւն  
տալու մէջ գրական վերաւորում կրող անձի  
մը ծիծաղելի նեղարտութիւնը պէտք է տես-  
նել, ամենէն գարշելի անիրաւութիւնը կը դոր-  
ձեն: Չեմ կարծեր որ ուրիշ հայ գրագէտ ին-  
ձի չափ անտարբերեղած ըլլայ գովեստի եւ  
պարսաւի. ներբողական կամ թշնամական  
գրուածքները որ իմ մասին երեւցած են հայ  
մամուլին մէջ, ամբողջ գրողարան մը կրնան  
լեցընել. եւ սակայն ոչ գրուատիքը զիս շիտ-  
ցուցած է, ոչ պարսաւը զիս թնւլցուցած. առանց  
ականջ կախելու շուրջս լամ աղմուկին — միայն  
անոր շնորհելով երբեմն վաղանցուկ ուշա-  
գրութիւն մը, երբ զայն հանրային տեսակէտով  
մը կարելի էր նկատի առնել, — իմ գործս շա-  
րունակած եմ առանց վայրկեան մը կատե-  
լու, առանց ծամբէս մազի չափ շեղե-  
լու, ես իմ մէջս ամփոփուած եւ ես իմ վրաս  
կըթնամ: Ու երբեք իմ բարեկամական յարա-  
բերութիւններս իմ գրական գործունէութեանս  
մասին յայտնուած դատումներուն նպաստաւոր  
կամ աննպաստ ըլլալէն չեն ազդուած: «Ար-  
շալոյսի Չայներ»ու մասին Արփիարեանի չա-  
րամիտ յղուածը իրեն հետ ունեցած պրական  
եղբայրակցութեան կապերու մէջ ուրիշ փո-  
փոխութիւն յառաջ չբերաւ. այն վարդապետ  
խայթումի էջը զոր Բաշալեան «Հայրենիք»ին  
մէջ հրատարակեց «Թրթուռներ»ու առթիւ,  
արդեւ չեղաւ որ ամենէն մտերմական յարա-  
բերութիւնները շարունակէի Բաշալեանի հետ:  
Չօհրապը երկու երեք անգամ իր «Մասիս»ին  
մէջ իմ գրականութեանս նկատմամբ անախորժ

քաներ բաւ, բայց իմ յարաբերութիւններս իրեն հետ խզեցի, ոչ թէ այդ գրական դատումներուն հետեւանքով, այլ երբ «Հայրենիք»ին հանդէպ ունեցաւ ընթացքը զոր յիշեցի Արփիարեանի մասին ուսումնասիրութեանս մէջ. եւ Զօհրապի հետ կապերս խզեցի այնպիսի ատեն մը երբ դեռ քիչ առաջ «Թուղթի փառք»իս առթիւ «Հայրենիք»ին մէջ հրատարակած էր յօդուած մը որ ամենէն դգուականներէն մէկն է որ իմ մասին գրուած ըլլան:

Ոչ ոք այնքան լաւ գիտէր այս բոլորը որքան Բաշալեան: Եւ ոչ ոք այնքան լաւ ըմբռնել կարող էր թէ Պարթեւեանի պարագային մէջ խնդիրը «գրական» չէր, այլ «բարոյական», միմիայն բարոյական:

Պարթեւեան վեց եօթը տարի շարունակ իմ ամէն օրուան բարեկամս եղած է եւ ամէն վայրկեանի աշակերտս. գորովը զոր ցոյց տուած եմ իրեն, խնամքը զոր տարած եմ իր միտքը ֆրանսական նորաշոյն գրականութեան ու արուեստին ընտելացնելու, շատ քիչերուն շոյջած եմ այնքան յօժարակամ որքան իրեն. եւ եթէ հաճէի այդ բանին զիջանիլ, պիտի բաւէր որ քանի մը տող յիշէի իր այն բազմաթիւ նամակներէն որոնց մէջ, 92ին ինչպէս 97ին, այդ պարտը ինծի յայտնած է խանդաղատանք մը եւ յարգանք մը ինչպէս ոչ մէկուն չէ յայտնած եւ որոնք լիովին կը բացատրեն ու կը ճշդեն տեղը զոր բռնած եմ իր մտաւորական ու բարոյական կեանքին մէջ: Եւ ահա յանկարծ այդ անձը, որ եթէ ոչ երախտագէտ գոնէ քաղաքավար ըլլալ պարտաւոր էր ինծի նկատմամբ, հրատարակեց «Վաղուան ձայն»ին ապուշ ու կոպիտ նախաբանը որ ինծի դէմ կ'ուղղուէր՝ թէպէտ անունս չէր յիշուած. եւ ասի՛ առանց որ ո եւ է միջադէպ անցած ըլլալ մեր միջիւ, առանց որ ո եւ է խըզում տեղի ունեցած ըլլալ լուրջ պատճառով մը: Ըսել չեմ ուզեր թէ իրմէ կը սպասէի որ իր գրական սկզբնաւորութիւնը ինծի ձօնուած դափնակատակի մը հիւսումովը բանար. զիս ճանչցողները գիտեն որ իմ անձնուիրութիւններս միշտ շնորհած եմ առանց ո եւ է փոխարինութիւն սպասելու. նոյն իսկ ինծի նըկատմամբ ապերախտ գտնուող անձերու շարունակած եմ աշակցութիւնս՝ երբ նորէն ինծի գիծած եւ ծառայութիւններս խնդրած են: Եթէ Պարթեւեան կ'ուզէր բացատրել իր գեղեցկագիտական ուղղութեան իմինէս ունեցած տարբերութիւնը, կ'ընար այդ բանը ընել լուրջ եւ բարեկիրթ ուսումնասիրութեամբ մը, բացէ ի բաց անուանելով զիս եւ խնդիրը գնելով զուտ գեղեցկագիտական հողին վրայ. ասի շատ բնական պիտի գտնէի, ու ոչ մէկ

կերպով պիտի չվիրաւորուէի ատկից: Իմ բոլոր աշակերտներս պիտի վկայեն թէ երբեք զիրենք չեմ պարտաւորած իմ գեղեցկագիտական ուղղութիւնս նոյնութեամբ ընդգրկելու. ընդհակառակն եւ ճգտած եմ իւրաքանչիւր աշակերտիս միտքը զարգացնել իր ուրոյն խառնուածքին համեմատ, ջանալով հանդերձ զայն զօրացնել եւ ընդլայնել ամէն տեսակի գրական հրաշաչերաներու ըմբռնումը իրեն գիւրացնելով: Բայց Պարթեւեան նախընտրեց ատելութեան ժեսթ մը, ապստամբութեան նօթ մը գնել իր նախաբանին մէջ. եւ այդ նախաբանին շուրջը խմբեց մէկ քանի երիտասարդ գրողներ, որոնց մեծ մասը կեդրոնականի մէջ աշակերտած էին ինծի: Ատոնց վարմունքը նոյնքան անազնիւ եւ աւելի անխմաստ երեւցաւ ինծի, երբ այդ պարտնները, որ մինչեւ այդ վայրկեանը ամենէն խորին երախտագիտութիւնը յայտնած էին ինծի այն օգուտին համար զոր քաղած էին իմ գրականութեան դասերէս, յա՛նկարծ այդ գիրքը բռնեցին ինծի հանդէպ՝ առանց իրենց յարաբերութիւնները խզելու ինձմէ եւ յանձն առին մինչեւ իսկ սեղձ ըսելով ինծի թէ այդ նախաբանը առանց իրենց պիտութեանը հրատարակուած էր, մինչդեռ «Վաղուան ձայն»ին երեւումէն շատ առաջ այդ ամբողջ խմբակին համաձայնութեամբը շարադրուած էր ան: Այնքան շիւ որքան անխմաստ այս ընթացքը, անձերու կողմէ զոր մինչեւ այդ վայրկեանը ջերմապէս սիրած էի եւ իբրեւ բացարձակապէս ազնիւ ու շիտակ հողիներ գնահատած, զիս — կը խոստովանիմ — անհունօրէն տխրեցուց: Եւ սակայն այդ ընթացքն ալ գործն էր Պարթեւեանին, որ շատոնց ի վեր իր թունալից ներշնչումը անոնց հողիին մէջ յամոացար ծորած է եղեր ինձմէ գաղտնի, ինծի յայտնուած այդ ամբողջ խանդաղատանքին ետեւէն: Ինքը պատճառ եղաւ ոչ միայն անոնց ինծի նկատմամբ այս դձուձ ընթացքը բռնելուն, այլ անոնց ամբողջ նկարագիրը ապականելով, իր ախտավարակ հողիին ամբողջ փիտութիւնը անոնց փոխանցելով, նոյն իսկ անոնց իրարու հետ ունեցած եղբայրակցական յարաբերութիւնները լղրճեց: Պարթեւեանի այս «բանփլէ»ն քնքուշ քնարերգութիւն մը կարելի է համարել բազմատմամբ այն հայհոյանքի նամակներուն զոր այդ պարտնները իրարու պիտին նետած են այս վերջին մէկ երկու տարուան մէջ՝ իրենց խղճմի օրերու միջոցին: Հակառակ այս ամենուն, «Վաղուան ձայն»ին նախաբանին առթիւ ոչինչ պատասխանեցի Պարթեւեանին: Այն ատեն միայն պէտք զգացի զինքը յանդիմանել երբ «Հրանդ»ի մասին իր յօդուածին

մէջ անարգ կասկածանքներ սողոսկեցուց Արփիարեանի հանդէպ իմ շատ յստակ զիրքիս նըկատմամբ : Նամակս նորէն շատ հանդարտ էր, դառնացած բարեկամի շեշտով մը գրուած. այդ նամակին Պարթեւեան պատասխանեց նամակով մը, ուր ինծի կը խօսէր այնպիսի ցածոգի լեզուով մը, եւ ինծի կը վերագրէր այնպիսի այլանդակ զգացումներ, որ յանկարծ յայտնութիւնը ունեցայ — անակնկալ բայց վերջնականօրէն յստակ յայտնութիւնը — նրեշին որ իր մէջը գոյութիւն ունի : Այո՛, այդ նամակը բաւեց որպէս զի վճռէի «հրէշ» անունը տալ իրեն . «Այդ տղան, ըսի բարեկամներուս՝ որ այդ նամակը կրցաւ ինծի զըրել, ամէն բան ընելու կարող է» : Գուշակութիւնս ճիշդ ելաւ . «Կարթեւեան», որ այն բովանդակ վեց սարուան միջոցին ուր իմ բարեկամութիւնս ունեցաւ, ազնուութեան ձգտումներու եւ անկուծի վտանգին միջեւ տատանած էր՝ առանց վերջնապէս փլչելու, կամ գոնէ իր ակարացումները ինձմէ խնամքով թաքուն պահելու յուսատու ամօթխածութիւնն ունենալով, բարոյական անգիտակցութեան ճիւղ մը գարձաւ՝ ինձմէ զատուելէն յետոյ : Քալֆաեանական մասալներով եւ րոպպի բողոքական բասթէօներէ զբամ շորթով, իր բարեկամներուն պատկանող տպագրական տառեր անոնցմա գաղտնի փախցնելով ծախող, Մանչէսթրի վաճառականի մը դէմ իր գրած մէկ յօդուածը պարունակող «Վաղուան Չայն»-ի մէկ թիւը ասար ոսկիի փոխարէն հրապարակ չհանել հաւանող, — ահա ինչ որ եղաւ Պարթեւեան երբ ինքզինքը ձգեց իր միմիայն բնազդներով վարուած նկարագրին, — եւ դեռ չեմ ուզեր, չեմ կրնար երեւան հանել եղեռնական աղտոտութիւնը իր բուն ներքին կեանքին . . . Եւ այս մարդկային կղկղանքն է որ ազգին բարքերն ազնուացնելու, սրիկաներ ձաղկելու յաւակնութիւնը կ'ունենայ կոր հիմա . . .

Բաշալեան այս բոլորը գիտէր : Իրեն համար պարտք մը կար, — գրական գնահատումներու խնդիրը մէկզի զնելով, — Պարթեւեանին ինծի նկատկամք ունեցած այս ընթացքին հանդէպ մասնաւորապէս եւ անոր բարոյական տնայարին հանդէպ ընդհանրապէս՝ բռնել այն յըստակ ու խիստ վարմունքը զոր ինքզինքը յարգող ո եւ է գրագէտ պարտաւոր էր ունենալ : Բաշալեան այդ բանը չըբուէ ինծի եկաւ, «Չափախըն» մըն է, կարեւորութիւն մի տար» ըսաւ, եւ անոր ալ դնաց — հիմա ապացուցուած բան մըն է աս — համախոհ երեւալ անոր ինծի դէմ ըրածներուն եւ ըսածներուն. եւ այժմ ինծի հաւանական կը թուի որ արգէն շատոնց ի վեր Բաշալեան մութին մէջ զայն քաջալերած ըլլայ

ինծի նկատմամբ անոր բռնած ընթացքին մէջ եւ նոյն իսկ՝ ընհանուր տեսակէտով մը՝ նպաստած ըլլայ այդ արգանատելի ազուն բարոյական անկմանը երագումին՝ իր անհող ու զուարճացող հանգիստեսի ներողամիտ ժպիտովը : «Բաշալեան երեկոյթ»էն յետոյ, տրուած ըլլալով այդ միջադէպին այս բոլոր թուած պարագաներովս մեծապէս ծանրակշիռ դարձող հանգամանքը, Բաշալեան պարտաւոր էր հըրապարակաւ արտայայտել իր զգոհութիւնը իմ դէմս սարքուած այդ գոհեհիկ զաւին համար : Չրբաւ այդ բանը : Բանֆլէին ընթերցումէն յետոյ, թէ Բաշալեան քիչ մը ունենար այն աղտոտական զգացումէն զոր «ղլուելու կարողութիւն» կ'անուանեն. պէտք էր որ այդ տեսարակին թերթերն հեղինակին երեսն ի վեր նետէր եւ այլ եւս ձեռք չզպցնէր այդ հրէշութիւնը արտազրկ, կրցող անձի մը ձեռքին, որմէ այդ պամաններուն մէջ ներբողուած ըլլալով պէտք չէր արդէն որ զինքը փաղաքէր, ինչպէս խոցոտ բերնի համբոյր մը գարշանք միայն կրնայ պատճառել, եւ երբե՛ք հաճոյք : Բաշալեան, որ իմ ամբողջ հեանքս ինծի չափ կը ճանչնայ, ո եւ է մէկէն աւելի գիտէր թէ այդ տեսարակին մէջ ինծի վերագրուած աղտոտութիւնները բոլորն ալ սուտ էին եւ կամ ցնորականօրէն խեղաթիւրուած . գիտէր, գոնէ երկու օրինակ տալու համար, թէ անամօթութիւն մըն է իմ գրական ուսումնասիրութիւններս, որոնք բացարձակապէս ինքնատիպ աչխատութիւններ են, Ֆրանսական հանդէսներու մէջ հրատարակուած յօդուածներէ թարգմանուած կամ քաղուած հոչակել եւ թէ Պարթեւեան, որ գիտէ որ ես պէտք չունիմ բանագողութիւն ընելու, դիմամբ հը ստէ . Բաշալեան գիտէր նաեւ թէ Պարթեւեան կը ստէ եւթադրելով որ Դաշնակցական Կարօին հետ տեսակցութիւն մը ունենալս իմանալով է որ Արփիարեան «Նոր Կեանք»ին մէջ հրատարակած ըլլայ իմ մասին ներբողալից յօդուած մը եւ թէ այդ յօդուածէն զինովնալով «Բաշալեան երեկոյթ»ին առիթով գրածս մեղմացուցած ըլլաւ, մինչդեռ Արփիարեանին ներբողալից յօդուածէն շարաք մը յետոյ էր որ կարօին հետ տեսակցեցայ եւ իրեն — ինչպէս այդ օրերն ինծի հանդիպողս եւ է անձի — յայտնեցի այն աննպաստ կարծիքը զոր ունէի Արփիարեանի մասին, եւ «Նոր Կեանք»-ի այդ յօդուածը բնաւ արգելք չեղաւ որ նոյննորքեանը հրատարակէի «Անահիտ»ին մէջ «Բաշալեան երեկոյթ»ին վրայ գրած յօդուածս : Բաշալեան այն հայ դրագէտն է որուն հետ ամենէն եղբայրական կապերը ունեցած եմ : Գեղեցկագիտական վայելումներու անբաղաւտելի վայրկեաններ միասին անցուցած ենք :

Մեր երկուքին մտքերը, հակառակ կարգ մը ձգտումի եւ ճաշակի տարբերութիւններու, զգացման եւ ըմբռնողութեան սերտ առնչութիւններ ունեցած են: Իր գրական գործը ոչ ոք ինձմէ աւելի գնահատած է: Առանց Պարթեւեանին ծիծաղելի չափազանցութիւնովը՝ զինքը «տիեզերական հասկացողութեամբ զբաղէ» մը նկատելու, տեսնելով հանդերձ ինքնատուութեան պակասը իր գրական յղացումներուն մէջ, միշտ հիացում յայտնած եմ իր ճապուկ, նուրբ ու վայելուչ արձակին, իր տաք ու գորովագին զգայնութեանը, ընկերական ցաւերու ըմբռնումին մէջ իր գրած անկեղծ ու մարդկային շեշտին, այն կարեւոր դերին զոր կատարած է մեր աշխարհաբարին զարգացմանը մէջ եւ այն օգուտին զոր իր ազնիւ ձգտումներ քարոզող հրապարակադրական յօդուածները բերած են մեր հասարակութեան: Երբեք չեմ ըսած թէ «ոսթէ» մըն է, ինչպէս կը հաւատատէ բանֆլէշին «քոնսիւրթ»ը: Ըսած եմ այո՛, թէ «ծոյլ» մըն է, եւ ատի ամենէն առաջ իրեն համ ըսած, որովհետեւ ես կը մտածեմ թէ Բաշալեան կարող է արտադրել շատ աւելի մեծ գրական գործ մը քան ինչ որ արտադրած է, եթէ իր «ժուլիսէօր» իհնդգութիւնները թօթափէ եւ իր բոլոր ուժերն ու խանդերը գրականութեան նուիրէ: Այն Բաշալեանը որուն համար ես ա՛յսպիսի զգացումներ տածած եմ եւ որուն հանդէպ ամենէն պայծառ ու անսուգիւտ վարմունքը ունեցած եմ միշտ, պէտք չէր որ այս յանցապարտ ներողամտութիւնը, այս վատառող ու մեղասակից համակրանքը ցոյց տար Պարթեւեանի պէս «ճարագործի» մը նկատմամբ: Իր այս վարմունքը սրտիս մէջ փլցուց — անդառնալի կերպով — զորովի ամբողջ շէնք մը որ յարգանքի վրայ հիմնուած էր, որովհետեւ ես անոնցմէ եմ որ միշտ կը գնահատեն գրական գեղեցկութիւնը՝ նոյն իսկ երբ անբարոյական կեանքի մը աղբիւսին մէջէն ծլի ան, բայց որոնք գրական գեղեցկութիւն արտադրելու կարողութիւնը երբեք պատճառ մը չեն համարիր ներողամիտ ըլլալու անձի մը բարոյական կեղտոտութեանը, եւ որոնք ամէն գրականութենէ վեր կը դասեն, ամենաբարձր գեղարուեստի առարկան կը նկատեն ազնիւ նկարագիր մը:

ԱՅՆԹԱՊԻ ԻՆՏԻՐՆ ՈՒ ՀԱՅ ՄՍՄՈՒԼԸ . — Պ. Մինաս Չերազ կը հեղինակէ «Բրօ Արմենիա»ն եւ «Անահիտ»ը՝ կարեւորութիւն տուած ըլլալուն համար Ֆրանսական երեք մարտանաւերու Մերսին զրկուելուն իրողութեանը: Պ. Չերազ կը մտածէ թէ իրար անցնելու պատճառ չկար արդէն. «Չարդ մը, կը գրէ, որ կ'ըսեն թէ կը

սարքուէր էնիս փաշայի կողմէ» : Այսպէս «Օնոն»ին հեռագիրը, «Բրօ Արմենիա»յին Այնթապէն, Ատանայէն, Հալէպէն ընդունած եւ հրատարակած խոովեցուցիչ նամակները բնակարեւորութիւնչունին ուրեմն. Պ. Չերազ կը կասկածի Չարդի վտանգին իրականութեանը վրայ, եւ ծիծաղելի կ'ուզէ դարձնել «Բրօ Արմենիա»յի խմբագրութիւնը, եւ այն բազմաթիւ ֆրանսացի անձնաւորութիւնները, որոնք այդ Չարդին առաջին առնելու համար դիմում ըրին Ֆրանսական կառավարութեան: «Բրօ Արմենիա»ն հրատարակեց թէ փետ. 6ին մարտանաւերը Մերսին հասած են, «Անահիտը հրատարակեց թէ Այնթապի կացութեան մասին ֆրանսական կառավարութեան գիմում ըլլուելէն չորս հինգ օր յետոյ որոշուեցաւ նաւերուն ուղարկը, եւ թէ նաւերը ուղղակի Մերսին գացին, (իրողութիւններ որոնք անհերքելի են): Պ. Չերազ չի հաւատար ասոնց, եւ որովհետեւ «Իւնիվէն» թերթը հրատարակիւ է Պէյրութէն փետ. 15 թուականով թղթակցութիւն մը որ այդ նաւատարմին Պէյրութ հանդիպած ըլլալէն կը հետեւցնէ թէ ան զրկուած է Սիւրիոյ կրթիկներուն աջցելութիւն մը տալով Գոնկրէկասիոններուն դէմ քուէարկուող օրէնքին այն կողմերը ձգած յոռի աղդեցութիւնը փարատելու համար. Պ. Չերազ կ'եզրակացնէ թէ նաւատորմը միմիայն այդ նպատակով զրկուած է, եւ գրեթէ չհաւատալու ձեւ կ'առնէ անոնց Մերսին հանդիպած ըլլալուն... եւ առանց վարանելու, կը գրէ թէ «սիւրիական ջուրներուն մէջ երեք ֆրանսական մարտանաւի ներկայութիւնը չի կրնար Տաճիկներն արգիլել Կիլիկիոյ խորը Հայերը Չարդիլէ...» Այն միջոցին ուր Պ. Բոլ Վիոլէ «Բրօ Արմենիա»յին ուղղուած նամակով մը դժուանակութիւն կը յայտնէ հաստատելով որ «Ֆրանսայի մէջ բան մը փոխուած է», թէ հայաստաններուն ջանքերը ի դերեւ չեն ելած, եւ երեք մարտանաւին ուղարկը արդիւնք մը կը համարի, Պ. Չերազ կ'ապահովցնէ Սուլթանը թէ կրնայ հանդարտօրէն Չարդիլ Հայերը՝ առանց կարեւորութիւն ընծայելու ֆրանսական նաւերուն, եւ հաճաք կը զգայ պնդելով թէ հայկական խընդրոյն կացութիւնը ֆրանսայի մէջ այսօր այնքան աննպաստ է որքան Չարդերուն ատենը, այսինքն Հանթոնցին օրովը...

Այդ յօդուածին վրայ թերեւս բառ մը պիտի չգրէի՝ եթէ հայերէն լեզուով գրուած ըլլար: Պ. Չերազ կ'ըսէ թէ այդ յօդուածը գրած է որպէս զի հայ յեղափոխականները, այդ իրողութիւնէն բռնկելով, ազատարեր ցոյցեր չսարքեն նորէն: Եթէ Պ. Չերազ կը կարծէ թէ այսպիսի իրողութիւններու հրապարակումը հայ

յեղափոխականները գրգռելու վնասարեւ հե-  
տեւանքը կ'ունենայ, ինչո՞ւ տասը տարիէ ի  
վեր կը հրապարակէ իր բոլոր դիմումները,  
իւր ստացած նպատակները պատասխաննե-  
րը, ձեռք ձգած արգիւնքները: Ինչո՞ւ Պ.  
Չերազ, որ հիմա անկարեւոր կը նկատէ ե-  
րեք մարտանաւի ուղարկը, ահագին նշանա-  
կութիւն ունեցող դէպքի մը տեղ դրած էր աս-  
կից երկու տարի առաջ Հանութոյն քարտու-  
ղարէն իր վայրկեան մը ընդունուած ըլլալը  
եւ անկից տարտամ ու օդային խոստում մը ի-  
մացած ըլլալը թէ «հայկական նահանգներուն  
մէջ բարենորոգումները քիչ ատենէն պիտի  
գործադրուին»... Այդ յայտարարութիւնը չէ՞ր  
կրնար միթէ գրգռել հայ յեղափոխականները:  
Ու եթէ իր նպատակը միմիայն հայ յեղափո-  
խականները զգուշութեան հրաւիրել է, ինչո՞ւ,  
ինչո՞ւ հայերէն թերթի մը մէջ չի հրատարա-  
կեր այդպիսի յօդուած մը: Ու դառնալով բուն  
խոկ խնդրոյն, ինչո՞ւ վերջապէս Պ. Չերազ կը  
կարծէ թէ Եւրոպայի բոլոր ժեսթիերը կ'ար-  
համարուին Սուլթանէն. Պ. Չերազ չի՞ր գիտեր  
թէ Տիրապէթիբի ջարդը վայրկեանապէս դադ-  
րեցաւ երբ Պ. Բամպոն ուղեց, թէ Մերսինի  
բանտարկեալները 1897ին վայրկեանապէս ար-  
ձակուեցան երբ Աւստրիոյ Կայսրը ուղեց, եւ  
թէ Ջէյթուն քրիստոնեայ կառավարիչ մը ու-  
նեցաւ ոչ միայն որովհետեւ մեր լեւնական-  
ները քաջ եղան, այլ եւ որովհետեւ Յրան-  
սան, Անգլիան եւ Իտալիան ուղեցին: Սուլ-  
թանը կը համարձակի ջարդել երբ զինքը գըր-  
դող մը ըլլայ, կամ երբ գիտնայ թէ իրական  
զփգոնութիւն մը չկայ Եւրոպայի մէջ. անկեղծ  
զայրոյթի փոքր շարժում մը կը բաւէ անոր  
հոգին սարսափով լեցնելու համար. եւ այդ  
գազանը մուկ կը դառնայ (եւ քանի քանի ան-  
գամատորապացոյցը ունեցանք), երբ հորիզոնին  
վրայ միակ ամպ մը տեսնէ լրջօրէն մտայլ:  
Այնթապ ջարդ մը տեղի պիտի ունենար.  
ասի անտարակուսելի է, մարտանաւերը շի-  
տակ Մերսին գացին ատոր առաջքն առելուն  
գլխաւոր նպատակովը (եւ յետոյ գացին Պէյ-  
րութ, մարտանաւերուն ուղարկը ունենալով  
անշուշտ ուրիշ նպատակներ ալ), ջարդ տեղի  
չունեցաւ՝ գոնէ մինչեւ հիմա: Ըսող չեղաւ որ  
ասկից պէտք էր հետեւեցնել թէ հայկական  
խնդրոյն լուծումը մօտեցած է. բայց ասի ի-  
րողութիւն մըն է որմէ ո եւ է հայ հայրենա-  
սէր գոհունակութիւն պէտք էր զգար. Պ. Չե-  
րազի բռնած զիրքը ինծի աններելի կը թուի:  
Ի՞նչ պիտի մտածեն Պ. Պ. Միլրան եւ Տէլ-  
քասէ, Տընիս Բոչէն եւ Պէրար, Լավիս եւ  
Քիլեար, որ այդ արարքին հեղինակներն եւ  
ղան, կարգալով այս անշնորհք յօդուածը՝ հայ  
հայրենասէրէ մը ստորագրուած...

«Նոր Կեանք»ը ուրիշ եղանակ մը կը հըն-  
չեցնէ այդ նաւերու խնդրոյն աւթիւ: «Նոր  
Կեանք»ին յօդուածագիրը կ'ընդունի իրողու-  
թեան կարեւորութիւնը, բայց միայլ մը, ո-  
ճիւր մը կը համարի իմ այդ գործին մէջ զեր  
մը կատարած ըլլալս հրապարակելս, եւ կը  
վճռէ թէ ես կը չեզոքացնեմ կոր եղեր իմ «գիւ-  
րին բայց այսուհանդերձ գնահատելի» գործու-  
նէութիւնս՝ այսպիսի ոճիւրներ գործելով, եւ  
հրաւիրէ Բարիզի ամբողջ Հայութիւնը որ...  
զիս սանձէ (!!!): Այդ յօդուածը նախ ժամանց  
մը կարծեցի. բայց, աւա՛ղ, Արփիարեանէն զըր-  
ուած ըլլալու չքմեղանքն ալ չունի ան. ոճը  
յայտնապէս կը մատնէ Չարթումեանը: Յօդ-  
ուածին խորքին, որ բացարձակապէս տղա-  
յական է պատասխանելու նեղութիւն անգամ  
չեմ ուզեր յանձն առնել. մեր վստահուած եղ-  
բայրներուն համար օգնութիւն խնդրող Հայ  
մը իր դիմումները մութի մէջ ծածկել բնաւ  
պարտաւոր չէ, Սան-Սթեֆանոյի ու Պէրլինի  
դիմումներէն մինչեւ այսօրուան ջանքերը, մեր  
գործիչներէն ոչ մէկը այդ զգուշութիւնն ա-  
ռած է, եւ բնական էր որ այդպէս ըլլար.  
մեւք պէտք է թաքուն պահենք մեր քաղա-  
քական ձեռնարկները, եւ երբե՛ք՝ գթու-  
թիւն, օգնութիւն ուզող դիմումները: Ու եթէ  
Սուլթանը դիտնայ թէ Հայերու դիմումը կըր-  
նայ երբեմն կարեւոր արգիւնքներու յանգիլ  
այս ուղղութեան մէջ, աւելի յարգանք կը  
զգայ հայ տարրին նկատմամբ, եւ այդ ալ ար-  
գիւնք մըն է, զսր Չարթումեան անկարող չէ  
գնահատելու, եթէ իրերը ուղէ նախանձոտ  
մաղձի մը մէջէն չնկատել:

Բուն ըսելիքս այդ չէ սակայն Չարթումեանի  
այդ յօդուածին մասին. անոր մէջ ինչ որ ին-  
ծի մասնաւորապէս ցաւալի, ու նողկալի կը  
թուի, այն տողերն են ուր «վարւողութեան պա-  
կաս» կը վերագրէ ինծի, գործունէութիւնս  
«գիւրին» կը գտնէ, եւ կ'երեւակայէ որ Բա-  
րիզի հայկական մարմինները կրնան զիս  
«սանձահարել»: Չարթումեան, որ ամէն պարա-  
դայի մէջ իմինէս շատ աւելի զիւրին գործու-  
նէութիւն մը ունեցած է, այսինքն գործունէու-  
թիւն մը որ կայացած է ոչինչ ընելու մէջ,  
ստան անգամ «Նոր Կեանք»ին մէջ մինչեւ եր-  
կինք բարձրացուցած է իմ գործունէութիւնս.  
Իր բոլոր դրածները այստեղ յիշելու ձանձրու-  
թիւնը չեմ կրնար յանձն առնել. կարգացէք  
միայն սա հատուածն այն յօդուածին զոր մի-  
եւնոյն Չարթումեանը հրատարակած էր «Նոր  
Կեանք»ի 1900 յունիս 15ի թիւին մէջ. «Այս  
ամենը (Վոսովիլի ցերեկոյթը) իրագործողը,  
պէտք է ըսել բարձրաձայն, միակ անձ մըն է,  
Արչակ Զօպանեան, որ կամքի եւ բանիմացու-  
թեան հրաշքով մը, մէն միայնակ, կրցած էր

բարի կամեցողութիւններ արթնցնել մեր անունին շուրջը եւ յետոյ բերել զանոնք համախմբել այս գեղեցիկ հանդէսին մէջ : Անոնք միայն որոնք գիտեն այսպիսի գործի մը դժուարութիւնը, անոնք միայն կրնան գաղափար մը կազմել այն անխոնջ եւ անվատ կորովին, գերազանց վարճողութեան եւ կազմակերպող ոգիին մասին որ պէտք էր Չօպանեանին՝ ի գլուխ հանելու համար այդ գործը, ու այսքան անթերի յաջողութեամբ : . . . Այս գեղեցիկ հանդէսը կազմակերպողը զայն շատ գեղեցիկ կերպով փակեց բանախօսութեամբ մը որուն նիւթն էր «հայ ցեղին գերը պատմութեան մէջ» : . . . Երկարատեւ ծափահարութիւն մը ընդունեց այս բանախօսութիւնը : Այդ ծափահարութիւնները, մենէ շատերուն քով, կ'ուղղուէին նոյնքան գրագէտին որքան հայրենասէրին որ ահա չորս տարիէ ի վեր Բարի մէջ անդու կ'աշխատի մեր գատին շուրջը ամենէն թանկագին համակրանքները հրահրելու, եւ որուն հետ մենք ալ իրաւունք ունինք հպարտանալու իր մինչեւ հիմակ ձեռք բերած արդիւնքներուն վրայ, որոնց է'ն գերազանց համադրութիւնն էր երէկի հանդէսը :

Վեց ամիս առաջուան այս «տիթիրամբ»ը զիս չէր գինովցուցած եւ հիմակուան այս աքային ինքնին անտարբեր կը ձգէ զիս : Միանգամ ընդ միշտ ըսեմ որ եթէ ամբողջ հայ ազգը զիս արհամարհէ եւ հայածէ, ես պիտի շարունակեմ ամէն կրցածս ընել դատի մը համար զոր կը սիրեմ, որովհետեւ անհատներու համար չէ որ կ'աշխատիմ, այլ գաղափարներու համար : Բայց վերջապէս ի՞նչպէս այլանդակ — ու միանգամայն մանկական — չգտնել այս աստիճանի կոպիտ փոփոխականութիւն մը անձի մը մէջ, որ ապուշութեան յարաբերական արգարացումն թէ չունի եւ որ «գրագէտ» մըն է, այսինքն թէ բառերուն ճշմարիտ նշանակութիւնը եւ անոնց գործածութեան տեղը գիտէ, եւ որ վերջապէս գիտէ, — երկայն առեւն իմ ամենէն մտերիմ բարեկամս ըլլալու պատիւն ունեցած ըլլալով — թէ ո եւ է անձ կամ ո եւ է ընկերութիւն զիս երբեք չէ կըրցած սանձահարել, բաց ի երբ իր ձեռքը ունեցած է իրաւացի գաղափարի մը դէմքը՝ զոր կը յարգեմ (1) :

(1) Չարթուսեանի յօդուածէն ներշնչուելով, Արփիարեան «Նոր Կեանք»ի յիշ թիւին մէջ ամբողջ առաջնորդող մը նուիրած է իմ «ոճիր»իս մեծութիւնը անպամ մը եւս բացատրելու : Չեմ ծանրանար այն զուարճալի տողերուն վրայ որոնցմով Արփիարեան կը ձգտի ըսել թէ ինքն ալ շատ դիմուսներ, շատ ձեռնարկներ ըրած է, բայց չէ հրատարակած իր յօդուածին այդ մասը կատակերգութեան ճիւղին կը պատկա-

ԳՈՒԹԱՆ . — Մեծատուրեանի հիմնած երկրագործականամսագիրը, որուն օգտակարութիւնը գնահատողներուն առաջիններէն եղայ, ունեցաւ՝ անմիջապէս՝ այն յաջողութիւնը զոր իրեն համար գուշակած էի : Յաջողութիւն մը, գլխաւորապէս բարոյական, ինչպէս կ'ըլլայ ամէն նոր սկսող գործի համար, բայց երբ գործը այսքան դրականապէս օգտակար հանգամանք ունեցող ձեռնարկ մըն է, տարակոյս չունիմ որ նիւթական յաջողութիւնը պիտի չուշանայ : «Գութան»ը թերթ մըն է որու համար ոչ ոք «աւելորդ» եւ «աննպատակ» բառերը պիտի չկարենայ գործածել : Հայերը էականապէս «երկրագործ» ժողովուրդ մըն են, երկրագործական թերթի մը պակասը խոշոր պակաս մըն էր. զայն լրացնելով, Մեծատուրեան իրական ծառայութիւն մը մատուցած կ'ըլլայ մեր ժողովրդին :

Ու ժողովուրդը միահաղոյն համակրանքի արտայայտութիւնով մը ողջունեց «Գութան»ի երեւումը : Վերջին թիւը հրատարակած է խրատական բազմաթիւ նամակներ զոր Մեծատուրեան ընդունած է ուստիայ ու թրքահայ շատ մը անձնաւորութիւններէ : Իսկ ահա ինչ որ գրած է իրեն՝ Մեղիբէի (Մեմուրէթիւ աղիւ) ամերիկեան հիւպատոսը .

«Պարոն տնօրէն «Գութան» հանդէսի, Բարիդ .

«Եթէ օգտակար կը կարծէք ձեր՝ հանդէսը այս վիճակի շահերուն մէջ տարածելու համար, զայն մեր Հիւպատոսարանը զրկել, շատ ուրախ պիտի ըլլայի զայն ի ցայց դնելով այցելուներու ընթերցասրահին մէջ՝ ուրիշ լրագիրներու հետ :

«Ձեր հայրենակիցներէն շատեր մեր Հիւպատոսարանը կուգան, եւ ի մօտոյ գործակալութիւն մը պիտի հաստատենք երկրագործական գործիքներու վաճառման համար :

Ձեզի ամէն յաջողութիւն մաղթելով ձեր գովելի ձեռնարկին մէջ, կը խնդրեմ, սիրելի պարոն, որ ընդունիք ամենէն սրտապին զգացմանցս հաւատարմքը» :

Մ. Ն. ՆՈՐԹԱՆ, Հիւպատոս :

Այս նամակը, որ այնքան պատիւ կը բերէ ամերիկացի ուշիմ ու հայասէր հիւպատոսին,

նի : Պիտի ճշդեմ միայն մէկ քանի կէտերն իմ մէկ արարքիս զոր սխալ պատմած է : Արփիարեան, որ, աւելի ձարպիկ քան Չարթուսեանը, չ'ուզեր ուրանալ մինչեւ հիմա մէկ քանի գործ տեսնել կրցած եւ բացարձակապէս խորհրդապահ մնացած ըլլալս, ատոր իբրեւ ապացոյց կը յիշէ երկու տարի առաջուան դէպք մը, զոր անձիչք կերպով կը պատմէ. ճշմարիտ է որ ԳՏին, հայկական քաղաք մը

որքան «Գուժան»ի հիմնադրին, ամենէն պերճախօս փաստն է որ կ'ապացուցանէ թէ «Գուժան»ը արդէն սկսած է արդիւնք տալ :

Շատ օգտակար կ'ըլլար որ «Գուժան»ով հայ հասարակութեան ծանօթացնելու ատեն եւրոպական երկրագործութեան նորագոյն սկզբունքները, Մեծատուրեան Եւրոպացուց ծանօթացնէր՝ ֆրանսերէն ուսումնասիրութիւններով՝ Հայոց երկրագործութեան պատմութիւնը, սկզբնական շրջանէն մինչեւ արդիկացութիւնը: Հայ ցեղը, հին ատեններէն սկսեալ, մեծ ծառայութիւններ մատուցած ըլլալու է երկրագործութեան, պէտք է ատենք ճանչցնել Եւրոպային: Մեծատուրեան մաադիր է այդ ծրագիրն ալ իրականացնել, եւ կարող է այդ բանը ընելու: Երովհետեւ կը ճանչնայ Հայաստանը՝ իր շատ մը մասերով, մասնաւորապէս իր երկրագործական կեանքին մէջ:

ՄԱՐՏ. — Այն միջոցին ուր ամբողջ ազգը կը փափաքի, — եւ վաղը պիտի պահանջէ, — որ մեր հայրենասիրական կուսակցութիւնները վերջ դնեն զիրենք պառակտող վէճերուն, միանան ու միակ մարմին մը կազմեն յունական «Էթնիքի Էթերիա»ին պէս, յեղափոխական կուսակցութեանց օրկանները ամէն ջանք ընելու վրայ են այդ միութիւնը անկարելի դարձընելու համար: «Մարտ»ի վերջին թիւին մէջ սատարօրինակ տողերը կը կարգամ. «Ենթագրինք թէ Սմերիկայի մէջ Ազգային յանձնախումբը նախափորձ մը ընէ Հնչակեան եւ Դրօշակեան կուսակցութեանց միջեւ համաձայնութեան մը պայմանները որոշելու համար: Աստուծոյ մտաւորութեան նիւթը պիտի ըլլայ « Աստուծոյ գոյութեան խնդիրը »: Պիտի պահանջուի՞ մենէ որ անհաշտ պատերազմ մղենք Աստուծոյ գաղափարին դէմ, հայ ժողովրդին քրիստոնէական կրօնքին դէմ, պիտի ուզե՞ն որ կուսաւորչէն մինչեւ Իզմիրլեան բոլոր հայ Հայրապետները ամէնքն ալ

ջարդէ ազատեցաւ, երկու Հայու գիմուսներուն շնորհիւ. Արփիարեան կ'ըսէ թէ ինքն է որ սեղեկութիւններ հաղորդած է Բ սրիզ դրանուող շատ մը անձերու (որոնց մէկն ալ ես եմ եղեր), եւ թէ իր հրահանգներուն վրայ է որ գիմուսները կատարուեր են: Այդպէս չէ: Տեղեկութիւնները երկրէն եկած էին ուղղակի Բարիզ բնակող մէկ Հնչակեան բարեկամիս. այդ անձը ինծի հաղորդեց զանոնք, եւ ես գիմեցի ժողովին որ Հանոթոյն պարզեց կացութիւնը եւ առաջարկեց միջամտել. այդ միջոցին Հանոթոյն զիրքը շատ խախտած էր հայկական խնդրոյն մէջ իր բռնած ընթացքին պատճառով. գոհացում տալու համար իրեն

ժողովրդին արեւնը ծծող Սուլթան Համիտներ նկատենք: Պիտի վճռուի՞ թէ Հնչակեան կուսակցութիւնն ալ պէտք է Դրօշակեան կուսակցութեան համակարծիք ըլլայ որ Հայաստանի վրայ իշխողին անունը Ահմէտ է եղեր թէ՛ Լեւոն, միեւնոյն բանն է. . . Սմերիկայի մնայուն յանձնաժողովը որ լուրջ ձեռնարկ մը պիտի ընէ, թող յայտարարէ թէ արդեօք միութեան յաջորդ օրը իսկ պիտի չտիրէ՞ հերձուածը նոր մարմինն մէջ՞ եթէ նախկին Դրօշակեանները նախկին Հնչակեաններէն պահանջեն ծաղրել եւ արհամարհել հայ ժողովրդին պաշտած Աստուածը, ստիպեն մեզի հայ եկեղեցականութիւնը հայ ազգին արեւնը ծծող մակարոյժներ նկատել, եւ պնդեն որ «Հայաստանի վիշտերու կենդանի պատկեր»ը, «հայկական խնդրի հիմնադիրը», հայ հայրենասիրութեան մեծանշակ քարոզը», կաթողիկոս Հայրիկը դաւանինք «խայտառակ խաբրայ մը»: Ի՞նչ պիտի ըսենք երբ Հայաստանի համար հայկական վարչութեան մը հաստատութիւնը մերժեն»:

Իր ժամանցագրի ամբողջ կեանքին մէջ, Արփիարեան գեռ ոչինչ կրցած էր արտագրել որ կարենայ հաւասարելայն խեղդատակ էջին մտորակեցէք անդամ մը, — ջանալով չխնդալ՝ եթէ յաջողիք, — թէ յեղափոխական մարմիններուն միութեան միակ արդելքը. . . Աստուծոյ գոյութեան հարցն է եղեր, Կ'ըմբռնե՞մ որ ազգային գործունէութեան մէջ հայ եկեղեցին իբրեւ «ազգային» հաստատութիւն մը յարգելու եւ եկեղեցականի ու աշխարհականի միջեւ խտիր չդնելու պայմանը էականներէն մին ըլլայ հայ յեղափոխական կազմակերպութեան, բայց Արփիարեանին փընտըրածը այդ չէ, պէտք է եղեր որ ամէն յեղափոխական Աստուծոյ գոյութեանը հաւատայ» (!!!), եւ ամէն յեղափոխական մարմին իր ծրագրին ճակատը արձանագրէ՝ «Աստուծոյ գո-

ղէմ գրգռուած հանրային կարծիքին, Հանոթօ պէտք եղած հրամանները զրկեց Պալտոյ դեւպանին եւ այդ քաղաքին մէջ գտնուող հիւպատոսին, եւ ջարդը արգիլուեցաւ: Միեւնոյն ատեն՝ այդ Հնչակեան բարեկամիս հետ խնդրած էի՝ նուպար փաշայէն որ անգլիական դեսպանատունը հաճի դիմել. ազնիւ ծերունին յօժարեցաւ դիմումը կատարել եւ զնաց իսկոյն անգլիական դեսպանատունը, եւ անգլիական կառավարութիւնն ալ աջակցեցաւ ֆրանսականին՝ այդ ջարդը արգիլելու համար: Այսպիս անցած են իրերը: Այս բոլորը ըսելու պէտք զգացի, միմիայն ցոյց տալու համար թէ Արփիարեան ի՞նչ ձեւով կը գրէ պատմութիւնը:

յուրեանհաւատքըսկիզբնէ յեղափոխութեան» :  
 Ուսկի՞ց այս միտտիքական յեղակարծ բերու-  
 մը Արփիարեանին մէջ, որ իր հրապարակագրա-  
 կան բազմամեայ գործունէութեան միջոցին շատ  
 յաճախ գրած է հակակզերական էջեր ճիշդ այն  
 յօդուածներուն պէս, զոր հիմա իր սանիկը,  
 Վոսմեան, կը հրատարակէ «Հայրենիք»ին  
 մէջ : Եւ ինչի՞ վրայ հիմնուելով Արփիարեան  
 կը յայտարարէ թէ Դաշնակցութիւնը իր ծրա-  
 գրին մէջ պայման գրած է որ իր անդամները  
 «անաստուած պիտի ըլլան», հայ եկեղեցա-  
 կանները պիտի նկատեն իբրեւ «Սուլթան Հա-  
 միտներ» եւ Հայաստանի վարիչ պիտի ուզեն  
 Ահմէտ մը որքան Լեւոն մը, եւ նոյն իսկ պի-  
 տի հակառակին հայկական վարչութեան մը  
 հիմնարկուածին : Ո՞ւր տեղէն կը հանէ կոր Ար-  
 փիարեան այս բողոքը : Վոսմեանի մը այդ շո-  
 շորգութիւնները ձափոտած ըլլալէն (եւ պէտք  
 է խոստովանիլ որ խեղճ տղան առոնց մէկ մասը  
 միայն ըսած է, միւս մասը ծնունդն ըլ-  
 լալով Արփիարեանի ճոխ քմայքին) ի՞նչպէս  
 կարելի է հետեւցնել որ ամբողջ Դաշնակ-  
 ցութիւնը հակակրօնական ու անիշխանա-  
 կան կանոնադրութեան մը վրայ հիմնուած  
 ըլլայ, քանի որ Դաշնակցութիւնը իրեն ան-  
 դամ ունեցած է (եւ դեռ ունի ալ անշուշտ)  
 եկեղեցականներ, ու Աշտարակեցիի, Իզ-  
 միրլեանի կամ Վարժապետեանի պէս եկեղեցա-  
 կաններու մասին «Իրօջակ»ը միշտ պատկա-  
 ռանքով խօսած է, եւ քանի որ դարձեալ Դաշ-  
 նակցութիւնը վերջերս շատ յստակօրէն յայ-  
 տարարեց թէ ինքն ալ, — ինչպէս «Անահիտ»ը  
 եւ ամբողջ ազգը, — հայկական հարցը «ազ-  
 գայական» հարց մը կը նկատէ, եւ ընկեր-  
 վարական բաղձանքները կը պահէ ազգայնա-  
 կան հարցին լուծումէն յետոյ գալիք շրջա-  
 նի մը :

Զուարճալին, — եւ ամօթալին, — այն է որ  
 Վոսմեանի «Հայրենիք»էն զատ մէ՛կ հայ թերթ  
 մը միայն գտնուած է, որ անկից ալ առաջ,  
 միեւնոյն բաներն ըսած ըլլայ ամբողջ հայ ե-  
 կեղեցականներուն ու «Հայաստանի վշտերուն  
 կենդանի պատկեր Հայրիկ»ին մասին, եւ այդ  
 թերթը «Իրօջակ»ը չէ, այլ «Նոր Կեանք»ը,  
 հիմա այս տողերը գրող Արփիարեանին «Նոր  
 Կեանք»ը : Ահա ինչ կ'ըսէր «Նոր Կեանք»ի  
 աշխատակիցներէն մին այդ թերթին Բ. տար-  
 ուան ութերորդ թիւին մէջ. «Այս մարդե-  
 րուն (ամերիկացի պատուելիներուն) դէմ է որ  
 իրենց փորին անվախճան յագեցումը միմակ

փնտոող մեր եկեղեցականները կը համարձա-  
 կին մուլթին մէջ աշխատիլ : . . . Ո՛րչափ բաղ-  
 դաւոր պիտի ըլլայինք եթէ այդ կրօնաւոր-  
 ները բնաւ փոխելու չեւլէին մշտնջենական  
 անշարժութեան կեանքը որ իրենցն է . . . Թող  
 ուտեն, խմեն, պառկին, հաստընան ու ար-  
 ջանան : Ալ ուրիշ բան չենք ուզեր իրենցմէ» :

Իսկ Հայրիկի մասին, «Նոր Կեանք»ը իր  
 Ա. տարուան եօթներորդ թիւին խմբագրա-  
 կանով հետեւեալը կ'ըսէր.

«Չեղծում, յափշտակութիւն, գողութիւն,  
 կաշառակերութիւն, — ահա էջմիածնի այսօր-  
 ուան պատկերը : Կաթողիկոսը, որուն կորով  
 կը պակսի, շատ լաւ կը տեսնէ այս ամէնը,  
 բայց լուռ կը մնայ, » եւն :

Ի՞նչ պիտի մտածէ հայ հասարակութիւնը,  
 տեսնելով որ յեղափոխական կուսակցութիւն-  
 ները, որոնք ազգին ճակատագիրը վարելու  
 պաշտօնն ստանձնած են, այսքան տղայականօ-  
 րէն բիրտ հակասութիւններով վխտացող օր-  
 կաններ ունին, հակասութիւններ որոնք այս  
 կամ այն վայրկեանին կրճէն կամ ոխէն կը  
 ծնին : Եւ չէ՞ք կարծեր որ այս նոր զէվզէկու-  
 թիւնը դրօշելով իրեն քմայքին յանձնուած  
 «Մարտ»ին մէջ, Արփիարեան անգամ մը եւս  
 հաստատած կ'ըլլայ այն բողոք դիտողութիւն-  
 ները զոր ուսումնասիրութեանս մէջ ներկա-  
 ցուցած էի իր հանրային գործունէութեան մա-  
 սին, եւ շեշտած կ'ըլլայ ճշգրտութիւնը փափա-  
 քին զոր յայտնած էի Վեր. Հնչ. կուսակցու-  
 թիւնը «Փանթէզիսթ»ի մը ձեռքէն առնուած  
 եւ ճշմարտապէս վերակազմուած տեսնելու :

Ամէն պարագայի մէջ, ես կը յուսամ որ  
 Ամերիկայի միայուն յանձնախումբը, եթէ ո-  
 րոշած է մերձեցում մը յառաջ բերել Միացեալ  
 Նահանգաց Հնչակեաններուն ու Դաշնակցա-  
 կաններուն միջեւ, Արփիարեանի մը տղայա-  
 բանութիւններէն ոեւէ ազգեցութիւն չպիտի  
 կրէ եւ վայրկեան մը իսկ պիտի չկորսնցնէ իր  
 այդ գեղեցիկ առաջագրութիւնն իրագործելու  
 համար :

ՀԱՅՐԵՆԻՔ. — Մինչդեռ Արփիարեան իր  
 «Մարտ»ին մէջ կը ջանայ խրամը լայնցնել  
 յեղափոխական մարմիններուն միջեւ, Պոս-  
 թրնի «Հայրենիք»ին Վոսմեանը, միեւնոյն  
 ոգևով սողորուած՝ թէպէտ ուրիշ բանակի մէջ  
 գործող, խրամը անանցանելի դարձրնելու հա-  
 մար կը շարունակէ միտուութիւններու շիղ-  
 ջակոյտ մը ստուարացնել անոր մէջակզը : Ահա  
 ինչ կը գրէ այդ պարոնը հանգանակութեան

մը առթիւ զոր Ամերիկայի Վեր֊ Հնչ Մասնա֊  
ճիւղը Բրովիտէնսի մէջ բացեր է վերջերս ի  
նպաստ հայ յեղափոխական բանտարկեալ֊  
ներուն :

«Հանգանակութիւն յեղափոխական բանտար֊  
կեալներու համար . ահա կեդրոն֊Արփիարէն  
հասած վերջին հրամանը , որ ծայր տուեր է  
Բրովիտէնսի մէջ :

«Բանտարկեալ , ան ալ յեղափոխական բան֊  
տարկեալ , որո՞ւն սրտին մօտ չէ , ո՞վ չու֊  
զեր օգնել : Տարի մը առաջ Չօպանեանի պէս  
եսախաւարներու խումբ մը , որ ինքզինքը  
Հայ Յեղ Միութիւն անունով հրապարակ նե֊  
տեց ու Արփիարի ձեռքէն հացը ուղեց խել ,  
այսպիսի հանգանակութիւնով մը պլպլաց ու . . .  
մարեցաւ : Այս խեղճերը գէթ կը խոստովա֊  
նէին ոչնչութիւննին ու հանգանակութեան  
կոչը բարեգաբնակ վաճառականի մը՝ Յ . Իւ֊  
քէնաէրի անունով արձակեցին ու դրամն ալ  
Օրմանեանին խրկեցին :

«Կեդրոն֊Արփիարը աւելի յանդուգն ուղեր է  
ըլլալ , ի զո՞ւր սակայն : Կեդրոն֊Արփիարը  
այդ Միութեանէն ալ աւելի խեղճուկ է : Անոր  
համար որ

1) Յ . Իւքէնտէրը պատուաւոր վաճառական  
է , իսկ Արփիարը ապացուցուած գող ,» եւն . :

Կը բաւէ այս զդուելի «չառապիտ» յին մէջէն  
ուներիով վերցնել մէկ երկու գաղափար (եթէ  
այսպէս կարելի է կոչել աղբի վրայ պտըտկող  
ճանճեր) , եւ զանոնք արձակ լոյսին ցոյց տալ ,  
զգալի ընելու համար այն ամբողջ ցածութիւնը  
որուն կը հասնի մարդ երբ կուսակցամուղա֊  
կան ախտին կը միացնէ բնածին հսկայ ապու֊  
շութիւն մը :

1) Պ . Վռամեան կ'ընդունի թէ հայ բանտար֊  
կեալներուն օգնութիւն հասցնելու ձեռնարկը  
ամենուն սրտին մօտիկ բան մըն է . կ'ըն֊  
դունի միանգամայն որ Պ . Յ . Իւքէնտէրը , որ  
Հայկական Միութեան այդ նպատակով տարի  
մը առաջ բացած հանգանակութեան գանձա֊  
պահն էր , «պատուաւոր» անձ մըն է . ի՞նչ֊  
պէս ուրեմն կը բացատրէ որ ինքը , եւ իրեն  
հետ ամբողջ Դաշնակցութիւնը , — ինչպէս եւ  
արդէն բոլոր միւս հայ յեղափոխական մար֊  
միներն ու հայրենասիրական խմբակները , —  
անտարբեր մնացին այդ հանգանակութեան որ՝  
նոյն իսկ Պ . Վռամեանի վկայութեամբ՝ ամե֊  
նէն յարգելի նպատակն ունէր եւ ամենէն վըս֊  
տահութիւն ներշնչելու հանգամանք ունեցող  
պայմաններու մէջ կազմակերպուած էր : Պ .  
Վռամեան պատասխան չունի այս հարցման  
տալու , բացի այն մեկնութենէն , — զոր ես  
կուտամ , — թէ մեր մէջ հայրենասիրական կու֊  
սակցութիւնները հոտ ալ ցոյց տուած եղան  
իրենց այն ողբալի սովորութիւնը որու համե֊  
մատ միայն այն գործերուն կը հետաքրքրուին

որ «իրենց սուսին մարդոցը ձեռքովը» կազմա֊  
կերպուած են , եւ զլուխնին անդին կը դար֊  
ճընեն (կամ մինչեւ իսկ բամբասողի ու հալա֊  
ծողի դիրքը կը բռնեն) երբ գործը ուրիշ տու֊  
նի մը մարդոց ձեռքով սարքուած է , նոյն իսկ  
եթէ գործը ամէն կերպով յարգելի ըլլայ եւ  
վստահելի :

2) Պ . Վռամեան կը վճռէ թէ Հայկական Միու֊  
թիւնը «Չօպանեանի եւ իր մէկ քանի ընկեր֊  
ներուն մէկ հնարքն էր Արփիարի ձեռքէն հա֊  
ցը խլելու համար» (ո՛ւն , տասներորդ կարգի  
պախալի այս բացատրութիւնը . . . ) : Ի՞նչ իւ֊  
րաւունքով , ի՞նչ ապացոյցի վրայ , հիմնուելով ,  
Պ . Վռամեան շահադիտական խմբակի գոյնը  
կուտայ հայրենասիրական մարմնոյ մը , որ իր  
գոյութիւնը յայտնեց ամենէն անշահախըն֊  
դիր ձեռնարկը փորձելով եւ որուն այդ աղնիւ  
կոչին «Անահիտ»ին կողմէ սիրալիր ընդունեւ  
լութիւն մը գտած ըլլալը (ընդունելութիւն  
զոր պէտք էր գտնէր մեր բոլոր հայրենասի֊  
րական թերթերէն) , բնաւ իրաւունք չի կըր֊  
նար տալ ո եւ է մէկուն որ այդ մարմինը «Ա֊  
նահիտ»ի տնօրէնին մէկ անձնական ձեռնարկը  
համարի : Պ . Վռամեան գիտէ՞ թէ իր այդ յօդ֊  
ուածը որքան զգուանք պիտի պատճառէր իր  
այնչափ գրուատած Քիյարիին , որ Հայկական  
Միութեան այդ հանգանակութեան ամենէն  
սրտագին աջակցութիւնը շնորհեց (ինքն իսկ  
անձամբ Պ . Իւքէնտէրէն ընդունեցաւ հաւաք֊  
ուած գումարը եւ «Աիկ սէ Տրուա տը լ'Օմ»ին  
յանձնեց) եւ որ արդէն շատ զարմացած էր  
տեսնելով որ այդքան զովելի կոչ մը այն֊  
քան միջակ ընդունելութիւն մը գտաւ մեր  
հայրենասէրներէն :

3) Ի՞նչ իրաւունքով , դարձեալ , Պ . Վռամ֊  
եան կը ներկայացնէ Ամերիկայի Վեր֊ Հնչ .  
Մասնաճիւղին հայ բանտարկեալներու ի նը֊  
պաստ բացած այս նոր հանգանակութիւնը իր֊  
րեւ Արփիարեանի զրպեւնը պարարտացնելու  
սահմանուած ձեռնարկ մը : Ամերիկայի Վեր֊ Հնչ .  
Մասնաճիւղը այս վերջին մէկ երկու տարինե֊  
րուն մէջ կազմակերպուած հանգանակութիւն֊  
ներուն ամենէն շահեկանին եւ ամենէն յաջո֊  
ղածին (Չէյթունի ի նպաստ հանգանակութեան)  
նախաձեռնակը եւ գործադրողը եղաւ , առանց  
որ ո՛ր եւ է մէկը կասկածի ստուերն իսկ ունե֊  
նար այդ գործին նկատմամբ : Ի՞նչ փաստի վրայ  
ուրեմն յենլով է որ Պ . Վռամեան այս ամբաս֊  
տանութիւնները կ'արձակէ (եւ եթէ փաստ  
չունի , ի՞նչպէս կընայ ներելի ըլլալ որ հրա֊  
պարակագիր մը ինքզինքին թոյլատրէ մրո֊

տել հանրային ո եւ է գործ՝ կուսակցական գծուձ նկատումներով) :

4) Ի՞նչ իրաւունքով՝ վերջապէս՝ Պ. Վոսմեան կը քարկոծէ եւ կ'աղարտէ այդ նոյն Վերջնչ. Մասնաձեւը՝ «Բրօ Արմենիա» յին ի նըպատ հանգանակութիւն մը բացած ըլլալուն համար : Ինչո՞վ կ'արդարացնէ իր այն ենթադրութիւնը թէ «Բրօ Արմենիա» յին համար հաւաքուած դրամը Արփիարեանին գանձատունը պիտի մտնէ (այս ի՞նչ դիւրինու հասարակ գործիք մը եղաւ Արփիարեանին անունը՝ ո եւ է ոչ-Դրօշակեան գործի վրայ մուր քսելու համար) : Ինչո՞ւ Ամերիկայի Դաշնակցականները կը կարծեն կոր որ «Բրօ Արմենիա» յին համակրելու կամ անոր օգնելու համար մարդ անպատճառ Դաշնակցական ըլլալու է. եւ այս ի՞նչ «խանութի կոխներ» են, այս ի՞նչ «Օտաւար» ի բարքեր են որ կը շարունակեն կոր տեւել մեր աղաւթիական, լրագրական վէճերուն մէջ . .

Դաշնակցութեան վարիչ մարմինը պիտի ըմբռնէ՞ վերջապէս թէ ո՞րքան իրաւունք ունէի ըսելով որ Դաշնակցականները ծիծաղելի կ'ըլլան երբ զտում կը պահանջեն միմիայն Հնչակեաններուն համար եւ իրենց կուսակցութիւնը ամբողջութեամբ անստղիւտ կը նկատեն : Դաշնակցական կամ Հնչակեան կուսակցութեանց գլուխը գտնուող անձերը պէտք է որ փութան ամէն ջանք ի գործ դնել որպէս զի բոլոր կուսակցութիւններուն մէջէն վտարուին խաչագոյները, միմոսները, խանութպանները, անձնամուկները, պառակտիչները, եւ մնան միայն անոնք որ իրենց անկեղծութեան, անշահախնդրութեան, անձնուիրութեան եւ լրջութեան ապացոյցը տրուած են :

Բիչ մը բարի կամեցողութիւն ու քիչ մը կորով բաւական է որպէս զի այս բանը ընեն անոնք որ կարող են զայն ընելու, եւ որոնք պարտաւոր են ընել զայն, եթէ չեն ուզեր որ ամբողջ հայ յեղափոխական տարրը ազգին աչքին իր վարկը վերջնապէս կորսնցնէ : Եւ հակառակ այս բոլոր փիտութիւններուն որոնք գործին բոլոր ճամբաները խցել եւ հատեցնել կը սպաննան, եւ հաւատք ունիմ որ մեր գործիչները, անոնք որ միմիայն ազգին շահերը ի նկատի ունին, պիտի ընեն այդ բանը, յազմելով այն անարգ խոչընդոտներուն զորատոր զէմ կը ձեւացնեն անոնք որ միայն իրենց անձնական շահերն ի նկատի ունին :

ՆՈՐ ԿԵԱՆՔ. — «Նոր Կեանք» ին մէջ, բարիզեան թղթակից մը, Տրդատ Արամեան, — որ Չարթումեանն է ապահովաբար, — Բարիզի Հայոց Հայրենասիրական Ընկերակցութեան ներքողեան մը կը հիւսէ՝ ինձ ի վերագրելով անոր 84էն ի վեր կատարած դերը ու բացած ըլլալու մտացածին յանցանք մը : Այդ յօդուածը, Իսքէնտէր բարեկամիս ու իմ միջեւ ցրտութիւն ձգելու զազիր (եւ ապարդիւն) դիտաւորութեամբ մը գրուած, կը պարունակէ կարգ մը շատ կարեւոր սխալներ՝ բաց ի հիմնական գաղափարին անճշգրտութենէն :

«Անահիտ» ի մէջ երբեք ես առիթ չեմ փախուցած Պ. Իսքէնտէրին ու իր Հայրենասիրական Ընկերակցութեան անգամակիցներուն կատարած գործը յիշելու այն յարգանքովը որուն արժանի է . երբ, 97ին, Բարիզի «Կրանտ Օրիանտ» ի սրահին մէջ, խումբ մը Հայեր Պ. Իսքէնտէրին գործունէութիւնը ուրանալ եւ անոր անունը անարգել փորձեցին, ես էի որ բեմէն պաշտպանեցի զինքը իրեն զէմ անիրաւաբար յարձակող այդ խումբին դէմ : Եւ դեռ «Նոր Կեանք» ի այդ յօդուածը չկարդացած, «Անահիտ» ի այս թիւին առաջնորդողին մէջ անգամ մը եւս այդ մարմնոյն գործը կը յիշէի եւ կը գնահատէի . ու մըտադիր էի, Բարիզի Հայոց նորակազմ ընկերութեան հիմնարկումին առիթով, «Անահիտ» ի յաջորդ թիւին մէջ հրատարակել մանրամասն յօդուած մը Պ. Իսքէնտէրի եւ իր ընկերներու գործունէութեանը վրայ, մտադրութիւն որուն իրագործուելուն արգելք պիտի չըլլայ անշուշտ «Նոր Կեանք» ին այդ գծով ինքնը : Արփիարեանի յատկացուած ուսումնասիրութեանս մէջ երբեք չէի ըսած թէ Փրանսայի հայասիրական շարժումը իմ Բարիզ գալովս սկսած է . ըսած էի թէ Սասունի Չարդէն մինչեւ Պոլսոյ առաջին Չարդը, դիտած ըլլալով որ Բարիզի գրագէտները լուռ կը մնային եւ մասուլը ընդհանրապէս մեզի հակակիր էր, ուզեցի գրագէտներուն դիմել, — բան մը որ չէր եղած, կամ շատ քիչ եղած էր մինչեւ Պոլսոյ Չարդը : Ճշմարիտ է որ այն պահուն ուր ես կը գրէի Պօէրին, Սեվրինին, Տրիւմոնին ու Ռոշֆօրին, Պ. Իսքէնտէր ալ կը գրիմէր անոնցմէ երեւքին, եւ մեր երկուքին ջանքերը՝ առանց մեր դիտութեանը՝ կը միանային միեւնոյն նպատակին մէջ . (Ռոշֆօր իր թերթին միեւնոյն թիւին մէջ հրատարակած էր իմ նամակս եւ Հայ. Ընկերակցութեան նամակը միանգամայն) : Բայց այդ յօդուածիս մէջ ես իմ Բարիզ գալու որոշմանս պատճառները բացատրելու նը-

պատակը միայն ունէի, եւ անոր համար է որ շատացած էի այդ յօգուածին մէջ յիշելով իմ ճիգս միայն ու անոր գտած յաջողութեան իմ կեանքիս մէջ բերած փոփոխութիւնը: Տարօրինակը այն է որ «Նոր Կեանք»ի խմբագրութիւնը, չորս տարիէ ի վեր այդ թերթը հրատարակելով հանդերձ, նիւնս միայն մտքէն անցուցած ըլլայ Բարիզի Հայոց Հայրնապարական ընկերակցութեան ձօնել դափնի մը զոր ատոնց պէտք էր անոր ընծայած ըլլար՝ եթէ իրօք անոր գործը գնահատելն էր իր բուն նըպատակը: Բայց իր նպատակը ոչ թէ այդ մարմինը գնահատել է այլ զիս քաջաբշկել, եւ չեմ գիտեր աւելի անազնիւ մեծարանք քան ուրիշ մը պղտիկցնելու համար մէկու մը հրամցուած գովեստ մը:

Զարթուածան կը սխալի Պ. Իսքէնտէրին վերագրելով «Հայաստանի ջարդերը» ախողոտով գրքին հայրութիւնը: Զարդերուն ներկայ եւ զող Հայերու նամակներով գիրք մը կազմելու զաղափարը ե՛ս յղացայ, անոր համար Ֆրանսացի մեծ գրողէ մը յառաջաբան մը խնդրելու մտածումը ես ունեցայ, Քլէմանտոյին ի՛մ նախածեռնութեամբս զիմեցի եւ ընդունեցայ յառաջաբանը, գրքին նամակներուն մեծագոյն մասը Պոլսէն բարեկամներ ինծի՛ զրկեցին, (եւ այդ անձնական, ոչ-պաշտօնական նամակները ամենէն սրտաշարժներն են, ատոնցմէ մին է որ Պօէր հրատարակեց «էքօ տը Բառի»ին մէջ, անոնցմէ մին է դարձեալ՝ Օրֆայի նամակը, որ «Ռըվիւ տէ Ռըվիւ»ին մէջ հրատարակուեցաւ): Պ. Իսքէնտէր ազնուութիւնն ունեցաւ պաշտօնական նամակներու ծրար մը ինծի յանձնելու՝ որոնք գրքին մէկ երրորդը կը կազմեն. եւ, ինծի փոխ տալով տպագրական ծախքերու մէկ մասը վճարելու հարկաւ, որ եղած գումարը, իմ գաղափարին նիւթական իրականացմանը պատճառ եղաւ, — բան մը որուն համար յաւիտեան շնորհապարտ եմ իրեն:

Տրդատ-Զարթուածան կը սխալի դարձեալ յայտարարելով թէ Բարիզի դասընկերներս են որ ինծի թելադրած են Պոլսէն նամակներ գրել Բարիզի մամուլին, եւ թէ անոնց հրաւերն է որ զիս մղած է Բարիզ գալու: Բարիզի բարեկամներս երբեք ինծի չեն գրած որ նամակներ գրկեմ Բարիզի մամուլին: Պոլսոյ ջարդին հետեւեալ օրն իսկ զրկեցի իմ չորս նամակներս, իմ անձնական մղումովս միայն. եւ Բարիզի գասընկերներս, Պօէրին ուղղած նամակիս ոճէն հեղինակը գուշակելով է որ գաղափարն ունեցած էին զիս Բարիզ կանչել:

Իրենցմէ մին ինծի զրկեց նամակ մը առաջարկելով որ մեկնիմ Բարիզ, ուր ներկայութիւնս օգտակար կը նկատէին ընկերներս. բայց այդ նամակն ստացած օրս ես արդէն որոշած էի մեկնիլ, հրաժարականս տուած էի Կեդրոնականի ուսուցչութենէ, եւ բոլոր պատրաստութիւններս տեսած էի ճամբայ ելլելու համար: Չեմ կրնար երեւակայել որ Բարիզի ընկերներս, որ այս բոլորը գիտեն, այդքան խեղաթիւրուած ձեւով մը ներկայացուցած ըլլան այդ դէպքը. հաւանական կը գտնեմ որ Զարթուածան ինքն իսկ այլայլած ըլլայ իրողութիւնը՝ պղտիկցնելու համար իմ այդ արարքիս նշանակութիւնը:

Ատոնք շատ գձուձ, շատ ճղճիմ բաներ են. ու կը ցաւիմ այս ամբողջ աղբախուղորովը «Անահիտ»ի ընթերցողները զբաղեցնել ստիպւած ըլլալուս. բայց ընթերցողներս պէտք է ներողամիտ ըլլան ի նկատի ունենալով թէ այս բոլորին վրայ խօսիլ կը զիջանիմ այն ընդհանուր տեսակէտովը միայն զոր բացատրեցի այս քրօնիկիս սկիզբը: Այս բոլորը կ'ըսեմ, — եւ ըսածներս անհերքելի են — միմիայն ցոյց տալու համար՝ անգամ մը եւս՝ վտանգը որ կայ աղագային մեծ կաղամակերպութեան մը զեկը թողլու մէջ այսպիսի թեթեւ ու անխղճամիտ մարդոց ձեռքը որոնք իրողութիւններն ու անձեքը իրենց շահերուն ու կրքերուն ակնոցին մէջէն ցոյց կուտան հատարակութեան: Ու «Անահիտ»ի ընթերցողները վստահ ալ կրնան ըլլալ որ այսպիսի խնդիրներու մասին աւելորդ ու ամուլ կրկնութիւններ պիտի չհերեւան այս թերթին մէջ: Այլ եւս բան չունիմ արդէն ըսելիք Արփիարեանին ու Զարթուածանին մասին. որակեցի իրենց տիպարը, զոր ուշ ճանչցայ, բայց շատ լաւ ճանչցայ եւ ճանչցուցի չգիտցողներուն: Ամէն ըսելիքս ըսած եմ, եւ ըսածներս կը բաւեն իրենց ինծի դէմ ուղղելիք ապագայ բոլոր նմանօրինակ զրպարտութիւններուն իբրեւ պատասխան նկատուելու: Ինծի համար շատ տաժանելի է արդէն այս բաները գրելու ստիպուած ըլլալ՝ անձերու մասին զոր սիրած ու յարգած եմ: Պարտք մը կար կատարելու. կատարեցի զայն. այս պատմութիւնը վերջացած է. կեանքիս մէկ ամբողջ էջն է որ գոցուած կը նկատեմ: Ալ իրենցմով պիտի չզբաղիմ. — բաց իայն պարագայէն ուր վիթխարի սոսութիւն մը իրենց կողմէն՝ զիս բռնազատէ լուսթիւնս խզելու, եւ այդպիսի պարագաներու մէջ՝ երկու բառ բաւական պիտի ըլլայ:

ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐ . — Երկու նամակ ստա-  
ցայ խումբ մը Հայերու կողմէն որ ինքզինքը  
կ'անուանէ «արդարասէր խումբ» եւ որու նը-  
պատակն է Դրօշակեան կարգ մը գործիչներու  
զեղծումները երեւան հանել :

Այդ նամակները ինծի զրկուած են հրատա-  
րակուելու համար . բայց չպիտի հրատարակեմ  
զանոնք , որովհետեւ դրողները չեն ստորա-  
գրած , եւ իրենց գտնուած քաղաքին անունն  
իսկ չեն նշանակած : Դրօշակեան ինչպէս շըն-  
չակեան գործիչներուն մէջ , անկեղծներուն  
նկատեալ եղած են միշտ խաչադողներ ալ . ատոր  
համոզուելու եւ այդ համոզումս հրապարակաւ  
յայտնելու համար արդարասէր խումբին երե-  
ւուսին չեմ սպասած : Բայց աններելի կը նկա-  
տեմ որ մերկացումներու այդ ծանր ու փա-  
փուկ պաշտօնը ստանձնող խումբ մը մութի մէ-  
ջէն գործելու որոշումը առած ըլլայ . այդ պաշ-  
տօնը կատարողը պէտք է որ բաց է բաց ինք-  
զինքն անուանէ , պատրաստ ի հարկին իր  
ամբաստանութիւնները փաստերով հաստատե-  
լու : Այդ «խումբ»ին կ'առաջարկեմ որ այդ ամ-  
բաստանութիւնները ուղղէ Դաշնակցութեան  
վարիչ մարմինն , եւ եթէ այդ մարմինը ու-  
շադրութիւն չընծայէ այդ ամբաստանութիւն-  
ներէն անոնց որ կրնան հիմնաւոր ըլլալ , իր  
անդամներէն միոյն յանձնէ այդ ամբաստանու-  
թիւնները տետրակով մը հրատարակել՝ ստ-  
րագրելով , որպէս զի հանրային կարծիքը ,  
զիմակազերծ եղած խաբեքները ճանչնալով ,  
պահանջէ մեր յեղափոխական մարմիններէն  
ինչ որ «Անահիտ»ը միշտ պահանջած է , —  
իրենցմէ վտարել բոլոր խաչադողները :

«ԴՐՕՇԱԿ» . — Հայ Յեղափոխական Դաշ-  
նակցութիւնը իր տասնամեակին անթիւ հրա-  
տարակած է բացառիկ թիւ մը , որ յուզ-  
մունքով պիտի կարգացուի բոլոր Հայերէն ,  
Դաշնակցական ըլլան կամ ոչ : Այդ թիւը ուր  
կը դանուի «Ղարիբ»ի մէկ էջը , որ ամենէն  
հոյակապ ներշնչումներէն մէկն է որ հայ գը-  
րագէտ մը ունեցած ըլլայ երբեք , կը պարու-  
նակէ երկայն շարք մը լուսանկարներու որոնք  
կը ներկայացնեն դէմքերը այն Հայերուն որ  
իրենց ազգին համար մեռան , ու զիւցազնի  
պէս մեռան : Ամէն Հայ , ինչ ալ ըլլայ իր կար-  
ծիքը ազգային քաղաքականութեան ընդհա-  
նուր ծրագրին մասին , յարգանքով պիտի  
թղթատէ այդ էջերն ուր կը պատկերանան ա-  
նոնք որ մեր ցեղին ամէնէն ազնիւ առաքի-  
նութիւններն իրենց արիւնովը նգրաբար-  
ծեցին : «Անահիտ»ի ընթերցողներ գիտեն սր  
ամէն առիթի մէջ հիացումի հարկը մատու-

ցած եմ այն քաջերուն որ կեանքերնին զո-  
հել յանձն առին , իրենց ազգին փրկու-  
թիւնը փութացնելու նպատակով : Այդ Հայե-  
րը զոր կը տեսնենք աչքերնին վրէժով հրա-  
վառ , կուրծքերնին փամփուշտներով ծանրա-  
բեռն ու հրացան մը ձեռքերնուն մէջ սեղմուած ,  
անտերնիս թունդ կը հանեն՝ ցոյց տալով մեզի  
մեր դարաւոր ստրկացման ճահիճին մէջէն  
յառնումը հին մաքառող Հայուն : Քննադատու-  
թիւնը , այս թերթին մէջ , երբեք չէ ուղղուած  
զաղափարին այդ զինուորներուն դէմ , որոնք  
պարտքերուն ամենէն սրբազանը կատարե-  
ցին , այլ գործունէութեան այն ընդհանուր  
յատակադիրն դէմ , զոր ուրիշներ , ազնիւ ճգ-  
տումներով տողորուած բայց սխալ փեսնող  
անձեր , յղացած էին , եւ որուն դժբաղդ ու  
վսեմ գործադրողները եղան ատոնք : Ու հոս ,  
այս թերթին համոզումը կը մնայ անփոփոխ :  
Անոնք որ այս թերթին վերագրեցին հակա-  
յեղափոխական ձգտում մը , պէտք էր տեսած  
ըլլային որ այս էջերուն մէջ ոչ մէկ տող չէ հրա-  
տարակուած մեր ազգային վերակենդանացման  
համար կոխի անհրաժեշտութեան զաղափա-  
րին դէմ . քննադատութիւնը կ'ուղղուէր հոս՝  
այն ծրագրին դէմ որու համեմատ կուրը վա-  
րուեցաւ . զինուորին զիւցազնութեանը ներ-  
չընչած հիացումը երբեք պէտք չէ որ արգիլէ  
հեռատես ու անաչառ հայրենասէր մտածողը՝  
կարծիք յայտնել այն յատակադիրն վրայ որուն  
համեմատ զինուորը զոհուեցաւ . զինուորը եւ  
յատակադիրը իրարմէ տարբեր բաներ են , եւ  
մէկուն դէմ խօսիլը միւսին համար յարգանքը  
չի նուազեցնէր : Սերբը մին եղաւ այն Հայերէն  
որ մեր ցեղին պարճանքը կը կազմեն . բայց  
կարելի՞ է ըսել թէ իր ամբողջ քաջութիւնով  
չինուած կեանքը բերաւ մեր դատին այն օ-  
գուտը զոր պիտի բերէր եթէ այդ ուժը գոր-  
ծածուած ըլլար այն շրջանակին ու վայրկեա-  
նին մէջ ուր հարկաւոր էին՝ յաջողելու նա-  
ւար : Սերբը , ինչպէս բոլոր այն Հայերը որ  
«Դրօշակ»ի այդ թիւին մէջ կը պատկերանան , )  
այն խորխոր հոգիներն եղան որոնք ազատու-  
թեան զաղափարովը գինովցած , նետուեցան  
պայքարին մէջ , չուզելով ընդունիլ տրուած ա-  
մօթալի կացութիւնը , որոշելով զիւցազնի  
նման ապրելու մեռնիլ՝ գոնէ անհատապէս ,  
քանի որ ամբողջ ազգը ինքզինքը ստիպուած  
կը տեսնէր ստրուկի լուծին տակ քաշկրտու-  
ելու . անոնք իրենց հատընտիր հոգիի իրաւուն-  
քը ի գործ դրին , ու ոչ ոք կրնայ բառ մը ըսել

իրենց : Բայց կրնանք դատել ուղղութիւնը որուն համեմատ Գաղափարին տեսադէտնէրը զանոնք մղեցին : Առիւծներ էին բոլոր այն զինուորներն ու զօրապետները որոնք Նաբոլէոնի ետեւէն խոյսցան աշխարհս տիրապետելու . անոնց ամենուն ալ քաջութիւնը վէճէ զուրս է , բայց իրենց պետին ծրագիրը վէճի ենթակայ է , եւ չի կրնար ենթակայ չըլլալ : Մեծ ուղմագէտ , հանճարեղ կազմակերպիչ , վիթխարի ոստիկան , Նաբոլէոն անկատար զիւանագէտ մը եղաւ սակայն . ամէն մարդ այսօր կը սքանչանայ այդ մարդկային կորովի ապշեցնող յիշատակարան մը կազմող Հերոսին վրայ , բայց իր յատակագծին սխալները անկարելի է չտեսնել . եւ աններելի կ'ըլլար չտեսնել : Ինքն իսկ , Սէնթ-Էլէնի մէջ կապկպուած , կը խորհէր թէ ահագին սխալ մը գործած էր իր բոլոր ուժը նգրպտոսի , Սպանիոյ , Ռուսիոյ պատերազմներուն մէջ մաշեցընելով , մինչդեռ պէտք էր որ է'ն առաջ իր ամբողջ զօրութիւնը կեդրոնացուցած ըլլար Անգլիան ջնջելու , Անգլիան , իր մեծագոյն թշնամին , այն որ զինքը վերջ ի վերջոյ զգետնեց , Անգլիա'ն՝ զոր կրնար ջնջել՝ եթէ է'ն առաջ մտածած ըլլար ատոր յատկացնել իր բոլոր հանճարը եւ իր տրամադրութեան տակ գտնուող բոլոր զիւցապնութիւնները : Հոն ուր Նաբոլէոն մը կրցաւ սխալիլ , պէտք չէ զարմանալ որ մեր խեղճ ժողովրդին քաղաքական վարիչները , հակառակ իրենց բոլոր ազնիւ առաջադրութիւններուն , բռնուելիք ճամբան անձիշդ կերպով տեսած ըլլան : Այդ է որ ըսած եմ այս թերթին մէջ , եւ միշտ կը պահեմ իմ տեսնելու եղանակս : Միշտ կը մըտածեմ թէ այն հիմը զոր մեր գործ իջները 78ին հաստատեցին՝ մեր ազգին քաղաքական ապագան պատրաստելու համար , անձիշդ հիմ մըն էր . մեր ազգային քաղաքականութեան ծանրութեան կեդրոնը սխալ տեղ դրին . այդ սկզբնակին սխալին հետեւանքով է որ ապարդիւն ելան մինչեւ ցարդ ի գործ դրուած զիւցապնութիւնները , անպտուղ մնացին թափուած հեղեղանրման արիւնները . եւ միշտ կը կարծեմ թէ այն օրը մեր ազգը իր «ազգայնական» իտէալը պիտի իրականացնէ , երբ իր ճիգերը կեդրոնացնէ այն շրջանակին մէջ զոր պատմական օրէնքներ պատեհադոյնը կը կացուցանեն : Այս մասին համոզմունքներս (որոնք հիմնուած են ամբողջ ծրագրի մը վրայ զոր չեմ կրնար հրապարակաւ մանրամասնել) անփոփոխ են մնացած : Եւ չիմ զգլար գրած ըլլալուս ամէն ինչ որ գրեցի հայ յեղափոխութեան վրայ , մէկ բան մը

կայ միայն որ ինծի ցաւ կը պատճառէ , այն է թոնը որով Իօսաժ եմ այդ նիւթին վրայ . ու ասիկա յօժարակամ կը խոստովանիմ , մահով սրբագործուած այդ դէմքերու յանուամին առջեւ : Շատ խիստ , շատ կարծր ու շատ միակտուր եղած է դատաստանս , այնպիսի բանի մը համար որ : Ինչ թերութիւններ ալ որ պարունակէր , «սրբազան բանն» էր մեզի համար : «Թէոփսիէն» անգութ ցրտութեամբը դիտած եմ , դրսէն ու հեռուէն նկատող օտարականի մը ծայրայեղ անաչառութեամբը դատած եմ ինչ որ անհնար է միմիայն տրամաբանութիւնով բացատրել ու դատել : Պէտք եղածին չափ չեմ մտածած թէ , ինչքան սխալ եղած ըլլայ ուղեգիծը , այս վերջին կէս դարու դէպքերը , Խրիմեանէն ժիբրայրը , Վարժապետեանէն իլմիլեան , Կուկուեանէն Փարեան , Մուրատէն Արզուեան , այն ամբողջ յեղափոխութիւնը եղած են զոր մեր ժողովուրդը կարողացած է կասարել , եւ թէ ի'նչ ալ ըլլայ այսուհետեւ մեր ազգին բռնելիք ուղղութիւնը , Քուս-Քափուի , Սասունի , Պապ-Ալիի , Պանքայի օրերը Հայոց պատմութեան մէջ պիտի մնան իբրբեւ նուիրական օրեր , իբրեւ այն օրերը ուր հայկական ցեղը՝ դարաւոր անդամալուծութենէն յետոյ՝ վերակենդանացումի առաջին ու խելայեղ ցնցումներն ունեցաւ . եթէ ուղղութիւնը անձիշդ էր , այդ ուղղութիւնը ամբողջ ազգինն էր եղած . եւ յետոյ , այդ մեր ցեղին հնագոյն յիշատակներն ամբողջութեամբ պարունակող ընդարձակ հայրենիքի մը վերանորոգման դադարը ա'յնքան զիւցապնականօրէն յանդուգն էր ու գեղեցիկ ու բնականօրէն հրապուրիչ . . . Պէտք էր շատ աւելի յարգանքով խօսիլ այդ սխալին վրայ , եւ պէտք էր շատ աւելի ծանրանալ յեղափոխութեան գեղեցիկ կողմերուն , խանդի , անձնուիրութեան , վստմ միամտութեան , զիւցաղնական հաւատքի պոռթկումներուն , քան թերութիւններուն , տղեղութիւններուն , արատներուն վրայ : Պէտք է ըսեմ սակայն՝ որ իմ դատումներուս մէջ բացասական տարրին տիրապետելուն գլխաւոր պատճառներէն մէկը եղած են սուս-յեղափոխականները : Խաչազոզ-հերոսները , հայրենասէր-մակարոյժները , պոռոտախոս-զիւանագէտները , թերեւս աւելի բազմաթիւ , աւա'ղ քան «անկեղծներ»ը , եւ որոնց այլապէս կուրթիւնը քթիս տակ՝ չորս կողմս տարածուած ու խլրտուն , ուշադրութեանս մեծագոյն մասը գրաւեց ու թոյլ չտուաւ որ պէտք եղածին չափ

տեսնէի հեռուն մութին մէջ գալարուող սակաւաթիւ , անանուն ու իրական հերոսները Հիմա այս բոլորը կը զրուցեմ , — վստահ ըլլալով որ ոչ ոք պիտի մտածէ թէ ասոնք այս կամ այն խումբին համար կ'ըսեմ , — այս բոլորը կը զրուցեմ , անմահ մեռելներուն նայւածքին տակ , խղճի պարտք մը կատարելու համար : Ու նորէն՝ սա գոհունակութիւնը ունիմ որ՝ այս վերապահումով հանդերձ՝ ես շատ անկեղծ եղած եմ , շատ աւելի անկեղծ քան յեղափոխութիւնը պաշտպանելու պատրուակով գրամ վաստկող խել մը հայրենասէր-թուոխաթղերասան-գործիչներ . եւ այդ բանին զիս գըլխաւորապէս մղողը եղած է ջնջուելու վտանգէն մեր ժողովուրդը ետ կեցնելու միակ ու մտալիկոյ ցանկութիւնը : Ուրիշ գոհունակութիւն մըն ալ զոր կը զգամ , այն համոզումէն կը բղիթի թէ իմ քննադատութիւնս , հակառակ իր ձեւի թերութիւններուն , ոչ միայն վնասակար չեղաւ , այլ օգուտ յառաջ բերաւ . հայ յեղափոխական շարժումին մէջ փոփոխութիւն մը սկսած է մտնել երկու տարիէ ի վեր , եւ այդ փոփոխութեան ծնունդիչներուն մէջ «Անահիտ»ը . ես վստահ եմ , իր բաժինը ունի :

Արդէն այս բանին համար զիս մեղադրող յեղափոխականները անիրաւ են , ոչ միայն որովհետեւ մտածմանս խորքին ճշդութիւնը չեն ըմբռնած , այլ եւ որովհետեւ չեն նկատեր որ իրենք իսկ իրենց այդ քննադատած ընթացքը ունեցած են՝ աւելի մեղապարտ ձեւով մը . իրենցմէ Հնչակեան եզողը Դաշնակցականը քարկոծած է անխնայ , եւ փոխադարձաբար : «Անահիտ»ին մէջ երբեք այնքան կծու բացատրութիւններ չեն երեւցած ընդհանուր հայ յեղափոխական վարչութեան դէմ որքան Նազարեկի «Հնչակ»ին մէջ Դաշնակցութեան համար , եւ «Դրօշակ» ին մէջ՝ Հնչակեաններու համար : Եւ այսօր իսկ Արփարեանի «Մարտ»ը Դաշնակցականները ուս կառավարութեան վարձկանները կը նկատէ , եւ «Դրօշակ»ը Արփարեանը կը հռչակէ Սովետանին պաշտօնեան ու վեր . Հնչակեանները գողեր ու խաբեբաներ :

Նոյն իսկ այս տասնամեակի թիւը , հակառակ զգալի ջանքին որ հոն կը տեսնուի կուսակցամոլութեան գերծ մնալու քանի մը բիծեր պահած է այդ ախտէն : Հայ յեղափոխութեան նախակարապետներուն մէջ չէ յիշուած հոն ժիրայրը , այդ անսահման , այդ հոմերական տիպարը , — որովհետեւ Հնչակեաններու հետ գործակցած է ան , թէպէտ Հայ մը եղած է ամէն բանէ առաջ , եւ երբե՛ք կուսակցամոլ մը : Դարձեալ յեղափոխութեան մեծ դէպքերուն մէջ մոռցուած է հոն յիշուիլ Պապ-Ալիի ցոյցը , որ Զէյթունի զիւցազներգութեան հետ , ամենէն ուշագրաւ գրուազն է մեր պատմութեան այդ փուլին , որովհետեւ Պապ-Ալիի ցոյցը տասնուհինգ օր Պոլսոյ եւ Տաճկաստանի առեւտրական կեանքը կասեցնող , Եւրոպան լրջօրէն վրդովող , բարենորոգմանց ծրարագիրը Սովետանին ստորագրել տուող ու հայ տարրին օսմանեան պետութեան մէջ ունեցած կարեւորութիւնը զգացնող դէպքը եղաւ :

Մաղթելի է որ իրար պզտիկցնելու , իրար մրտաելու , իրարու հետ գրգռութեւն , հանրային ուժը ինք իր մէջ մաշեցնելու այս ծանր թերութիւնը զոր ամենքս , — կուսակցութիւն ու անհատ , ամենքս — ունինք , եւ որ պապենական ախտի մը պէս արիւններնուս մէջ մտած է , կարենայինք հետզհետէ տկարացնել ու ջնջել : Ատոր համար պէտք է որ աւելի յաճախ խօրհինք , ամենքս ալ , անոնց որ մեզի համար մեռան . . . անոնց դէմքը , մահուան մէջէն անհունցած , պէտք է որ մեզ յանդիմանէ շեշտով մը որուն առջեւ մեր բոլոր փոքրոգութիւնները պիտի սմբին . ու պէտք է որ սկսինք վարժուիլ մեր կուսակցութեան ու անձի սէրերէն վեր՝ ունենալ ընդհանուր Դաղափարի մը մոլեռանդ պաշտումը , Դաղափարի մը որ անհպելի ու սրբազան ըլլայ ամենո՛ւն , ամէ՛ն ատեն , ամէ՛ն պարագայի մէջ , եւ որուն առջեւ ամէ՛ն կուսակցական կամ անհատական կռիւներ լռեն ու չքանան : Ատով միայն պիտի կարենանք փրկել մեր ժողովուրդը կորուստէն :

Ա . ԶՕՊԱՆԱՆ



### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ



Բարեգործական Ընկերութեան երեկոյթը

Բարիզի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը երեկոյթ մը տուաւ մարտ 23ի գիշերը Էնթենիէօր Սիվիլի սրահին մէջ: Ընկերութեան նորընտիր զիւանը, որուն պատուոյ նախագահն է Բարիզի Հայոց հովիւ Տր. Վոսմազաուհ քահանան եւ ասենապետը՝ Պ. Բայաեան, զիմելով խումբ մը բարիզաբնակ Հայերու եւ հայասէր ֆրանսացիներու, անոնցմէ կազմած էր կարգադիր մասնախումբ մը, որ, իրեն ատենապետ ունենալով Տիգրան խան Քէլէկեան, ատենապիր՝ Պ. Արշակ Չօպանեան, եւ զանձապահ՝ Պ. Խ. Ներսէսեան, երեկոյթն ու պարտանդէսը կազմակերպեց՝ աջակցութեամբ զիւանի անդամներուն:

Պ. Տընիս Քոչէն հանրածանօթ հայասէր երեսփոխանը իր հովանաւորութիւնը շնորհած էր երեկոյթին, որուն անձամբ ներկայ գտնուեցաւ:

Բրոկրամը ճոխ էր: Պ. Մունէ-Սիւլի, Օտէնի արուեստագիտուհիներէն օրիորդ Վալանթին Բաժի հետ, արտասանեց՝ այնպէս ինչպէս ինք միայն կարող է՝ Ալֆրէտ տը Միւսէի շնորհամբերի գիշերը: Տիկին Սըկօն Վեպէր, Գոմետի-Ֆրանսեզէն, արտասանեց Վիքթոր Հիւկօի «Իմ»ը եւ Չօպանեանի «Օրօր»ը: Օր. Բաժ արտասանեց Հիւկօի Սառալա Պէնեթօզը: Պ. Ռամօ, Օտէնէն, արտասանեց Չօպանեանի «Կոյրերը», Պ. Լաֆլէօրանս, Օրբրայի սրնգահարներէն մին, նուագեց Սետէս Մոնտէնի «Սիւիթ»ը: Պուսսի տ'Անկլաս պատմուհին երգեց Լէօն Տէլոլի «Վալսը», Օր. Վերիք՝ Կապրիէլ Ֆորէի «Էթ Ռօղ տ'Իօրահանը» եւ Բօլ Վիտալի «Արիէթը», Օր. Տըբուրվալ՝ Մանէի Սիտէն կտոր մը եւ Պէմպէրկի Շան Էնտուն եւ Օր. Ժ. Լիւսիոյ Պուֆ Բարիզիէն թատրոնէն, Լըքօքի «Լըքէօր էլամէն»ի պոլերօն, Պ. Հեմրի, Ամպրիկի-Քոմիքէն, մէկ քանի մոնտլոկներ արտասանեց, եւ երիտասարդ ու տաղանդաւոր շութակահար մը, Պ. Էտմոն Կերա, նուագեց Կապրիէլ Ֆորէի «Պերսէօր»ը եւ Վիեննեզի «Էթ Ռիւս»ը:

Բրոկրամին կը մասնակցէին երեք հայ արուեստագէտներ, Պ. Պ. Էլմաս, որ գաշնակի վրայ շատ ճարտարօրէն ածեց Շոքէի «Էմբրօմբթիւ»ն եւ իր «Արմենիէն»ը ու «Պերսէօր»ը, Պ. Ամիրեան, որ իր զգայուն ձայնովը երգեց

Չուհաճեանի Հերիք որդեակք եւ Գազաչէնքոյի Արի իմ սոխակը, եւ Պ. Գրիգոր Կիւլպէնկի (դերասանական արուեստի երիտասարդ ու տաղանդաւոր ուսանող մը, մեծ ապագայի մը սանձանուած) որ Պէշիկթաշլեանի Կոյսին Քնարին ֆրանսերէն թարգմանութիւնը արտասանեց շատ լայն ու տաք զգացումով մը եւ գրեթէ անստգիւտ ֆրանսական առողանութեամբ մը: Պ. Կիւլպէնկի, որ յայտնութիւն մը եղաւ զինքը չճանչցողներուն համար, նպատակ ունի Բարիզի բեմի վրայ օր մը իսողալ ֆրանսերէն լեղուով, —ինչ որ մինչեւ ցարդ մէկ օտարական մը միայն, տը Մաքս Ռումանացին, յաջողած է ընել: Մենք վստահ ենք որ Կիւլպէնկի, օժտուած բնական հոյակապ ձրքերով եւ համեստ ու աշխատասէր նկարագրով մը, պիտի հասնի իր նպատակին: Մունէ-Սիւլի եւ Տիկին Սըկոն Վեպեր, իմանալով անոր արտասանելը, զարմանք ու հիացում յայտնեցին տեսնելով օտարական մը որ՝ դեռ սարիէ մը ի վեր միայն Բարիզ եկած՝ այդքան լաւ կ'արտասանէ ֆրանսերէնը եւ տասնընը տարեկան տղայ մը որ այնքան խորունկ զգայնութեամբ մը կ'արտայայտէ բանաստեղծութեան մը հոգին: Երկուքն ալ խոստացան իր կատարելագործումին աջակցիլ իրենց բարեկամական խորհուրդներովը՝ մինչեւ որ բեմ ելլէ:

Երեկոյթին յաջորդեց պարահանդէս մը, որ տեւեց մինչեւ առաւօտեան ժամը 5ը, մեծ ոգեւորութեամբ:

Ներկայ էին 300էն աւելի Հայեր եւ Ֆրանսացիներ, որոնք շատ գոհ մեկնեցան Երեկոյթէն:

Սրահը շատ շքեղ կերպով զարդարուած էր տունկերով եւ արեւելեան գորգերով, զոր Պ. Պ. Քէլէկեան եւ Ճիվանիքեան հաճոյակատարօրէն փոխ տուած էին:

Երեկոյթը զուտ հասոյթ թողած է 2000 ֆրանքի մօտ գումար մը:

—Իւրեքեան.— «Ժուռնալ տէ արթիսթ»ի մէջ կը կարդանք թէ Բարիզի Աքատեմի ժիւլիանի նկարչական վերջին մրցման մէջ, հայ ուսանող մը, Պ. Սերոբէ Իւրեքեան, առաջին մրցանակ ընդունած է: Հաճոյքով կ'իմանանք թէ իր վարպետը, Պ. Ժան Բօլ Լորանս, ջերմապէս կը գնահատէ եղեր այդ պարոնին ձրքերն ու աշխատասիրութիւնը: Առիթ ունեցանք տեսնելու Պ. Իւրեքեանի աշխատութիւններէն մէկ քանին, եւ համոզուած ենք որ Պ. Իւրեք-

ճեան պիտի կարենայ արուեստագէտ մը ըլլալ եթէ գտնէ այն աջակցութիւնը որուն արժանի է եւ միջոց ունենայ իր ուսումնասիրութիւնները կանոնաորակէս շարունակելու :

— Անաթոլ Պրանս եւ Եգիպտոսի Հայերը — Անաթոլ Պրանս , որ վերջերս Եգիպտոս ճամբորդեց , շատ սիրուն ընդունելութիւն մը գտած է այնտեղի Հայերուն կողմէ , որոնք իրենց երախտագիտութիւնը փութացած են յայտնել Քրանսացի վարպետին՝ այն աջակցութեան համար զոր նուիրեց մեր դասին : Գահիրէի Հայերը նուիրած են արծաթ դրիչ մը եւ Աղեքսանդրիոյ Հայերը՝ Շապանեանի մէկ ծովանկարը : Անաթոլ Պրանս , խորապէս զգածուած իր շնորհակալութիւնը յայտնած է այս համակրական ցոյցերուն համար :

— Էտկար Շահին . — Լոնտոնի այս սարուան նկարչական ցուցահանդէսին մէջ , Շահինի գործերը շատ մեծ յաջողութիւն մը գտած են : Անգլիական թերթերը , բաղդատելով Շահինի բուանթ-սէշները Քրանսացի մեծագոյն փորագրանկարիչին՝ Էլլէօի գործերուն հետ , դիտել կուտան թէ Էլլէօ արդէն յոգնած է եւ սպառած , եւ ուրիշ բան չ'ըներ այլևս բայց եթէ ինքզինքը կրկնել , մինչդեռ Շահին իր էջերուն մէջ ստեղծագործութեան , դիտողութեան , վերլուծման հզօր ու մշտանորոգ յատկութիւններ ցոյց կուտայ :

— Վահրամ Սվաճեան . — Ուրախութեամբ իմացանք որ մեր Սվաճեան բարեկամը մօտերս Բարիզ պիտի դառնայ՝ նուազահանդէս մը տալու : Նիւ-Նորթի մէջ , ուր կը գտնուէր մէկ քանի ամիսէ ի վեր , Սվաճեան գտած է շատ սիրալիր ու շատ փաղաքշական ընդունելութիւն մը ամերիկեան բարձր դասի երաժշտասէրներէն , Մասնակցած է մէկ քանի ամերիկեան մեծ նուագահանդէսներու , հրաւիրուած է նուագել բազմաթիւ սալոններու մէջ , եւ ամենուրեք գտած է փայլուն յաջողութիւն մը : Իր ամերիկացի հիացողները յառաջիկայ ձմեռնային եղանակին համար այժմէն իսկ կազմակերպած են շարք մը նուագահանդէսներ Միացեալ Նահանգաց զլխաւոր քաղաքներուն մէջ , ս ր Սվաճեան պիտի ածէ մեծ վարպետներու կտորներ եւ իր գործերը :

— «Հայկական Միութիւնը» . — Բարիզաբընակ Հայերու խումբ մը հիմնեց ընկերութիւն մը , «Հայկական Միութիւն» անունով : Այս

ընկերութիւնը Բարիզի Հայութիւնը Պրանսայի մէջ պաշտօնապէս ներկայացնող մարմին մը պիտի չըլլայ , այլ պիտի ունենայ հայ ժողովրդին բարոյական ու նիւթական շահերուն պաշտպանմանը նպատակու ընդհանուր նպատակը , եւ իրեն անդամ պիտի կրնան ըլլալ ոչ միայն Բարիզի Հայերը այլ աշխարհիս ամէն կողմը գտնուող այն բոլոր Հայերը որ այս նպատակին կը համակրին :

Այդ նախաձեռնութիւնն ունեցող Հայերու խումբը , որ իր մէջ կը պարունակէ Բարիզի հայ գաղութին ամէն կարգի Հայերէն ներկայացուցիչներ , ընտրեց արդէն առժամեայ դիւան մը , որ պիտի ջանայ այս ընկերութեան համար արտօնութիւն ստանալ Քրանսական կառավարութենէն եւ անոր հիմնարկութեան ու կազմակերպութեան նախնական բոլոր աշխատութիւնները պիտի կատարէ : Այդ դիւանը կը կազմուի հետեւեալ անձերէն , պ. պ. Իսքէնտէր , ատենապետ , Մ. Թամազեան , նախկին տնօրէն թիֆլիսի պանքային , դեր-ատենապետ , Ա. Փրետոնեան , Թիֆլիսի ծանօթ վաճառականներէն , գանձապահ , Ա. Չօլանեան , ատենադպիր , Թընկըր , սեղանաւոր , կամպարեան , նախկին ուսուցիչ Մոսկուայի Համալսարանին , Մինաս Չերազ , Փեհլիվանեան , ակնավաճառ , եւ Քելեկեան խան , հնութեանց վաճառական :

Այս «Հայկական Միութիւնը» , որու մասին մանրամասնօրէն պիտի խօսինք մեր յառաջիկայ թուով , ոչ մէկ առնչութիւն չունի հայ բանասարկեալներու ի նպաստ հանգանակութիւն բացող նոյնանուն ընկերութեան հետ :



# ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

## ՔԻՒՐՏԸ

Շար .

Սորամանկ եւ հեռատես Թուրքը խիստ լաւ եւ շատ շուտ ըմբռնած է Քրդի գիտաւորութիւնն ու հայեացքը եւ իր դարաւոր նենգ քաղաքականութեամբը աշխատած է միշտ մեծամեծ պաշտօններու խոստամբք եւ շլացուցիչ դրամով գերել անոր սիրտը եւ համիւլամութեան ցանցին մէջ քաշել : Բայց Քիւրտը գրեթէ միշտ անյողգողղ մնացած է իր համոզմունքին մէջ եւ հաւատարիմ որդեգիր ազատութեան : Համիտական շքեղ եւ լայնատարած դրօշակն անգամ չէ յաջողած Քիւրտն ամբողջապէս իր տակ առնուլ : Շատ մ'Աշիրաթներ ընաւ չին ճանչցած զայն , մէկ քանիսը անուանական հպատակութիւն մը միայն են ցոյց տուած , իսկ անոնք՝ որոնց մասին կը կարծուի թէ երդուեալ հպատակներ են դարձած , ասոնք ալ շարունակ կը հալածուին իրենց հարեւան Աշիրաթներէն եւ նոյն իսկ գերդաստանի անդամներէն : 94-95ի ձմրան՝ Հայրենիքն էի գընացեր (այն ժամանակուայ տխուր յիշատակարանս քիչ յետոյ պիտի բանամ) : Մեր կողմի Աշիրաթներն, (ի միջի որոնց Ալըկան Աշիրաթն ալ) Համիտական տօմարին մէջ էին անցած, եւ մեր աղան միլազիմութեան աստիճանին էր հասած : Այդ պաշտօնական մարմինն՝ իմանալով վերադարձս՝ ինձ այցելութեան եկաւ : Ես զինքը գտայ միեւնոյն քրդական տարազով որպէս առաջ : Զինուորական հագուստը շատ նեղ էր եկած անոր ազատ եւ լայն հողուն : Կօշիկներն ու վերարկուն տուած էր Հայու մը գործածելու , մնացեալ կտորներն ալ կերպով մը ոչնչացուցեր էր : Ինձ բարի գալուստ եւ իր ուրախութիւնը յայտնելէ յետոյ , խորհուլով որ գուցէ մոռցած կը լինէի քրդերէն լեզուն, հօրեղբորս հարցուց թէ արդեօք գիտէի՞ թուրքերէն «արգուհալ» — խնդրազիր — գրել : Եւ երբ դրական պատասխան ստացաւ, յառաջ տարաւ «Աստուածդ կը սիրես, ըսես իրեն որ ինձ խնդրազիր մը գրէ, տամ այն անիծած շներուն, տեսնեմ այս ի՞նչ խաղ է. ասըի մ'է որ զիս միլազիմ են ըրած , չգիտեմ էշերո՞ւ միլազիմն

եմ, ի՞նչ եմ, որ դեռ ամսական մը չեն տըւած ինձ » Իսկ Արամանիի հովիտի բնակիչները դեռ այսօր հրացանով կը խօսին իրենց գերդաստանի այն անդամներուն հետ որոնք Պոլիս երթալով եւ Համիտիչէ դառնալով դաւաճան հանդիսացան իրենց ազատութեան : Կը պատմուէր որ այս Աշիրաթներու մէջ շատ մը ազնուատոհմ արիւններ տարիներով մերժած են իրենց ամուսիններու առաւգաստը՝ Համիտական դրօշակին փակ մտնելուն համար :

Թէ մեր գործիչները ինչքան խորագիտութեամբ եւ խոհեմութեամբ են վարուած Քիւրտի այս հակա-թրքական ցոյցերու հետ կամ ո՛րքան են օգտուած անոնցմէ, այս մասին երկար կանգ առնելն աւելորդ է , որովհետեւ արդիւնքն ինքնին ցոյց կուտայ արդէն : Դառնամ բուն ցանկութեանս , որ այս հարցերէն դուրս , երկու զբացիներու մէկ քանի բարեկամական յարաբերութիւններ ուրուագծել էր միայն եւ ուրիշ բաւական հեռացած եմ ակամայ :

Սկսելէ առաջ՝ խոստովանիմ որ յառաջ բերելիք օրինակներս մասնաւոր , գրեթէ անհատական պիտի լինին : Սակայն այնու հանդերձ մեծ յոյս ունիմ թէ խոհական անձանց համար, որոնց սկզբունքն է «ընդհանուր բարկացնել մասնաւորներէն» , տալիք օրինակներս պիտի ունենան իրենց առանձին նշանակութիւնն ու կարեւորութիւնը :

Մինչեւ «Համիտիչէ»ներու տխուր շրջանը, նենգ դաւադրութեան մը հուժկու ուժէն զլրդուած ու տգիտութեան թեթեւութեամբ յառաջացած երբեմնակի սաստիկ այլ վաղանցուկ փոթորիկներէն դուրս , որոնցմէ իսկապէս միշտ հարստահարուած է անպաշտպան հայ գիւղացին, եւ հակառակ կարգ մը դատարկապորտ քիւրտ սրիկաներու յաճախակի եւ յարատեւ չարագործութեանց , Հայու եւ Քրդի մէջ կը տիրէր բարեկամութեան ներքին սերտ կապ մը , կարելի ըսել վստահութեան եւ հաւատարմութեան օղակներէ կազմուած ու համերաշխութեամբ եղերուած : Եսական հպարտութիւն չունէր Քիւրտը , կը ճանչնար Հայու արժանիքը , կը գնահատէր Հայու հանձարն ու շատ անգամ իր ընտանեկան գործերու համար դրացի Հայու խորհուրդը կը հարցնէր : Քանի քանի՞ անգամ մեր աղան իր ընտանեկան կրնճոտ խնդիրներու համար , հօրեղբորս խորհուրդն ընդունած եւ այնպէս վարուած է : Քիւր-

տը հայերէն լեզուով կ'ուղարկէր իր զգացումներն ու խորհուրդներն իր պանդխտին: Քիւրտ Աշիրաթը իր ոսոխ ցեղակցի եւ կամ բռնակալ տարրի գէմ գլուխվերուցած ժամանակ չէր կատարածեր իր դրացի Հայու ումն ընկերացիներէն: Մեր հայրենիքի մէջ շատ մը ծերեր գիտեմ, որոնք Պէտրիւան պէկի ապստամբութեան մէջն են գտնուած: Հայու տաւարն ու ոչխարը քիւրտ նախորդին ու հովուին, տան ու դոյքի պահպանութիւնը՝ քիւրտ պահապանին էր յանձնուած: Այդ ծառաները այնքան հաւատարմութեամբ եւ աշխրջութեամբ կը կատարէին իրենց պաշտօնները, որքան թերեւս տէրը չէր հողար: Քիչ չէր պատահեր, որ հայ ընտանիք մը բարեկամական այցելութեան կամ ուխտագնացութեան մը համար, իր գոյքն ու գործերը քիւրտ ծառաներուն յանձնէր, որոնք այնպիսի պարտաճանաչութեամբ եւ եռանդով կը կատարէին, որպէս թէ իրենց սեպհակահալութիւնը ըլլար: Մեր հայրենիքի մէջ գիտեմ հարուստ հայ ընտանիք մը, որու ղեկավարը մեռաւ, թողլով մէկ քանի անչափահաս զաւակներ: Անոր երկու քիւրտ ծառաները չհեռացան օճախէն, այլ աւելի եւս եռանդուն կերպով կատարեցին տան գործերը մինչեւ իրենց զեռատի տէրերը կարող եղան կառավարել ու իրենք կրկին մնացին նախկին ծառայութեան մէջ: Քիւրտ աղան ալ նուազ չէր մտածեր իր պաշտպանեալ Հայու բարօրութիւնը (\*): Չեմ կրնար չյիշել թէ ինչպէս անգամ մը մեր կողմի վրանաբնակ աղան՝ առած իր եւ մէկ քանի ալ վարձած ջորիներ, եկաւ մեր տունը գաղթավայրէն ծննդավայրի վրայ փոխադրելու, թէ ինչպէս բաւականաչափ ոչխարներ եւ տաւարներ նուիրելով մեզ, մեր գեղջկական հարստութեան հիւքը դրաւ: Մենք մեր գիւղի մէջ մինակ էինք, մեր գրացիները դեռ եւս չէին վերահաստատուած եւ շրջապատուած էինք քրդաբնակ գիւղերով: Ենորհիւ այդ աղայի հովանուն, բացի այն որ ամառն ի բուն տան դուռը բաց թողած տանիքի վրայ կը նընջէինք բացօթեայ եւ աներկիւղ, էթէ մեր սեպհական ցանքերու համար չլինէր, պատրաստ էինք նաեւ անասուններն առանց պահնորդի արձակել: Աղան մեր բացակայութեանը մեր

(\* ) Պ. Գարեգին Սաժակնեանը քիւրտ աղայի պաշտպանութեան մասին կը գրէ. «Եւ Քուրդը բարեխղճօրէն յաճախ յարգում էր իր նմանի սեփականութեան իրաւունքը» (Մուրճ, էջ 442):

ճառաստաններէն անգամ աւելի կրնար օգտուել քան թէ մեր ներկայութենէն. ինչո՞ւ մեզ այնքան կը հողար, չեմ կրնար գուշակել: Երբեմն երկու Աշիրաթի մէջ Հայու կորսուած կամ գողցուած ոչխարի մը համար ահագին կռիւ կը բացուէր, որ կը վերջանար շատ անգամ արիւնհեղութեամբ եւ քառապատիկ հատուցմամբ: Երբեմ կարեւոր անցք մը — Անգամ մը Ո. հայաբնակ եւ Տ. քրդաբնակ գիւղերու մէջ թեթեւ վէճ մը ծագեցաւ, որ յետոյ տեղի տուաւ դինակուուի: Ինչպէս մեր հայրենիքի իւրաքանչիւր Հայն՝ առաւելագէս Ո-ցին՝ վարժ ըլլալով զէնքի գործածութեան, յաղթեց թշնամուն անոնցմէ երկու կտրիճ սպաննելով: Ընդհանուր խառնակութեան միջոցին, թշնամին յափշտակած էր Ո. ցու հօտէն մէկ երկու հարիւր ոչխար: Պէտարու Եէյխու կռահելով մահմետականի սպանում, ջանաց գրգռել քիւրտ ամբոխը Ո. ցու դէմ: Ո. ցին կը վայելէր Ապարանից Ս. Սաչ վանքի մէջ բնակող Տ. աղայի պաշտպանութիւնը, որ մինչեւ այդ ժամանակ չէր գործում մը թողուց Հայուն իր ուժովն ապահովցնել զինք: Եէյխու միջամտութեան վրայ, աղան ալ մէջ մտաւ: Իր ծառաներէն երկուքը ուղարկեց Ո. գիւղը պաշտպանելու, մէկը ուղարկեց Եէյխու մօտ հրամայելով իր ձայնը կտրել եւ երկու հոգի ալ ուղարկեց քիւրտ զիւղապետին՝ պահանջելով անմիջապէս ուղարկել երկու հաղար հատ ոչխար, Հայերու կորուստը դարմանելու համար: Պահանջքն ստացաւ, մէկի փոխարէն երկուս վերադարձուց Հայերուն, իսկ մնացեալն ալ ինքն անուշ ըրաւ քանի մ'օրուայ մէջ: Եւ այս ամէն պաշտպանութեանց համար Հայը կուտար քուրդ աղային, գրեթէ, իր յարգանքը միայն Տարուայ երկու «այիտ»ին (պայրամ) մէկ քանի գաթայի հետ զոյգ մը գուլպայ տանիլ անոր «այտ»ը շնորհաւորելու եւ փոխարէնը ոչխար մը կամ «չուս քեղախի» մը (տեսակ մը թիկնոց) «փառու» — պարգև — առած վերադառնալ, ա՛յ քան:

Հապա մեր հարեւան զիւղացիներու «ճիրանիթի» — դրացիական — աջակցութիւնները մեր աշխատութեանց մէջ, դեռ այսօր զիս անկեղծ գոհունակութեան մը մէջ կը պահեն. մեր արտերու մեծ մասը անոնց ձեռքով կը ցանուէր ու կը հնձուէր: Հունձքի ժամանակ բաւական էր որ հօրեղբայրս լուր ուղարկէր զիւղապետի մը եւ յայտնէր թէ կը ցանկար որ ան հետեւեալ օրը իւրաքանչիւր ընտանի-

քէն հնձաւոր մը ուղարկէր այս ինչ արար հնձելու : Առաւօտը կը տեսնէնք հնձաւորներու բաղմուտիւն մը սկսած արդէն իր գործը որոշեալ արտին մէջ : Մենք անոնց այս բարիքը կը հատուցանէինք տեղական առատ ճաշով մը, որ սովորաբար «Թանխիւս» էր Այսքանը բաւական չէ, մեր կրօնական նշանաւոր տօներուն ալ մեզ չէր մոռնար մեր դրացին : Իր համեստ «տիրարի»ով (ընծայ) կուգար աօնը շնորհաւորելու եւ ուրախակցելու մեզ հետ : Բնաւ չպիտի մոռնամ մէկ տարուայ մեր Տեառնընդառաջը : Այդ օր երբ սրբազան արարողութեան աւանդական զէզը պատրաստեր էինք, երեկոյեան զէմ հարեւաններէն կարեւոր անհատներ մէկ-մէկ շալակ ցախ կոնակներն առած, բերին աւելցուցին մեր զէզին վրայ եւ այնքան բարձրացուցին, որ գերազանցեց մեր գաւառի ամենաբազմամարդ հայ գիւղինը : Եւ երբ հօրեզբայրս եկեղեցիէն բերած մոմով վառեց զէզը, առոնք մէկ մէկ վառած ցուպ (\*) առած, բոլորեցան զէզի շուրջը եւ սկսեցին տեղական «կէօվանտ»ը — պարը : Իեւ կը յիշեմ թէ ինչպէս առոնցմէ մէկ քանիսը հող կը տանէին որ զէզի բոցը շնուաղի եւ մնացեալները եռանդուն կերպով «պօլ» (պասկըն) կուտային շրջակայ Հայոց «կէօվանտ»ներուն, որոնք լըսելի կ'ըլլային : Այս ուրախութեան մէջ մենք

էինք օտար, կարծես այդ տօնը մերը չըլլար, այլ անոնց մեզ կը քաշէին կը քաշկոտէին եւ խառնելով իրենց մէջ կը ջանային կատարեալ ընել մեր ուրախութիւնը : Մինչեւ առաւօտ չթողին մեզմանար ո՛չ բոցը եւ ո՛չ ալ «կէօվանտ»ը :

Քիւրտը կրօնամուլ ալ չէ (2), նամանաւանդ Աշիրաթը, որուն այնչափ նշանակութիւն ունէին «չէյիս» եւ «մոլլա» բառերը, որքան այսօր ունի «տիրացու» բառը մեր զարգացեալ երիտասարդութեան : Բաց ի այն՝ որ պարզամիտ լեռնականը պատիւ կը համարէր իրեն «խաչ» բռնելով (եկեղեցւոյ մէջ) ամուսնացողներու գլխի վրայ, «կնքահայր» ըլլալ Հայուն, եւ ինչ որ նկատուած է յաճախ մեր ուսումնասէրներէն, մեր շատ մը ուխտատեղիները կը նոյնանային : Երեւի մեր պապերն աւելի մտերիմ են եղած միմեանց, որ մեր Ս. Հարց նշխարները երկու ազգէն ալ հաւասարապէս յարգուած են (3) :

ԼՕՇՏԱԿ

(Շարունակելի)

(\*) Տեառնընդառաջի համար, մեր կողմի Հայերը վաղօրօք գաւազանի հասաութեամբ փայտեր կը կտրեն ծառերէն, այնպէ՞ս թաց թաց կը ջախջախեն զայն, յետոյ կը չորցնեն եւ կը պահեն իբրեւ մոմ վառելու այդ օր. այդ փայտը «ցուպ» կը կոչուի :

(2) «Քուրդը, բնութեան ազատ որդին. գեռ վարակուած չէ կրօնական նախանձով» : Բաֆֆի, Կայծեր, ա. հատ էջ 268) :

(3) Քուրդերը յարգում էին իրանց ձեռքը ինկած սրբութիւնները (Հայոց) եւ չէին ոչընչացնում նրանց : Քուրդի համար քրիստոնէական տաճարի սրբութիւնը նոյն նշանակութիւն ունէր, որպէս իր շէյխի տուած թելիսմանը, որ նա կապում էր աջ թեւին թըշնամու զէնքերից անխոցելի մնալու համար (Բաֆֆի, Կայծեր) ա. հատ. էջ 309 :



Վրիդիկ — «Անահիտ», Գ. տարի թիւ 1, էջ 27, սիւնակ ա. տող 34 «Զգիտէի՞ք»ը կարդալ «Զգիտէինք» : Երկն էջ ք. սիւն. 2. Սրբաւանձաւանցի վկայութիւնը Մամբկան եւ Բագրբան ցեղերուն կը պատկանի : Երկն սիւն. վերջին տողի մէջ «այն» բառը կարդալ «Աւելիան» : էջ 28, սիւն. ա. տող, չափերտի մէջ, «աւվանտ» բառը կարդալ «աւվանտըն» : էջ 29, սիւն. ք. տող 40, «կուտայ» բառը կարդալ «կը փութայ» :

# ՆԻԹԵՐՈՒ ՑԱՆԿ

## ԱՆԱԼՎՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ	ԳԷՈՐԳ ԲԱՇԻՆ ԶԱՂԵԱՆՑ
Պ. Պենլեան ի Բարիզ . . . . .	Յովհաննէս Այվազովսկի . . . . . 160
Պատրիարքարանը . . . . .	<b>ԱՏՈՄ ԵՍ. ԲՃԱՆԵԱՆ</b>
Հայերը թուրք թատրոնին մէջ . . . . .	Մահերգ . . . . . 13
Հայկական խնդիրը Ֆրանսայի մէջ . . . . .	Մեռելոցի յաճախանք . . . . . 59
Մահմուտ փաշայի փախուստը . . . . .	Բարիզեան նոթեր . . . . . 69 , 110
«Լիկ տէ տրուա լում»ը եւ հայկական խնդիրը . . . . .	Յոգնութիւն . . . . . 104
Սուլթանին դատը . . . . . 41 , 72	<b>ՏՐ. ՏՐԴԱՏ ԵՍԱՅԵԱՆ</b>
«Անի» ընկերութիւնը . . . . . 43	Պատճառորականութիւնը բարոյականի մէջ . . . . . 257
Թրանսվալ եւ Անդլիա . . . . . 48 , 80 , 144	<b>ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ</b>
Հանգանակութիւն հայ բանտարկեալներուն համար . . . . .	Յունաստան եւ Հայաստան . . . . . 49 , 121
Աղբային քրոնիկ . . . . . 76 , 141 , 213 , 264	<b>ԶԱԻԷՆ</b>
«Չարդ» . . . . . 79	Յուշերգ . . . . . 154
Պ. Քաղաչէնքօ եւ հայ երաժշտութիւնը Բաւրիզի ծուցահանդէսին մէջ . . . . . 79	Էջերը . . . . . 155
Պատրիարքին հրաժարականը . . . . . 140	<b>Ա. ԻՍԱ. ՀԱԿԵԱՆՑ</b>
Հայկական երեկոյթ մը . . . . . 141	Իմ ուղին . . . . . 233
Պ. Չերազ եւ Հանոթօ . . . . . 143	<b>ԿԻՒՍԹԱՎ ԺԵՖՐՈՒԱ</b>
Քաղաքական կացութիւնը . . . . . 143	Հայերն ի Բարիզ . . . . . 176
Պատուոյ երեկոյթ մը . . . . . 143	<b>ԼՕՇՏԱԿ</b>
Մանուէլեան-Շահին երեկոյթը . . . . . 169	«Քիւրտիսթան» լրագիրը . . . . . 138
Կացութիւնը Հայաստանի մէջ . . . . . 192	Մեր զրացիները (Քիւրտը) . . . . . 187
Վոսվիլի ցերեկոյթը . . . . . 171	<b>ԽՈՍՐՈՎ</b>
Ռուսերու կարծիքը Չանչեանի մասին . . . . . 196	Մտքիս խառնարանէն . . . . . 109
Մխիթարի երկուհարիւրամեայ յորեկեանը . . . . . 219	<b>Զաքարիա Մարգար ԽՕՃԵՆՑ</b>
Հայ սրբերուն համար . . . . . 223	Վարդ եւ Սոխակ . . . . . 26 , 202 , 251
«Բրօ Արմենիա» . . . . . 240	
<b>Ա. Ր Ս Է Ն</b>	
Մեր զրացիները (Եզրիսին) . . . . . , 20 , 60	

<b>ԳԷՈՐԳ ՄԵԼԻԲԿԱՐԱԳԵՅԵԱՆ</b>	
Գերման քաղաքականութիւնը Տաճկաստանում եւ նորա նշանակութիւնը	7
Գրիգոր Զանշեան . . . . .	14
<b>ԺՈՐԺ ԿՈԼԻՍ</b>	
Ֆրանսայի Արեւելեան քաղաքականութիւնը . . . . .	133
<b>ՍՐԻԿ ԿՈՍՏՍԱՆԴ</b>	
Տաղ ծննդեան Քրիստոսի . . . . .	72
<b>ՌՈԺԷ ՄԱՐԲՍ</b>	
Էտկար Շահին . . . . .	111
<b>ԶԱՊԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ</b>	
Եաշմաքը . . . . .	11
<b>ՆԱՂԱՇ</b>	
Տաղ . . . . .	164
<b>Յ.ՇԱՀՆԱԶԱՐ</b>	
Նամակ ուղղուած Մանուէլեան-Շահին երեկոյթի նախագահին . . . . .	170
<b>ԱՐԱՄ ԶԱՐԸԳ</b>	
Դէօթէ . . . . .	16
Երգեր . . . . .	54
Ցաւի խաչին տակ . . . . .	112
<b>ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ</b>	
«Տիգրան Երկաթ»ը . . . . .	1
Էտկար Շահին . . . . .	25
ՅԱրդ յօդուածին պատմութիւնը . . . . .	33
Իմ բաժակաճառս . . . . .	39
Դրօշակեան դրութիւնը . . . . .	43
Պզտիկ հայ գեղջուկին պատահարը . . . . .	55
Պ. Իւրիյ Վեսելովսքիի յօրեղեանը . . . . .	71
Հայ էջեր . . . . .	72
Բաց նամակ Տր. Պելքին . . . . .	87
Բացատրութիւն մը . . . . .	94
Մեր ուսանողները . . . . .	97
Նպատակը . . . . .	129
Պատուոյ ատեան . . . . .	136
Մանուէլեան եւ Շահին . . . . .	145
Գրքեր եւ թերթեր . . . . .	177-220
Երեկոյթ մը ի պատիւ Լեւոն Բաշալեանի . . . . .	189
Գրիգոր Զանշեան . . . . .	193
Հայ ցեղին դերը պատմութեան մէջ . . . . .	225

Սուլթանին քսանուհինգամեայ յօրեղեանին առթիւ . . . . .	232
Հայկական խնդիրը Խաղաղութեան Համաժողովին մէջ . . . . .	235
Արգուեան եւ հայ մամուլը . . . . .	241
«Վարդ եւ Սոխակ»ի ազբերը . . . . .	249
<b>ՄՈՌԻՍ ՊԱՌԷՍ</b>	
Տիգրան Երկաթ»ի մասին . . . . .	118
<b>ՊՈՒՇԳԻՆ</b>	
Գիւտ . . . . .	31
<b>ՎԱՀԱՆ ՍՈՒՐԷՆԵԱՆՑ</b>	
Երկու Հոգի . . . . .	165
<b>ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ</b>	
Ծաղիկներու քունը (Հայդերֆ) . . . . .	4
Հոգեգէշ . . . . .	5
Եհովա . . . . .	68
Մութ տունը . . . . .	106
Աղջիկ մը . . . . .	208
<b>ՏՐ. ՎԱԼԴՄԱՐ ԲԵԼԿ</b>	
Տրապիզոնից Վան . . . . .	81, 113
<b>ԶԱՐԵՀ ՎԱՐՍՍՄԵԱՆ</b>	
Նոր հոգիներ . . . . .	161
<b>ՏԷՐՎԻՇ</b>	
Կոյրերը . . . . .	5
<b>ՎՍՀԱՆ ՏԻՐԱՆԵԱՆ</b>	
Իրիկունը . . . . .	76
Տունս . . . . .	110
Յիշատակը . . . . .	128
Խարոյկը . . . . .	230
<b>ՍՏԵՓԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ</b>	
Պատգամաւորի մը յուշատետրէն 36, 91, 119, 234	
<b>ԵՐՈՒԱՆԴՕՏԵԱՆ</b>	
Հաշտութիւնը . . . . .	73
Գործի մարդիկ (Վէպ) . . . . .	156, 198, 254
<b>ԱՆԱԹՈԼ ՖՐԱՆՍ</b>	
Որբերու համար . . . . .	173

# ԱԶԴԵՐ

## ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Բարոյական . Ուսումնական . Արուեստագիտական

Պիտի հրատարակուի 1901ի շրջանին մէջ , միեւնոյն ծրագրով եւ ուղղութեամբ :  
Տարեկան բաժանորդագրինն է 10 ֆրանք :

A la Rédaction de la revue «Hantess»  
12, VII/2 MECHITARISTEN GASSE , 4

VIENNE , AUTRICHE

# ՏԱՐԱԶ ԱՂԲԻՒՐ

Շարունակուում է 1908ի բաժանորդագրութիւնը «Աղբիւր-Տարազ»ի

«Աղբիւր» «Տարազ»ի բաժանորդագրութիւնը Յաւելուածով եւ պրեմիայով , 10 բուպլի է Ռուսաստանի համար ,  
18 բուպլի (50 ֆր.) արտասահմանի համար :

«Պարբիդի մօտա» , «Իլիւսարաիօն» , «Աւողջայնհակոն» , գեղանի փառակաղմ «Յրացոյց» ստանուում են «Աղ-  
բիւր» «Տարազ»ի միեւնոյն հասցեով ստացող բաժանորդները : Ապառիկ եւ ոչ էլ մաս մաս բաժանորդագրութիւն  
չէ ընդունուում : Հասցե : Rédaction du journal Taras, Tiflis, Caucase, Russie.

# ԳՈՒԹԱՆ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՆԱՅ

ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

«Փութան»ը կը հրատարակուի առայժմ ամիս անգամ  
մը : Բաժանորդագրութիւնն է՝ արտասահմանի համար՝ 12 ֆր.  
Տաճկաստանի՝ 10 ֆր. , Ռուսիոյ 6 բուպլի, Ամերիկայի՝ 3  
տողար , Տաճկաստանի ուսուցիչներու եւ ուսանողներու ,  
(հաստատական վկայագրերով)՝ 6 ֆրանք :

Մուտք ունի ամէն երկիր : Դիմել խմբագրութեան .

K. MÉDZADOURIAN

23 Rue de la Collégiale

PARIS

„ԱՆԱՀԻՏ“Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անանիսը կը հրատարակուի ամիսը անգամ մը :

Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ),  
1 տոլար (Ամերիկա), 5 րուպլի (Ռուսիա). վեցամսեայ՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիր-  
ներ), տոլար (Ամերիկա), 3 րուպլի Ռուսիա :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիլ :

Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօդուած եւ բաժանորդագիրն զրկել հետեւեալ հասցէին՝

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Պաքու . —	Պարոն Սարգիս Ծոցիկեան
Ռուսճուք . —	» Նշան Ս . Թորոսեան
Վառնա . —	» Յ. Ս. Փափագեան
Ֆիլիպէ . —	» Ա. Տեմիրճիպաչեան
Պուքրէշ . —	» Արիս Լազար
Դաւրէժ . —	» Տր. Կ. Փաշայեան
Նիւ-Շորք . —	» Կատարեան
Բրովիտէնս . —	» Նազարէթ Թաթէոսեան
Իսթ Ուոթըրթաուն . —	» Մանուկ Գալստեան
Ուսթըր . —	» Երուանդ Յակոբեան